

29-30(632-633)

14.11.2021

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն և գիտարար, իմանալ զբանս հանճարով

ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

Ի ՇԵՃՈՒԿՍ ԱՂՐԲԵՋԱՆԻ

Աղբբեջանի պաշտպանական գերատեսչությունը հայաստանյան ՊՆ-ին սպառնում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, եթե «կրկնվեն անօրինական այցերը աղբբեջանական տարածքներ»: Ի՞նչ կարելի է հասկանալ «անհրաժեշտ միջոցներ»-ի տակ, արդյո՞ք ռազմական ուժի ներգործություն կկիրառվի հայ ուժայինների և, մասնավորապես, Մախարաբի նկատմամբ, թե՞ պարզապես ռուս խաղաղապահների միջոցով հետայսու կկանխվեն նման մակարդակով այցերը:

Ինքնագլուխ ռազմական գործողություններ նախաձեռնելը, կարծեք, բացառվում է, որովհետև դա կհանգեցնի պատերազմի վերսկսման, ինչը կնշանակի նաև նոյեմբերին նյան համաձայնությունների տապալում: Թուրք-ազերական տանգենի համար նոր պատերազմը գուցե ձեռնառու է այն առումով, որ 44-օրյա պատերազմի արդյունքում մերձկասպյան թուրքական հանրապետությունը չստացավ առավելագույնը՝ Արցախի ամբողջությամբ, իսկ այն հատվածը, որն այսօր գտնվում է ազերական զինուժի վերահսկողության տակ, ընդամենը ժամանակավոր ստատուս-քվո է: Բայց անցած աշնանային պատերազմում Աղբբեջանը հսկայական ռազմական ռեսուրսներ է ծախսել և նոր էսկալացիայի համար բավարար ներուժ ներկա դրությամբ չունի: Հազիվ թե թուրք-վարձկանական աջակցությունները հիմա ցանկալի արդյունք տան, հատկապես՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի վերականգնված համապատկերին: Եվ թեպետ Թուրքիան հայտարարել է ևս մեկ տարով Աղբբեջանում իր ռազմական ներկայությունը երկարաձգելու մտադրության մասին, սակայն դա ազդեցիկ լինել չի կարող ազերական ակնկալիքների համար: Այս տեսակետից հարևան երկիրը մտահոգության պատճառներ, անշուշտ, ունի, և Բաքվից Երևանին սպառնալիքներ հղելը, թերևս, նույն այս համատեքստում կարելի է դիտարկել:

Մյուս կողմից, խաղաղապահ գործախմբի կողմից հայաստանյան բարձրաստիճան անձանց, տվյալ դեպքում՝ ռազմական գերատեսչության ղեկավարի այցելություններին խոչընդոտելը քիչ հավանական է: ՌԴ արտգործնախարարության վերջին հայտարարությունը, թե Ռուսաստանը ԼՂ-ն Աղբբեջանին փոխանցելու հանձնառություն չունի, հստակ ուղերձ է Բաքվին առ այն, որ առավել խաղաղապահ առաքելության տարածքում ինքն է պայմաններ թելադրողը: Դա գրավոր կամ բանավոր պայմանավորվածություններում կա, թե՛ ոչ, արդեն եական է:

Էականն Արցախը մշտապես Մայր Հայաստանի ուղեծրում պահելն է, որի մեջ ներառվում են թե՛ նրա անվտանգությունը և թե՛ համապարփակ զարգացումը: Իսկ այդ շրջանակում բոլոր մակարդակներով այցելություններն անհրաժեշտ ու պարտադիր են: Ի հեճուկս Աղբբեջանի:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՈՒՂԵՐԶ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

Նոյեմբերի 10-ը Գիտության միջազգային օրն է: Այդ կապակցությամբ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանը շնորհավորանքի ուղերձ է հղել, որում ասվում է.

«Սիրելի՛ գիտնականներ, գիտաշխատողներ: Շնորհավորում են գիտության միջազգային օրվա կապակցությամբ: Ժամանակակից աշխարհում պետությունների ու երկրների տեղն ու դերը որոշվում են գիտական մտքի մրցումակությամբ, առաջատար տեխնոլոգիաների ստեղծմամբ ու ներդրմամբ, և գիտությունն, ըստ էության, երկիրը զարգացնող ճանապարհն է ու նրա անվտանգության երաշխավորը:

Թշնամին օկուպացրել է մեր երկրի բնական պաշարների գրեթե ամբողջը, իսկ սա նշանակում է, որ մինչև մեր հայրենիքի վերադարձը, ելման

կետն ու հաղթական ելքը գիտությունն է, տեխնոլոգիական ու ինժեներական ապագան, գիտական տարբեր ուղղություններով համայնքների ստեղծումը: Մենք դպրոցներում սկսել ենք հիմնարար գիտությունների զարգացման նոր ծրագրեր: Իսկ սա նշանակում է գիտությունը բերել դպրոց: Գիտության զարգացումն այսօր էլ մարտահրավերային է, բայց մենք կարող ենք հաղթահարել ու հաջողություններ ունենալ, եթե ճիշտ սահմաններ ուղրտի առաջնահերթությունները և դրանք ի կատար ածելու մեխանիզմները:

2020, 2021 թվականներին մեր աշակերտությունը հաջողություններ է արձանագրել քիմիայի, կենսաբանության, ռոբոտաշինության, IT ծրագրերի տարբեր մրցույթներում ու օլիմպիադաներում, իսկ Արցախի գիտական կենտրոնը ձեռք է բերել գիտական արդյունքների կիրառման տար-

բեր արտոնագրեր, գիտական տարբեր ծրագրերի արդյունքներ ընդունվել են մտավոր սեփականության կողմից:

Սիրելի՛ գիտնականներ, մեր առջև այսօր լուրջ խնդիրներ են ծառայելու նաև թշնամու կողմից մեր պատմամշակութային ժառանգությունը կեղծելու և նենգափոխելու ուղղությամբ համակարգված պայքարը կասեցնելու հարցում: Մենք պետք է մեկտեղենք մեր գիտական ողջ ներուժը՝ ի սպաս դնելով մեր երկրի պահպանմանն ու զարգացմանը: Մեր ինքնիշխանությունն ու անկախությունը կարող են ամրանալ և ճանաչելի դառնալ գիտությանը: Գիտությունն ու ակտուալ գիտելիքը ենթակա չեն և ոչ մի սահմանափակման: Ուրեմն, շարունակենք արարել գիտությամբ: Անենայն բարիք և ստեղծագործական ընթացք:

ՕՐԸ ՆՇԱՆԱՎՈՐՎԵՑ ԴԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐՈՎ



Գիտության միջազգային օրվա կապակցությամբ ԱՀ ԿԳՄՍ նախարարությունում տեղի ունեցավ պարզապես արարողություն: ԱՀ նախագահի հրամանագրով գիտության և կրթության բնագավառների զարգացման գործում ունեցած մեծ վաստակի համար ԱՀ Աժ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Բալայանին շնորհվել է ԱՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում: Իսկ Արցախի գիտական կենտրոնի տնօրեն, տեխնիկական գիտությունների թեկնածու Անյուտա Սարգսյանը պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

Պարգևները հանձնեց ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը: Շնորհավորելով նրանց և Արցախի բոլոր գիտնականներին ու գիտաշխատողներին՝ նախարարը կարևորեց գիտության դերը երկրի զարգացման ու պաշտպանության կապակցությամբ բարձրացման գործում: Թշնամու կողմից օկուպացված մեր տարածքների հետվերադարձը հնարավոր է առավելապես գիտության զարգացման միջոցով: Իսկ գիտության զարգացման հիմքերը դրվում են դպրոցում: «Գիտության նկատմամբ սերն ու հետաքրքրությունը սկսվում է դպրոցում: Մենք պետք է դպրոցը մոտեցնենք գիտությանը, և գիտությունը բերենք դպրոց», - ասաց նախարարը ու մի քանի կատարված քայլեր նշեց այդ ուղղությամբ: Մեկնարկվել է «Մաթեմատիկն Արցախում» ծրագիրը կրթական համակարգում: Սա նշանակում է, որ մաթեմատիկական հակումներով լավագույն աշակերտները արդեն նախարարության տեսադաշտում են: Նրանց համար անցկացվում են առցանց դասընթացներ, և կատարվում անհատական աշխատանքներ, նրանց հանգիստը կազմակերպվում է գիտաճամբարներում: «Մենք պետք է սկ-

սենք ձևավորել գիտական համայնքներ՝ լինի դա քիմիայի, կենսաբանության, թե՛ այլ ուղղություններով», - շարունակեց Լ. Ղարախանյանը՝ տեղեկացնելով, որ այս տարի նախատեսվում են տեխնոպարկի բացում և կարողացնել իրենց կարողություններն ու հմտությունները տեխնոլոգիաների, ռոբոտաշինության, ինժեներական մտածողության ուղղությամբ: Այստեղ արդեն կան ձեռքբերումներ այն ոլորտում: Երիտասարդները կարող են գուժար վատակել առանց գյուղից, Արցախից դուրս գալու: Աշխարհում հիմա կան 3 մլն թափուր աշխատատեղեր այն մասնագիտությամբ, որոնք կարող են լրացնել մեր աշակերտները: Այսպես, Հաղորտի գյուղում ունենք աշակերտներ, որոնք արդեն աշխատավարձ են ստանում այս ոլորտում զբաղված լինելով ու կախված չեն որևէ մեկից. «Մեր խնդիրն է համայնքներում այնպես զարգացնել տեխնոլոգիական կրթությունը, որ երեխան մեծանալով՝ համայնքից դուրս չտեսնի իր ապագան»:

Արցախի գիտական կենտրոնը նույնպես ունի ձեռքբերումներ, մասնավորապես՝ գիտական արդյունքների կիրառման արտոնագրեր: Գիտաշխատողները վերջին տարեկանում տպագրել են հոդվածներ միջազգային վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում: Վերջին տարիներին կենտրոնը ամուր հիմքերի վրա դնելու գործում մեծ ջանքեր է ներդրել գիտական կենտրոնի տնօրեն Անյուտա Սարգսյանը: Չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ ներկայում գիտական դաշտում աշխատողները էնտուզիազմի վրա են աշխատում՝ անտեսելով ցածր աշխատավարձը: Նախարարը տեղեկացրեց, որ նոր տարվանից արմատապես կփոխվեն գիտական կենտրոնի աշխատողների աշխատավարձերը: Արդեն մեծ փոփոխություններ են կա-

տարվում այստեղ: Գիտական որոշակի արդյունքներից բացի լավ կապեր են ստեղծվել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ: Առաջիկայում այստեղ գիտական լաբորատորիաների բացում կլինի:

Տեխնիկական ուղղությամբ զարգացման հրատապությունը հետին պլան չի մղում հայագիտական հետազոտությունների պահանջարկը: ԿԳՄՍ նախարարն այս ոլորտում հատկապես կարևորում է աղբբեջանական զեղծարարությունների դեմ պայքարը: «Թշնամին սկսել է սրընթաց նենգափոխել մեր պատմական ժառանգությունը, կեղծել այն, և այստեղ ևս շատ լուրջ խնդիրների առաջ ենք կանգնած. մեր գիտնականները պետք է մեկտեղենք բոլոր ռեսուրսները, որպեսզի կարողանանք ճիշտ և գրագետ ու իմաստալից ձևով պայքարել թշնամու նենգափոխությունների ու կեղծարարությունների դեմ», - նշեց Լ. Ղարախանյանը:

Անյուտա ՍԱՐԳՍՅԱՆ. - Գիտությունն է զարգացած հասարակության հիմքը և մարդկության քաղաքակրթության բաղադրարարը: Այն պետությունները, որոնք ուշադրություն են դարձնում, ներդրում են անում գիտության մեջ, հզոր են լինում: Եվ այս պայմաններում մենք՝ գիտական հասարակության անդամներս, պետք է մեր ներդրումն ունենանք մեր երկրի զարգացման գործում և համուն խաղաղության: Մեր ունեցած երկրի այս մի մասնիկը պետք է հզորացնենք, որ մեր ապագայի հանդեպ արդարացի լինենք: Պարզև, ինչ խոսք, խրախուսում է ավելի մեծ եռանդով աշխատելու ի նպաստ Արցախի:

Լ. Ղարախանյանը մի նկատառում արեց. - Վերջին երկու տասնամյակների ընթացքում ֆիզիկայի, մեխանիկայի, տեխնիկայի բնագավառներում կազմակերպված ամենահայտնի միջազգային կոնֆերանսներում աղբբեջանցի չի եղել: Բայց բոլորս տեսնում ենք, թե ինչպես են կարողանում հմտորեն գողանալ ուրիշի գիտելիքը և ոչնչացնել նրան, ումից գողացել են: Սա պետք է մեկընդմիջտ հաշվի առնեն մեր սերունդները և ոչինչ չուներող, բայց ուրիշից տարբեր ճանապարհներով արժեքներ կորզող մարդկանց հետ խիստ լինեն. արդեն սխալվելու իրավունք չունենք: Մենք պետք է ողջամիտ լինենք մեր բոլոր ծրագրերում, թե ինչպես ենք առաջնահերթությունները սահմանում, ինչ ներդրումներ ենք անելու: Այսպես չի կարող շարունակվել: Մենք պետք է մեկընդմիջտ փոխենք ամեն ինչ ու սկսենք հետևողական, համակարգված քայլեր ձեռնարկել մեր երկիրը գիտությանը այս վիճակից կոտրելու գործում: Գիտելիքն է, որին ոչ մեկը չի կարող զսպաշապիկ հագցնել, արգելել. միայն ակտուալ գիտելիքով կարող ենք հասնել ու անցնել բոլոր վերջնարկները, բոլոր գծերը լավ իմաստով: Եվ պահել ու պահպանել քաղաքակրթական բոլոր դարաշրջաններով անցած մեր երկիրը, որ հայտնվել է այսքան կոտրված, ոչնչացված, խեղճ վիճակում:

Սեփ. լրատվություն

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՀԵՏ

ԱՐՏՅՈՍ ՕԳԱՆՈՎ ԵԿԵԼ ԵՄ ՕԳՏԱԿԱՐ ԼԻՆԵԼՈՒ ԱՐՃԱՆԻՆՆԻՆ՝ ԻՆՉՈՎ ԿԱՐՈՂ ԵՄ

Արտյոն ՕԳԱՆՈՎ: Աշխարհահռչակ գիտնական, քիմիկոս, բյուրեղագետ, նյութաբան, նոր նյութերի կանխատեսման բացառիկ մեթոդի հեղինակ, արձաններով՝ շուշեցի: Նրա նախնիները հարյուր տարի առաջ՝ հայկական ջարդերի ժամանակ ստիպված են եղել թողնել Շուշին: Փախել են Թիֆլիս, ապա տեղափոխվել Ռուսաստան:

Ա. Օգանովը ծնվել է 1975թ. Գնեպրոպետրովսկում՝ ազգությամբ հայ հոր և հրեա մոր ընտանիքում: Մանկության առաջին տարիներն անցկացրել է այդտեղ, ընտանիքն ապա տեղափոխվել է Մոսկվա: Մանկուց տարվել է հանքաբարերով, քիմիայով, երազել է դառնալ գիտնական: Ընդունվել է Մոսկվայի պետական համալսարանի երկրաբանության ֆակուլտետ, բայց շուտով հասկացավ, որ հանքագիտության հիմքում բյուրեղագիտությունն է, միավորեց այդ երկուսը և դարձավ քիմիկոս-հանքաբյուրեղագետ:

Թեկնածուական թեզը Արտյոն Օգանովը պաշտպանել է Լոնդոնի համալսարանական քոլեջում, երբ 26 տարեկան էր: 31 տարեկանում Ցյուրիխի պոլիտեխնիկ ինստիտուտում ստացել է գիտությունների դոկտորի աստիճան: Այնուհետև տեղափոխվել է ԱՄՆ. Նյու Յորք նահանգի համալսարանի պրոֆեսոր էր, այնտեղ ղեկավարում էր նյութերի համակարգչային դիզայնի լաբորատորիան, եղել է Փարիզի, Միլանի, Պեկինի, Յոնգ կոնգի համալսարանների հրավիրյալ պրոֆեսոր: 2013թ. ընտրվել է գիտնականների Ռուս-ամերիկյան ընկերակցության նախագահ: Վերադառնալով Ռուսաստան՝ նա Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտին կից հիմնադրեց նյութերի համակարգչային դիզայնի կենտրոնը ու ստանձնեց դրա ղեկավարումը: Այժմ գիտությունների ու տեխնոլոգիաների Սկոլկովո ինստիտուտի պրոֆեսոր է: Հեղինակավոր ամսագրերը նրան դասել են հարյուր ամենաազդեցիկ ռուսաստանցիների շարքը: «Ֆորբս»-ը նրան ներառել է աշխարհը նվաճած 50 ռուսաստանցիների խորհրդանշական ցանկի մեջ:

Արտյոն Օգանովի մասին համաշխարհային մամուլում հարյուրավոր հոդվածներ են գրվել, նրան նվիրված երեք վավերագրական ֆիլմ է նկարահանվել: Ա. Օգանովի կանխատեսումների արդյունքում հայտնաբերվել են 60-ից ավել նոր նյութեր: Դրանց բնույթն ու ստացման եղանակները հաշվարկվում են իր հեղինակած համակարգչային ծրագրի միջոցով: Նրա ծրագրից օգտվում են շուրջ 400 հազար հետազոտողներ աշխարհի տարբեր երկրներում: Օգանովի մեթոդի շնորհիվ հնարավոր է նաև նյութեր ստանալ պատվիրված որակներով ու բնույթով: Հրատարակվել են 300-ից ավելի գիտական հոդվածներ միջազգային հանդեսներում:

Համաշխարհային մեծության հայազգի այս գիտնականը հոկտեմբերի 27-ին հյուրընկալվել է ԱՀ ԿԳՄՍ նախարարությունում: Նրա հետ էին կինը՝ Նատաշա Օգանովան՝ ՌԴ կառավարությանն առընթեր ֆինանսական համալսարանի դասախոս և ավագ դուստրը՝ Լեռա Օգանովան՝ թատերական լրագրող, թատրոնի ռեժիսորի օգնական: Արտյոն և Նատաշա Օգանովները 5 զավակների՝ երեք դուտեր և երկու որդու ծնողներ են:

Նշանավոր մեր հայրենակցի հետ հանդիպմանը ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը հրավիրել էր Ստեփանակերտի ֆիզմաթ և հ. 11 ավագ դպրոցների աշակերտների ու ֆիզիկայի ուսուցչի: Ներկա էին նաև նախարարության աշխատակիցներ, ԳԹԿ տնօրենը:

Լ. Ղարախանյանը ողջունեց մեծահամբավ գիտնականի այցը Արցախ: «Մենք անչափ ուրախ ենք, որ դուք այստեղ եք: Հույս ունեն, որ մենք կշարունակենք մեր պայքարը կրթության ու գիտության միջոցով: 44-օրյա պատերազմից հետո մենք ունեցանք զանգվածային դեպրեսիա, որն աստիճանաբար հաղթահարում ենք: Մինչև Ձեր գալը ես աշակերտներին ծանոթացնում էի Ձեր անցած գիտական ուղուն և բացատրում, որ իրենցից յուրաքանչյուրը կարող է դառնալ Արտյոն Օգանով, եթե աշխատի տքնաջան: Ես ուզում եմ, որ մեր աշակերտները մոտիկից ծանաչեն հայտնի



րաններ: Այդ իմաստով մեկուսացվածություն չկա, բայց դա պետք է լինի ոչ թե անհատների մակարդակով, այլ՝ համակարգային: Բիսմարկն է ասել, որ պատերազմները հաղթում են ոչ թե մարտիկները, այլ ուսուցիչները: Մեր գիտնականները պետք է մտածեն մեր կրթական համակարգն ուժեղացնելու ուղղությամբ:

Մենք չկարողացանք Արցախը դարձնել համայն հայության խորհրդանիշ, ինչպես Իսրայելը դարձավ հրեաների խորհրդանիշը: Իսրայելը դարձավ հրեության կենտրոն, դրա համար մեծ հոսք եղավ դեպի այդ երկիրը, հրեա բոլոր ուղեղները գնացին այնտեղ: Իսկ մենք այդքան նշանավոր հայեր ունենք ցրված ամեն տեղ, բայց... Ասում ենք՝ Հաղորթը, Շուշին վերադարձնենք: Այս տեմպով մենք չենք վերադարձնի: Մինչև մենք ուժեղ չլինենք, համախմբված, ոչ մի բանի չենք հասնի»:

Ա. Օգանովն առաջարկեց կրթական համակարգին օժանդակելու ընդունված մի քանի տարբերակներ, մասնավորապես աշխարհի լավագույն մասնագետների առցանց դասախոսություններից մինչև որոշ ժամանակով Արցախում նրանց գտնվելը: Կրթությունը, աշակերտների հետաքրք-

րաններ: Այդ իմաստով մեկուսացվածություն չկա, բայց դա պետք է լինի ոչ թե անհատների մակարդակով, այլ՝ համակարգային: Բիսմարկն է ասել, որ պատերազմները հաղթում են ոչ թե մարտիկները, այլ ուսուցիչները: Մեր գիտնականները պետք է մտածեն մեր կրթական համակարգն ուժեղացնելու ուղղությամբ:

Այսինքն՝ այստեղ գալով գիտնականը չի դադարում իրականացնել իր գիտական գործունեությունը, բայց նաև օգնում է Արցախի դպրոցին: Ըստ նրա՝ մտածել, թե այստեղ կարելի է հզոր գիտություն զարգացնել, առայժմ հեռու է իրականությունից, քանի որ դրա համար անհրաժեշտ են շատ թանկ սարքավորումներ, լաբորատորիաներ: Բայց բարձրացնել դպրոցը և լավագույն աշակերտներին օգնել սովորելու առաջնակարգ համալսարաններում՝ պայմանով, որ հարազատ երկրի համար կաշխատեն, Օգանովը իրատեսական է համարում՝ հավելելով, որ դրա համար ինքն էլ հաճույքով իր ձեռքից եկածը կանի: Նա համոզված է, որ տարբեր ազգության գիտնականներ կհամաձայնվեն առցանց դասախոսություն կարդալ, խմբակներ վարել: Դա աշխատող տարբերակ է:



րաններ: Այդ իմաստով մեկուսացվածություն չկա, բայց դա պետք է լինի ոչ թե անհատների մակարդակով, այլ՝ համակարգային: Բիսմարկն է ասել, որ պատերազմները հաղթում են ոչ թե մարտիկները, այլ ուսուցիչները: Մեր գիտնականները պետք է մտածեն մեր կրթական համակարգն ուժեղացնելու ուղղությամբ:

Ա. Օգանովն առաջարկեց կրթական համակարգին օժանդակելու ընդունված մի քանի տարբերակներ, մասնավորապես աշխարհի լավագույն մասնագետների առցանց դասախոսություններից մինչև որոշ ժամանակով Արցախում նրանց գտնվելը: Կրթությունը, աշակերտների հետաքրք-

րաններ: Այդ իմաստով մեկուսացվածություն չկա, բայց դա պետք է լինի ոչ թե անհատների մակարդակով, այլ՝ համակարգային: Բիսմարկն է ասել, որ պատերազմները հաղթում են ոչ թե մարտիկները, այլ ուսուցիչները: Մեր գիտնականները պետք է մտածեն մեր կրթական համակարգն ուժեղացնելու ուղղությամբ:

Ա. Օգանովն առաջարկեց կրթական համակարգին օժանդակելու ընդունված մի քանի տարբերակներ, մասնավորապես աշխարհի լավագույն մասնագետների առցանց դասախոսություններից մինչև որոշ ժամանակով Արցախում նրանց գտնվելը: Կրթությունը, աշակերտների հետաքրք-

րաններ: Այդ իմաստով մեկուսացվածություն չկա, բայց դա պետք է լինի ոչ թե անհատների մակարդակով, այլ՝ համակարգային: Բիսմարկն է ասել, որ պատերազմները հաղթում են ոչ թե մարտիկները, այլ ուսուցիչները: Մեր գիտնականները պետք է մտածեն մեր կրթական համակարգն ուժեղացնելու ուղղությամբ:

րաններ: Այդ իմաստով մեկուսացվածություն չկա, բայց դա պետք է լինի ոչ թե անհատների մակարդակով, այլ՝ համակարգային: Բիսմարկն է ասել, որ պատերազմները հաղթում են ոչ թե մարտիկները, այլ ուսուցիչները: Մեր գիտնականները պետք է մտածեն մեր կրթական համակարգն ուժեղացնելու ուղղությամբ:

րաններ: Այդ իմաստով մեկուսացվածություն չկա, բայց դա պետք է լինի ոչ թե անհատների մակարդակով, այլ՝ համակարգային: Բիսմարկն է ասել, որ պատերազմները հաղթում են ոչ թե մարտիկները, այլ ուսուցիչները: Մեր գիտնականները պետք է մտածեն մեր կրթական համակարգն ուժեղացնելու ուղղությամբ:

Ա. Օգանովի բացահայտած նյութերն ունեն կիրառական նշանակություն: Այսպես, վերջերս նրա արած կանխատեսման արդյունքում ստացան նոր նյութ, որը մի քանի անգամ ավելի ամուր է, քան մինչ այդ մարդկությանը հայտնի ամենամուր նյութը: Ռազմարդյունաբերողները հետաքրքրված են դրանով: «Տոյոտա», «Ֆուլքստի», «Ինթել» ընկերությունները պարտական են գիտնականին՝ նրա հայտնագործած մեթոդներով ստացված նոր նյութերն օգտագործելու համար:

Ա. Օգանովը պատասխանեց ներկաների հարցերին: Ի՞նչն է նրան բերել Արցախ: «Ես երկրորդ անգամ եմ գալիս: Ինձ այստեղ են բերել իմ արձատները, հետաքրքրասիրությունն ու բարեկամությունը:

Ես շատ էի ուզում տեսնել, թե Շուշիում որտեղ է ապրել իմ պապը: Տան տեղը չգիտեմ, բայց գոնե տեսնեի քաղաքը:

Հետաքրքրասիրությունը: Բոլորն ասում են՝ Ղարաբաղ, Ղարաբաղ, ի՞նչ է Ղարաբաղը, ինչի՞ համար են կռվում 100 տարի: Մոսկվայում նստած՝ ոչ մեկը չի պատկերացնում, բացի նրանցից, ովքեր իրականում եղել են այստեղ:

Բարեկամությունը: Ես բարեկամացել եմ Մոսկվայում Արցախի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչ Ալբերտ Անդրյանի հետ: Նա նույնպես ուսուցիչ է եղել, հոյակապ մարդ է, մի օր ասաց՝ գնանք Ղարաբաղ, կծանոթացնեմ, դասախոսություն կկարդաս: Կրկնակի հաճույք կլինի: Այդպես էլ արեցինք: Ես հնարավորություն ունեցա Լեռային և կնոջս ցույց տալ Ղարաբաղը: Այն ինձ վրա մեծ տպավորություն թողեց, լավատեսություն ու երջանկություն կար: Ես հիշում եմ, հրապարակում երջանիկ գույզեր էին քայլում, երեխաները մեքենա էին քշում, փողային նվագախումբն էր նվագում: Հոյակապ տեսարան էր: Մինչև պատերազմն այդպիսին էր, թե ինչպիսին է պատերազմից հետո, չգիտեմ, եկել եմ, որ իմ աչքով տեսնեմ: Ես շատ եմ ուզում, որ մեր գալը բավարարի ոչ միայն մեր հետաքրքրասիրությունը, նոստալգիան իմ արձատների նկատմամբ, այլև օգտակար լինել ինչ-որ բանով: Ես և իմ ընտանիքը պատրաստ ենք օգտակար լինել, կարող եք մեզ վրա հույս դնել»,- ասաց աշխարհաճանաչ մեր հայրենակիցը:


Աշակերտներից մեկի հարցին, թե ունի՞ սիրած գրքեր, պատասխանեց, որ դա «Պատերազմ և խաղաղություն»-ն է, որը կյանքի, մարդկային բնավորությունների հանրագիտարան է, «Երկու կապիտան»-ը, որը սովորեցնում է պայքարել ու չհանձնվել, Աստվածաշունչը:

Չանդիպման վերջում ԱՀ ԿԳՄՍ նախարարը գիտնականին նվիրեց Շուշիի հայկական ջարդերի 100-րդ տարելիցին նվիրված գիրք, արցախյան հողով հուշանվեր՝ Սոնթեի խոսքով. «Եթե կորցնենք Արցախը, կշրջենք հայոց պատմության վերջին էջը», Անտոնիա Արսլանի «Մշո գիրքը»:

Պայմանավորվեցին կազմել հետագա համագործակցության ծրագիր: Արտյոն Օգանովը հաջորդ օրը ԱրԴՀ-ում հանդես եկավ դասախոսությամբ:

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ

ԱՐՑԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՂԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱՆ ԴԱՐՔՆՈՑ
Շուշիի մանկավարժական ուսումնարանի 100-ամյակը



44-օրյա պատերազմի պատճառով մարդկային, տարածքային, մշակութային մեր ահռելի կորուստները, հետպատերազմյան իրավիճակը, համավարակը այն տրամադրություններ են ստեղծել, որ մտածենք ինչ-որ հոբելյաններ նշելու մասին: Նշել չենք կարող, բայց հիշել պարտավոր ենք, ինչպես, օրինակ, Շուշիի մանկավարժական ուսումնարանի 100-ամյակը: Մի կրթօջախ, որը մեծ դեր է խաղացել խորհրդային տարիներին Ադրբեջանի հայաստանյայց քաղաքականության պայմաններում Շուշիի հայեցի դիմագիծը պահպանելու, երկրամասի ժողովրդական կրթության ոլորտը մասնագետներով ապահովելու գործում:

Ներկայացնենք ուսումնագիտական այդ կրթօջախի՝ իրավամբ Արցախի միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջնեկի անցած ուղին՝ հիմք ընդունելով նրա 85-ամյակի կապակցությամբ Ա. Խաչատրյանի և Գ. Հարությունյանի համահեղինակությամբ «Շուշիի մանկավարժական ուսումնարան» գիրքը, 90-ամյակի առթիվ և անեն տարի կազմակերպվող շրջանավարտների հավաքի վերաբերյալ մեր հիշողությունները:

Բայց նախ՝ մի քանի խոսք 19-րդ դարից սկսած արևելահայ հատվածի կրթական, լուսավորական խոշոր կենտրոն Շուշիի՝ 20-րդ դարասկզբի ժողովրդական լուսավորության վիճակի մասին: Վերը նշված գրքում կարդում ենք. «Չնայած այն ամենին, որ ցարական կառավարությունը շուրջ տասը տարի (1896-1906) փակել էր հայկական դպրոցները, այդ թվում նաև՝ Շուշիի թեմական դպրոցը (1902-1903), այնուամենայնիվ, 20-րդ դարի սկզբին ակտիվացան և ժողովրդի հասարակական մախաճեռներումը նոր դպրոցների ստեղծման գործում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արցախի դպրոցական կյանքում զգալի տեղաշարժ է կատարվում հատկապես 1911-1912 ուստարում Առաքել Առաքելյանի տեսչության շրջանում: 1912թ. «Ղարաբաղ» թերթի թիվ 10-ում տպագրված «Ղարաբաղի թեմի կրթական գործը 1911-1912թթ.» խորագրով հոդվածում նշվում է, որ Շուշի քաղաքում գործում են՝ թեմական դպրոցը 300 աշակերտով, ռեալական ուսումնարանը՝ 400, Մարիամյան օրիորդաց դպրոցը՝ 250 աշակերտուհի, Հռիփսիմյան օրիորդացը՝ 218, Ազուլեցոց եկեղեցուն կից երկսեռ միդասյա դպրոցը՝ 60, որից 45-ը՝ աղջիկ, Մեղրեցոց եկեղեցու գավթում՝ 70 երեխա, «Իսահակ-Մաթևոսյան-Թադևոսյան» երկսեռ դպրոցներում՝ 80 երեխա և այլն»:

1915թ. «Փայլակ» թերթում «Չայ դպրոցը» հոդվածում առաջարկվում է բարձրորակ ուսուցչական կադրեր ունենալու համար Շուշիում հիմնադրել նոր տիպի դպրոց, որտեղ ուսումնասիրեն մանկավարժահոգեբանական առարկաները: Այն ժամանակ Արցախի թեմի դպրոցների համար մանկավարժական կադրեր էին պատրաստում Շուշիի թեմական դպրոցը և ռեալական ուսումնարանը»:

Ցարական կառավարության կողմից հայկական մի շարք դպրոցների, այդ թվում՝ թեմական դպրոցի և ռեալական ուսումնարանի փակումից հետո ռեալականի շենքում գործող երկրորդ աստիճանի հանրակրթական դպրոցը 1921-1922 ուսումնական տարում վերափոխվում է ուսուցչական սեմինարիայի, մեկ տարի անց՝ մանկավարժական տեխնիկումի, սկսած 1930 թվականից՝ ուսումնարանի: Փաստորեն մանկավարժական ուսումնարանը իրավահաջորդ էր Շուշիի նշանավոր ռեալական ուսումնարանի: Այսպիսով, 20-րդ դարի 20-30-ական թվականներին Ղարաբաղում միջին մասնագի-

տական միակ ուսումնական հաստատությունը Շուշիի մանկավարժական տեխնիկումն էր, որը ոչ միայն ուսուցչական կադրեր էր պատրաստում մարզի հայկական դպրոցների համար, այլև դարձել էր երկրի հասարակական, քաղաքական շարժումների, առաջավոր մտավորականների գործունեության կենտրոն:

1923-1924 ուսումնական տարում Շուշիի մանկավարժական ուսումնարանը երկու բաժին՝ հայկական և քրդական: Մանկավարժական կադրերի խնդիրը լուծելու համար ԼՂ լուսժողովուստը (ակադեմիկոսներ Արշավիր Քանայան, Առաքել Առաքելյան) լայն աշխատանքներ է ծավալում: Մանկավարժական տեխնիկում աշխատանքի հրավիրվեցին հայ հասարակության անվանի մտավորականներ. Տեր-Գասպարյան, Գուրգեն Եղիլյան, Ելիզավետա Հովհաննիսյան, Սամվել Շինակյանյան, Ռուբեն Քանայան, Կարո Դավթյան, Թեմուր Ամիրջանյան և այլ նշանավոր մանկավարժներ: Ուսումնարանը 30-40-ական թթ. թևակոխում է զարգացման նոր փուլ, որը պայմանավորված էր համարվող նոր բարձրորակ մասնագետների արդյունավետ ու համառ գործունեությամբ, հատկապես 1938-ի օգոստոսին ուսումնարանի տնօրեն նշանակված Արսեն Խաչատրյանի բեղմնավոր գործունեությամբ: Կրթության գործին նվիրված նորանշանակ տնօրենն այդ բարդ ժամանակաշրջանում կարողացել է իր շուրջը համախմբել գործի նվիրյալներին, ստեղծել կուռ մի կուլեկտիվ, որին, իրոք, վիճակված էր Շուշիում ծավալել հայապահպան առաքելություն: Ա. Խաչատրյանը կրթօջախի բնականոն գործունեությունը և այն հայ մասնագետներով ապահովելը Շուշիում համարեց հայապահպանության կարևոր գործոն: Հնուտ դիվանագիտությամբ նա կարողացավ ճկուն ծրագրային մտահղացումներն ուղղել թուրքական հակահայկական նկրտումների դեմ՝ կյանքի կոչելով հայապահպանությանն ուղղված միջոցառումներ: Հայկական դպրոցները մասնագետներով համալրելու կոչին հետևելով՝ Շուշի էին գալիս հայրենասեր մասնագետներ Երևանից, Թիֆլիսից, Բաքվից, Ստեփանակերտից: Նրանք բոլորն էլ անհատականություններ էին, իրենց գործում գիտակ մանկավարժներ:

«Բազմաձև ու մանկավարժների ստեղծագործական որոնումների, եռանդուն աշխատանքի շնորհիվ մանկավարժական ուսումնարանը դարձել էր մի գիտական լաբորատորիա», - հետագայում գրել էր նրա շրջանավարտներից վաստակավոր մանկավարժ Եմմա Վերդյանը: Իսկ ԼՂՀ ԿԳ նախկին նախարար Համլետ Գրիգորյանի, այս ուսումնարանի շրջանավարտի զեմաստանը՝ Շուշիի մանկավարժական ուսումնարանը եղել է Ղարաբաղի կրթոցների մեթոդը: Այդ միակ մանկավարժական կրթօջախը Ղարաբաղում եղել է մանկավարժական կադրերի դարբնոցը՝ ազգային դիմագծով: Եվ ոչ միայն մանկավարժների. նրանք մեկ տասնյակ հազարից ավելի շրջանավարտներ կյանքի ինչ ոլորտ էլ ընտրել են, առաջ են տարել այն, նրանցից ոմանք դարձել են նշանավոր գիտնականներ, գրողներ, արվեստագետներ, պարզապես մեծատառով հայեր: Շուշիի մանկավարժականը 1940-1941 ուսումնական տարում փակվում է. հայկական բաժինը բռնի տեղափոխվում է Հաղորթ, իսկ արդրեջանականը՝ Աղղամ: Այն հեռուն զնացող թուրքական քաղաքականություն էր: Հայ ուսանողների համար դժվար կլինեք հեռավոր Հաղորթ սովորելու զնալ: Այն կատարվեց կրթօջախը փակելու միտումով:

Սարգիս Աբրահամյանի (այն ժամանակ ԼՂ մարզժողովրդության բաժնի վարիչն էր) և հայրենասեր այլ մտավորականների ջանքերով մանկավարժական ուսումնարանը 1942-1943 ուստարում Հաղորթից նորից տեղափոխվում է Շուշի: Լեռնային Ղարաբաղի համար ծանր օրերին բարոյահոգեբանական վատ մթնոլոր-

տում կրթօջախը հնուտ դեկավար Ա. Խաչատրյանի շնորհիվ պահպանել է հայ մշակույթի արժեքները՝ ավանդաբար կազմակերպելով հանդիպումներ գիտության ու արվեստի անվանի գործիչներ Շավարշ Վարդունու, Սարգիս Աբրահամյանի, Նիկոլայ Ենիկոլոպովի, Կարեն Յուզբաշյանի, Ալեքսեյ Յեքիմյանի, Սուրեն Քոչարյանի, Արցախի անվանի գրողներ Միքայել Հարությունյանի, Բագրատ Ուլուբաբյանի, Բոգրան Ջանյանի և շատերի հետ:

Կրթօջախը վառ էր և գրել Մեծ Հայրենական տարիներին: Ետպատերազմյան շրջանում ուսումնարանը զարգացման նոր փուլ ապրեց: Տեղի ունեցան լուրջ փոփոխություններ, բացվեցին նոր բաժիններ, ստեղծվեցին կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ, կոլեկտիվը համալրվեց նվիրյալ մասնագետներով:

ԱՐ ԿԳ նախկին նախարար Համլետ Գրիգորյանը, որը 1958-1960թթ. սովորել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում և ռեալականի շենքում սովորած վերջին շրջանավարտներից է, վկայում է, որ այդ ժամանակ ուսումնարանում անհամեմատ մեծ թիվ էին կազմում հայերը, քան արդրեջանցիները, սակայն արդրեջանական իշխանությունների ճնշման ներքո 1960թ. սեպտեմբերի 1-ից ԼՂ մարզկոմի որոշմամբ ուսումնարանն ամբողջովին տեղափոխվում է քաղաքի արդրեջանական մաս՝



թիվ 5 մանկատան շենք, տնօրեն է նշանակվում ազգությամբ արդրեջանցին: Իսկ Ա. Խաչատրյանը դեկավարում է ռեալականի շենքում բացված գիշերօթիկ դպրոցը: Մինչև 1990 թվականի Շուշիի մանկավարժական տնօրեններն արդրեջանցիներ էին, որոնք, հավատարիմ մնալով իրենց որդեգրած գաղափարին, ամեն ինչ արել են՝ խելոխելու կրթօջախում հայկական ոգին: Կրճատվեցին մասնագիտությունները, ինչի արդյունքում նվազեց հայ ուսանողների թիվը: Մինչև 1988թ. մայիսը գործող 22 կուրսից միայն 2-ն էր հայկական: Հ. Գրիգորյանը պատմեց նաև, որ նույն բեմագիրը նախատեսված էր հետագայում Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի համար. տարեցտարի արդրեջանական խմբեր ավելացվելով՝ օրակարգում էր նաև արդրեջանցի ռեկտորի նշանակման հարցը, բայց 1988թ. սկսված Արցախյան շարժումը կասեցրեց արդրեջանական նկրտումները:

1988թ. փետրվարին, երբ արցախահայությունը ոտքի ելավ հանուն իր իրավունքների, Շուշիի ուսումնարանը ևս կրեց հակահայկական բռնությունները: Շուշիի հայ բնակչությունը տեղահանվեց, իսկ ուսումնարանի հայկական բաժինը ուսումնական գործընթացը շարունակեց (19.09.1988) Ստեփանակերտում: 1990թ. հունվարի 2-ին երկու կուրսի բազայի վրա բացվում է Էջմիածնի ակումբագրադարանային տեխնիկումի Ստեփանակերտի մասնաճյուղը (վարիչ է նշանակվում Ալբերտ Խաչատրյանը): Շուշիի ազատագրումից հետո կրթօջախը (7 խումբ՝ 178 սովորողով) 1993-ի սեպտեմբերի 1-ից ուսումնական աշխատանքը շարունակում է հայրենի քաղաքում՝ կիսավեր հանրակրթական ոչ հարմարավետ շենքում: Էջմիածնի տեխնիկումի Ստեփանակերտի մասնաճյուղը հունվարից դառնում է ինքնուրույն հաստատություն՝ վերանվանվելով Շուշիի մշակութալուսավորական տեխնիկում, 1990թ. ապրիլից՝ Շուշիի հումանիտար ուսումնարան, 2001թ. փետրվարի 13-ից՝ Արսեն Խաչատրյանի անվան հումանիտար ուսումնարան, 2003թ. մայիսի 27-ից՝ «Արսեն Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջ» ՊՈԱԿ:

2009թ. սեպտեմբերից քոլեջի տնօրեն է նշանակվում Արա Հայրապետյանը (փոխարինելով Ալբերտ Խաչատրյանին), որն այսօր էլ դեկավարում է այն (այդ ընթացքում մեկ տարի տնօրենը եղել է Ջիվան Հայրապետյանը), որը քոլեջի գործունեությանը նոր թափ ու թարմություն տվեց: Կրթօջախում գործող ինը բաժնի 15 կուրսում սովորում էր 279 ուսանող, աշխատում՝ 51 դասախոս: Կոլեկտիվի ցանկությունն էր վերադառնալ մայր շենքը՝ Ռեալական, հայ ճարտասպետական այդ կոթողը տեսնել վերականգնված: Սակայն այդ երազանքը ոչ միայն չիրականացավ, այլև 2020թ. Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով արցախյան տարածքների մեծ մասի հետ միասին քչնամու տիրապետության տակ մնաց նաև Շուշին: Այնտեղ գործող ուսումնական հաստատություններն այսօր հանգրվանել են Ստեփանակերտում և շարունակում են իրենց գործունեությունը: Հումանիտար քոլեջը տեղակայվել է Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում և նորից գրոյից է սկսել: Տնօրեն Արա Հայրապետյանը, ինքն էլ կորցրած տուն-տեղ, թանկ հիշատակներ, ուսուցիչներին և սովորողներին հավաքած՝ փորձում է, ինչպես ասում են, կանաչ խոտի վրա կրակ վառել:

Իր գոյությունը ընթացքում Շուշիի մանկավարժական ուսումնարանը թողարկել է հազարավոր շրջանավարտներ, որոնցից շատերը դարձել են կրթության, գիտության, մշակույթի, հասարակական-քաղաքական ոլորտների նշանավոր անհատներ. Արամ Մարտիրոսյան, Արուսյակ Մախմուրյան, Գուրգեն Բորյան, Բոգրան Ջանյան, Հայկ Խաչատրյան, Ներսես Աբրահամյան, Եսայի Եսայան, Գաբրիել Գաբրիելյան, Սերգեյ Շաքարյան, Մելքուն Մելքունյան, Վարդան Բալայան, Ալեքսանդր Հարությունյան, Գայյա Բաղասյան, Արտաշես Գասպարյան, Ալեքսանդր Հակոբյան, Շահեն Աբրահամյան, Նիկոլայ Բաղդասարյան, Արմեն Ավանեսյան, Արմո Ներսիսյան, Համլետ Գրիգորյան և շատ ուրիշներ: Ուսումնարանի ուսուցիչներից և շրջանավարտներից 20-ի ամունն ընդգրկված է «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժներ»-ի ցանկում:

Արցախ աշխարհին պատուհասած մեր դժոխակ ժամանակներում ճշմարտություն պահանջում է ասել, որ դժվար թե հիշեինք Շուշիի մանկավարժական ուսումնարանի 100-ամյակի մասին, եթե չլինեք 1967-2008թթ. կրթօջախի ուսուցչուհի, ԼՂՎ աստակավոր մանկավարժ, Խաչատրյանների գերդաստանի արժանավոր տիկին Լարիսա Ղազարյանի շնորհավորանքի ուղերձը հարազատ կոլեկտիվին՝ հումանիտար քոլեջի ուսուցիչներին և ուսանողներին: Ցավոք, դրանից մի քանի օր անց վեհանճն հայուհին հրաժեշտ տվեց կյանքին Արցախի սահմաններից դուրս: Ուղերձում ասվում է. «Հարգարժան Արա Հայրապետյան, սիրելի կոլեկտիվ, ողջունելով և շնորհավորելով ձեզ այս հիշարժան՝ 100-ամյա հոբելյանի առթիվ, մաղթում են նորանոր աշխատանքային հաջողություններ, դիմակայելու կամք, արիություն, տոկոսություն և ոգևորություն Արցախի նվիրված բարեկիրք սերունդ դաստիարակելու պատասխանատու և ազգանվեր աշխատանքում»:

Հավատացած են, որ դուք հաջողությամբ կյանքի կկոչեք կոլեկտիվի առաջ դրված խնդիրները, չնայած տեղահանված՝ կիրակա-նացնեք հայեցի կրթության ու դաստիարակության սրբազան գործը՝ պահելով ու պահպանելով մեր ոսկեդեմիկ մայրենին, մեր պատմությունն ու ավանդույթները, Շուշիի փառքը: Ակնթարթ թվազող այս ծանր ժամանակներում, չնայած հարազատ կրթօջախից հեռու, նոր կրթօջախի կամարները ներքո արցախահայի ոգին է՝ կերտելու, դիմակայելու բազմաթիվ մարտահրավերների, միշտ վրա պահելու մեր ազգային համոզումները: Որպես լույսի ջահակիրներ՝ միշտ բարձր կպահեք հայի արժանապատվությունը, Շուշիի հմայքը:

Թող երկնային սերը միշտ օրհնյալ պահի 100-ամյա կրթօջախը, գորավիզ լինի գարգացման ձեռք ազգային լուսապսակ առաքելությանը, ձեր հայրենասիրական գործունեության մտահղացումներին, ստեղծագործ նվիրումներին»:

Սվետլանա ԽԱՀՍՏՐՅԱՆ

ԸՆԹԱՅ

ԿԳՄՍ ԿԱՅՔԷՋԻ ՎԵՂԻՆԱԿՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՆ ԵՆ

Հոկտեմբերի 22-ին Ստեփանակերտի «Պոլ Էյուարի տուն»-ի ֆրանկոֆոնիայի կենտրոնում հիմնադրամի շենքում տեղի ունեցավ ԱՀ ԿԳՄՍ edu.nk.am կայքի շնորհանդեսը: Այն վարող նախարարության տեղեկատվական բաժնի ղեկավար Նարե Նիկողոսյանն ասաց, որ կայքը պետք է պատրաստ լիներ 2020թ. ամռանը, բայց պատերազմի, ապա նաև նախարարության կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների պատճառով նրա գործարկումը ձգձգվեց: Դրանով հանդերձ, հպարտանալու առիթ կա. կայքի հեղինակները մեր դպրոցականներն են Մարտունու շրջանի Հաղորտի գյուղից:

կերտական թիմին ու «Ես» կրթական հիմնադրամի ղեկավար Աշոտ Ավանեսյանին, որը



Կայքը ներկայացրին ստեղծողները՝ Հաղորտու խմբից Արև Քարամյանն ու Շուշան Մարտիրոսյանը: Նրանք նշեցին, որ իրենց խումբը՝ չորս դպրոցականներ, այն երջանիկներից են, որ առաջին են ավարտել «Ես» կրթական հիմնադրամի ուսուցման 3-րդ փուլը և կողմնորոշվել, թե ինչ մասնագիտության

րել են ծրագրավորումը: Նրանք Հաղորտիում ստեղծել են «Start Systems» վեբ-ընկերությունը և իրենց ղեկավար Աշոտ Ավանեսյանի միջոցով արդեն ստանում են պատվերներ:

Իսկ Աշոտ Ավանեսյանն ասաց, որ նախարարության կայքի ստեղծումը «Ես» հիմնադրամի առաջին լուրջ աշխատանքն է հաջողված համագործակցության արդյունքում: Կարևոր է այն հանգամանքը, որ պատվերը ստացել և հաջողությամբ ավարտել են «Ես» կրթական ծրագրի դասընթացը դեռ լրիվությամբ չզավարտած շահառուները, որոնք այսօր արդեն կես միլիոն արժողությամբ պատվերներ են ստացել և գործի կանցնեն ընկերությունը գրանցելուց հետո:



մեջ պետք է ավելի շատ խորանան, ինչպես պետք է շարունակեն իրենց ապագան և ընտ-

ԿԳՄՍ փոխնախարար Միքայել Համբարձումյանը գերատեսչության կողմից դրամական պարգև հանձնեց կայքի հեղինակներին՝ կարևորելով նաև տեղական արտադրանքին առաջնահերթություն տալու նախարարության ուղեգիծը:

ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար Միքայել Համբարձումյանն ասաց, որ ստեղծվածը աշակերտների կրթական գործընթացի նախագծային ուսուցման փայլուն օրինակ է և շնորհավորեց նախարարության ու «Ես» կրթական հիմնադրամի համագործակցության արդյունքում նման նախագիծ իրականացնելը, շնորհակալություն հայտնեց աշա-

Մարտունու շրջանի մի շարք գյուղերի դպրոցներում ստեղծել է IT խմբակներ, որոնց շահառուները՝ այդ համայնքների աշակերտներն ու երիտասարդները, տեղեկատվական տեխնոլոգիաների ուղղությամբ զարգանալու և աշխատելու հնարավորություն են ստանում:

ԱՐՊՀ-ՈՒՄ ԲԱՅՎԵՅՑ ՏԱՐԱՇԱՆՐԶԱՆԱՅԻՆ ԼԵՉՈՒՆԵՐԻ ԼՍԱՐԱՆ



«Ջենեսիս Արմենիա» հիմնադրամի և Արցախի պետական համալսարանի միջև համագործակցության ծրագրի շրջանակում նոյեմբերի 2-ին ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետում բացվեց տարածաշրջանային լեզուների ուսումնասիրման լսարան: Բացման արարողությունը կատարեցին ռեկտոր Արմեն Սարգսյանը և «Ջենեսիս Արմենիա»-ի ներկայացուցիչ Հրայր Հարությունյանը:

կազմի աշխատողների, հետագայում նաև հանրապետության այլ քաղաքացիների համար կազմակերպել անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, պարսկերեն և այլ լեզուների դասընթացներ: «Ժամանակաշրջանն այնպիսին է, որ եթե դու չես կարողանում միջազգային բուհերի հետ մեծ կապեր հաստատել օբյեկտիվ պատճառներով, ապա հնարավորություն ունենաս գոնե նրանց փորձը տեղափոխել Արցախի պետական համալսարան: Իսկ այդ փորձն ուսումնասիրելու և տեղայնացնելու համար առաջին հերթին պետք է իմանալ ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային լեզուներ», - ողջունելով երևույթը՝ ասաց ռեկտորը:

Ա. Սարգսյանն իր երախտագիտությունը հայտնեց «Ջենեսիս Արմենիա» հիմնադրամի Աբրահամ Գասպարյանի ղեկավարությամբ, որի հետ ս.թ. օգոստոսի 27-ին էլ կնքվել համագործակցության ծրագիրը, և կարճ ժամանակում խոսքը վերածվել է գործի. հիմնադրամի կողմից համալսարանին տրամադրվել են տեխնիկական միջոցներ, կոնկրետ՝ 10 համակարգիչ, մեծ հեռուստացույց, տեսախցիկ, նորոգվել և կահավորվել է լեզուների ուսումնասիրման լսարանը, գրադարանին տրամադրվել է շուրջ 230 կտոր մասնագիտական գրականություն:

Համավարակով պայմանավորված՝ պարապմունքներն առաջին կրկնամյա հեռավար կարգով: Դասընթացի մասնակիցները ԱրՊՀ բակալավրիատի տարբեր ֆակուլտետների և մագիստրատուրայի ուսանողներ են: ԱրՊՀ-ի կողմից ծրագրի պատասխանատուն բանասիրական ֆակուլտետի ղեկավար Լուսինե Մարգարյանն է: Խմբում մասնակցում է նաև բուհի լրատվության բաժնի պետ Զարինե Սառաջյանը: Ռեկտորը

մասնակիցներին հորդորեց դասընթացին վերաբերվել ամենայն լրջությամբ, քանի որ հնարավոր է, որ հետագայում մասնագետներ պատրաստողները լինեն այս խմբից:

«Ջենեսիս Արմենիա»-ի թիմի և ստեղծության ոլորտի ծրագրերի պատասխանատու Հրայր Հարությունյանը տեղեկացրեց, որ լսարանի վերանորոգումն ու կահավորումը հովանավորել են տեր և տիկին Կարո և Վարդուկ Կարապետյաններն իրենց զավակների հետ միասին, և կրում է Կարո Կարապետյանի անունը: Դասընթացները վարելու են Հայաստանում, Արցախում և արտերկրում գտնվող հիմնադրամի տարբեր լեզուների մասնագետները: Նույն օրը սկսվել են պարապմունքները: «Փորձում ենք ճանաչել մեր հարևաններին, տիրապետել նրանց լեզվին: Ինչքան լավ ճանաչենք նրանց, այնքան ավելի պաշտպանված կլինենք», - լեզուների ուսումնասիրման կենտրոնի ռազմավարական նշանակությունն այսպես գնահատեց «Ջենեսիս Արմենիա»-ի ներկայացուցիչը:

Ավելացնենք, որ «Ջենեսիս Արմենիա»-ն զբաղվում է տարբեր նախագծերով Հայաստանում և Արցախում: Այն գիտահետազոտական ուղեղային կենտրոն-հիմնադրամ է, որի նպատակը համահայկական մտավոր ներուժի համախմբումն է, վերլուծական, տեսական ու մեթոդական ուսումնասիրությունները գործնական դաշտ տեղափոխելը, խելամիտ, առարկայական ու երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի միջոցով այդ ներուժը ֆինանսատնտեսական ներդրումների վերածելն ու ծառայեցնելը՝ ի սպաս հայ ժողովրդի ազգային շահերի, ՀՀ և ԱՀ տնտեսական զարգացման, սոցիալական բարօրության և անվտանգային առաջնահերթությունների:

ՄԱՀ ԿՈՎԿԱՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԿԵՑ ՏԱՐԵԿԱՆ Է

Նոյեմբերի 4-ին Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց համալսարան»-ում (ՄՄՀ) հրավիրվել է մամուլի ասուլիս՝ նվիրված բուհի կովկասագիտության կենտրոնի 6-ամյա գործունեությանը:



Ողջունելով ներկաներին՝ ՄՄՀ ռեկտոր Դոնարա Գաբրիելյանն ասաց, որ կովկասագիտության կենտրոնի ստեղծումը և ուսումնական ծրագրում «Կովկասագիտություն» մասնագիտության ներառումը պայմանավորված էին տարածաշրջանային մարտահրավերներով, դրանցից բխող՝ մեր երկրի խնդիրների լուծման հրատապությամբ՝ ՄՄՀ-ի գիտակրթական ծրագրերի կազմակերպմամբ, մասնավորապես, միջազգային օտար լեզուների հետ մեկտեղ հարևան երկրների լեզուների՝ ադրբեջաներենի ու պարսկերենի ուսուցմամբ:

Ժամանակից սկսած՝ կենտրոնի կողմից Արցախում և ՌԴ-ում կազմակերպվել են մի շարք կլոր սեղաններ, միջազգային գիտաժողովներ, ընդ որում, կենտրոնը համագործակցում է ՌԴ, Հարավային Օսիայի, Աբխազիայի առաջատար գիտաուսումնական հաստատությունների հետ: Այդ բոլոր միջազգային գիտաժողովների նյութերը տպագրվել են առանձին ժողովածուներով և հասանելի են լայն հանրությանը. տեղադրված են էլեկտրոնային հարթակներում: Վերջերս մշակութային ժառանգության պահպանման հանրային խորհրդի և «Գոլոս Արմենիա» շաբաթաթերթի հետ համատեղ նախաձեռնել են «Ադրբեջանը՝ քաղաքակրթության թշնամի» մատենաշարի հրա-

տարակումը, որի առաջին համարի շնորհանդեսը կլինի շուտով: Բացի գիտաժողովներից, կլոր սեղաններից կենտրոնն առանձնակի ուշադրություն է դարձնում մասնագիտացված ցուցահանդեսների կազմակերպմանը: Մինչև 2020թ. 44-օրյա պատերազմն էլ տարբեր ցուցահանդեսներ են կազմակերպվել, իսկ պատերազմից հետո դրանք վերաբերել են Ադրբեջանի ագրեսիային, Արցախի տարածքների օկուպացմանը և մշակութային ցեղասպանությանը:

Հ. Ավանեսովը տեղեկացրեց, որ առաջիկայում նույնպես կազմակերպվելու են միջազգային գիտաժողով՝



նվիրված Կովկասյան տարածաշրջանի արդի հիմնախնդիրներին, դրանցից բխող մարտահրավերներին ու հնարավորություններին:

Կենտրոնի գիտակրթական նպատակներն իրականացնելու համար հավաքագրվել է կովկասագիտության հետ կապված հարուստ գրականություն՝ տպագրված ՀՀ-ում և արտերկրում: Այդ շարքը լրացնելու եկավ կենտրոնի աշխատակից Արինա Գրիգորյանի կողմից վերջերս ադրբեջաներենի ձեռնարկի հրատարակումը՝ նախատեսված ինչպես ուսանողների, դասախոսների, այնպես էլ լայն հանրության համար:

Կովկասագիտության կենտրոնի՝ այլ գիտական հաստատությունների հետ համագործակցության արդյունք են ՌԴ և ՀՀ ճամաչված մասնագետների դասախոսությունները ՄՄՀ-ում, ինչպես նաև ուսանողների մասնագիտական փորձուսուցման անցկացումը դրվի գիտակրթական հաստատություններում: «Այն ամենը, ինչ մեր կենտրոնի կողմից հրատարակվել է, համարում են տեղեկատվական զենք մեր լրատվամիջոցների, դիվանագետների կողմից օգտագործելու համար», - ասաց Հ. Ավանեսովը:

Ինչպես վկայեցին ՄՄՀ ռեկտորը և կովկասագիտության կենտրոնի տնօրենը, ՄՄՀ-ն ողջունում է տարածաշրջանային խնդիրների հետ կապված տարբեր համալսարանների կողմից կազմակերպվող միջոցառումները և պատրաստ է սիրով համագործակցել նրանց հետ, առանձնապես՝ Ադրբեջանի կեղծարարությունների նվիրված քննարկումներին:

Մեֆ. լրատվություն

ՀՈՒՅ-ԵՐԵԿՈ

ԻՆՉՊԵՆ ԿԵՆԱԿՈՐ ՀԱՆՔԱՅ ԱՍՏՂ՝ ՄԵՆՔ ԱՐԵՆԻ ԼՈՒՅԱՆ ԴԵՐ ԵՐԿԱՐ ԿՏԵՆՆԵՆՔ



Ոչ սովորական համերգ՝ ոչ սովորական երեկոյին և այն նվիրված էր 44-օրյա պատերազմի նահատակ Արեն Միրզոյանին: Ձևավորված ցավ կար այդ երեկոյին Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի դահլիճում: Անգամ նրան չճանաչողներն էին թաց աչքերով լսում բեմից ելույթ ունեցողներին, որոնք հուզմունքով պատմում էին դրվագներ պատանի Արենի դարձրած չարաճճի առօրյայից, հիշում մաթեմատիկա առարկայից պատանու ունեցած հաջողությունների մասին և, իհարկե, շեշտում Արենի անուրանալի երաժշտական տաղանդը:

Հոր՝ ճանաչված լրագրող Կարեն Միրզոյանի խոսքով՝ Արենը տաղանդավոր էր բոլոր ոլորտներում: Նա հրաշալի կիթառ էր նվագում, մասնակցում մրցույթների ու համերգների, նույնիսկ համերգներով հանդես էր ելել Ստավրոպոլում: Մաթեմատիկայի ու ֆիզիկայի դպրոցական ծրագիրը նրան տրվում էր առանց որևէ դժվարության: Արենն իր կարծ կյանքում շատ բան է հասցրել անել. մասնակցել է բազմաթիվ մրցույթների ու օլիմպիադաների: Չկար մի ոլորտ, որով հետաքրքրված չլիներ, պրպտող միտք ուներ, մշտապես զբաղված էր որոնումներով: Երևի ճանաչված գիտնական կդառնար, եթե թշնամու անարգ զննարկ չզտներ զինվոր-ուսանողին:

Արենի ապրած օրերի յուրաքանչյուր ակնթարթ մոր՝ Լիլիթի համար կյանքը լուսավորող պայծառ շող է, որ փոխանցվեց ներկաներին.

Արենը մեր առաջնեկն է և տան առաջին թռնակը: Նրանով բոլորն էին զբաղվում՝ տատիկները, պապիկները, քեռիները: Լուսավոր, զանգրահեր տղա էր, կրակոտ, փայլուն աչքերով մանուկ, շատ շարժուն: Փոքր ժամանակից շատ ինքնուրույն էր, երկու տարեկանում մանկապարտեզ ուղարկեցինք, այնտեղ էլ բոլորի ուշադրության կենտրոնում էր: Սիրո և ուշադրության պակաս նա երբեք չի զգացել թե՛ մանուկ հասակում, թե՛ արդեն մի քիչ մեծ: Ընդունակ էր, ամեն ինչ արագ էր սովորում և բացառիկ հիշողություն ուներ: Պապիկը մաթեմատիկական ունակություններն էր զարգացնում, և շատ փոքրուց սկսել էր թվերի հետ աշխատել՝ հաշվել, գումարել, բազմապատկել, բաժանել: Երբ փոքրուց երեխաներն ավագով էին խաղում, նրան ընդամենը հետաքրքրում էր, թե քանի ավագահատիկ կա: Նստում և սկսում էր հաշվել: Դեռ սկսեց ամեն ինչ ձեռքի ափով չափել. թվերը նրա տարերքն էին: Մեծ թվեր էր գրում ու գումարում, բազմապատկում: Հաշվում էր ամեն ինչ՝ աստղերը, քարերը, ավազը, մագերը, նույնիսկ՝ ժամանակը: Նրան մեծացրել ենք «Դու ամեն ինչ կարող ես» կարգախոսով, և նա մշտապես համոզվում էր դրանում: Երբ Գորիսից տեղափոխվեցինք Ստեփանակերտ, և առաջին անգամ Տատիկ-Պապիկի հուշարձանը տեսավ, շատ տխրեց՝ ասելով. «Իսկ նրանց համար ցուրտ չի՞ դրսում, նրանք թռնակներ չունեն»։ Եվ մի օր Ստեփանակերտի մանկական հիվանդանոցի ճանապարհին տեսավ նրանց քարե թռնակներին մատարանին մատած: Ուրախացած ասաց. «Նրանք թռնակներ ունեն, ուղղակի ուրիշ տեղ են»: Հայրիկից անընդհատ պահանջում էր հորինած հեքիաթ-պատմություններ, չէր նկատում, որ կեսից համարյա ինքն էր հորինում: Նկարագարող մանկական Աստվածաշունչ ունեինք, անընդհատ կարդալ էր տալիս «Սամսոն և Դալիլա» էջը և ամեն անգամ անկեղծ

տխրում, որ Սամսոնին կարողացան հաղթել: Մի օր էլ ասաց. «Ես իմացա, Սամսոնի ուժը մագերի մեջ չափեց է լինել, այլ պիտի մտքով ուժեղ լինել, որ չկարողանային ուժից գրկել»: Երբ դպրոց գնաց, շատ արագ արդեն մտքում բազմապատկում էր երկնիչ, եռանիչ թվեր: 4-րդ դասարանում «Կենդուրու» մրցույթում Արցախից հաղթող ճանաչվեց, Երևանից հրավիրեցին մարզերից յուրաքանչյուրից մեկ մրցանակակիր 33 նախագահի նստավայր, նաև կաթողիկոսի օրհնությունը ստացավ: (Մյո մասին «Լուսայոց»-ը առաջին էջում զետեղել էր Արենի մասին Նյուք՝ նրա լուսանկարով, որտեղ նա ասել էր, որ նպատակ ունի ազատագրել Արևմտյան Հայաստանը (խմբ.))։ Յոթ տարի Շուշիում ապրեցինք:

Բայց նա դպրոց Ստեփանակերտում էր գնում: Հայրը «Ակունք» թերթի խմբագիրն էր, նրա հետ ամեն առավոտ իջնում էր Ստեփանակերտ: Երաժշտական դպրոց ընդունվեց՝ շեփորի դասարան: Ձաքար Քեչիշյանի երգչախմբում էլ էր երգում: Առավոտները Շուշիի մեր պատշգամբից Արցախի հիմնը էր նվագում: Այն ժամանակ Շուշին գունամկոր էր և հայկական, քանի որ այնտեղ Արենի նման երեխաներ էին ապրում: Շուշիի օրը սառն էր, և նա շատ էր հիվանդանում անզինայով ու դժվար էր տանում, ուստի երեխա չէր: Բայց մեծանալն իր համար նպատակ դարձրեց, կշեռք էր գնել, որ Երաժիշ հետևի, իրեն ստիպում



եր ուտել, ուտելիքի կալորիաներն էր հաշվում: Իր համար հատուկ սննդակարգ էր մշակել, շատ էր ուզում մեծանալ, սկսեց ինքնուրույն մարզվել, կոփվել և մի քիչ թափ առավ, բոյովացավ, առավոտ-երեկո բոյ էր չափում և՛ բոլորիցը: Ով գալիս էր տուն, կշռում էր, բոյը չափում, ինչ-որ գործակիցներ որոշում իր համար: Պատածողի վրա մարզումի գնալուց էլ տետրով էր գնում, նշումներ անում: Եվ երբ մեծանց էր բոյովացավ, մի քիչ հանդարտվեց: Մաթեմատիկայից ուժեղ էր, և տեղափոխեցինք ֆիզմաթ դպրոց: Նրա ձեռքերը մշտապես զբաղված էին. կամ կիթառ էր նվագում, կամ կուրիկ-նուրիկ հավաքում, կամ մարզվում էր: Եվ ամեն ինչ շատ արագ էր անում՝ ուտել, քայլել, սովորել, խանութը վազելով էր գնում, որ հետո արագ մտնի սենյակ ու իր գործերով զբաղվի: Տճից այնքան հաճախ չէր դուրս գալիս. ինքն իր հետաքրքրություններն ուներ. երաժշտություն էր լսում, նվագում, ֆիլմեր դիտում, ֆիզիկա և մաթեմատիկա էր պարապում: Ֆիզիկա առարկայից դպրոցական բրեյն-ռինգի թիմում էր: Մրցանակակիր թիմերին տարան Բյուրակահի աստղադիտարան, և այնտեղ գնալուց հետո որոշեց, որ աստղագետ պիտի դառնա: Չնայած մաթեմատիկայից ավելի ուժեղ էր, բայց ֆիզիկան նրան ավելի էր հետաքրքրում, և որոշեց Երևանի պետական համալսարանի այդ բաժինը ընտրել: Շտապում էր չափահաս դառնալ, ամեն մի փոքր քայլով շատ էր ուրախանում. ամենագիտ ստացավ, ուրախացավ, հեղինակային երգի ակումբի հետ Ստավրոպոլ մեկնեց, հասցրեց ընդհանուրների մասնակցել: Համալսարան ընդունվեց և

անմիջապես բանակ գնաց, ասաց՝ շուտ գնամ, որ շուտ գամ: Արդեն բանակում իմացավ, որ անվճար է ընդունվել, որ կրթության նախարարությունը կրթաթոշակ է նշանակել՝ ամսական 50 հազար դրամ ֆիզիկա և քիմիա ընտրած ուսանողներին: Անհամբեր սպասում էր իր ուսանողական կյանքին: Պատերազմի ընթացքում ծառայության երեք ամիսը լրացավ: Դրանից մի քանի օր անց՝ 100-րդ օրը գոհվեց: Մինչ զինվոր դառնալը շատ շրջեց Արցախի գործառնարով՝ զինվորների համար երգելով, խրախուսելով: Տարբեր գյուղերում տարբեր փառատոների էր մասնակցում և կարծես թե պակասող գյուղերի ցանկը լրացրեց պատերազմի օրերին՝ իր զինակիցների հետ պաշտպանելով:



Ինչպես հեռավոր հանգած աստղի լույսը մենք դեռ տեսնում ենք, այդպես էլ Արենի լույսը դեռ երկար կտեսնենք: Արենի ուսուցիչները, համադասարանցիները, բոլոր ճանաչողներն առհասարակ խորին հարգանքով են խոսում նրա մասին: Արենը սովորել է Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցում: Դասվար Քանաքարա Արահամյանը հիշողություններ ներկայացրեց իր շարժում, խելացի սանիկի մասին. «Առաջին օրերին նկատողություն էի անում, բայց հետո տեսա, որ նրա ամեն մի շարժման, չարության մեջ կա մի խելացի միտք, որը գնահատեցի: Խոսես մոլորակներից՝ նա քեզ



կհաղթի, խոսես աստղերից, աշխարհամասերից, գետերից, օվկիանոսներից, ինչից խոսես, քեզ կհաղթի, ամեն ինչ գիտեր: Երկրորդ դասարանում երկնիչ, եռանիչ թվերը բանավոր բազմապատկում, բաժանում էր: Մի օր ասացի՝ 3-րդ կուրսում ես ինտեգրալ, դիֆերենցիալ եմ անցել, կուզե՞ս սովորեցնեմ: Թե՛ հա, բայց դա չգիտեմ: Նրան մի փոքր բացատրեցի ու մի քանի վարժություն տվեցի՝ մտածելով, որ չի կարողանալու լուծել, թող զբաղվի: Հրաշք... Տղան ճիշտ լուծեց և անընդհատ պահանջում էր՝ ինչ եմ ստացել: Ուժեղ շախմատ էր խաղում դեռ մինչև «Շախմատ» առարկան դպրոց մտնելը: Մենք հանձնեցինք Արենի՝ կորցրինք երևի հանձնարել գիտունի: Նա անպայման մաթեմատիկոս կդառնար, աստղագետ, լեզվաբան: Ամեն ինչ նրա մոտ գերազանց էր ստացվում»: 4-րդ դասարանն ավարտելով՝ Արենը փոխադրվեց 5-րդ դասարան, որի դասղեկը Լուսինե Արզանգուլյանն էր: Նա էլ ներկայացրեց իր աշակերտի մասին դրվագներ՝ ելույթն

ավարտելով «Արենը մեզ պատգամեց՝ ինչպես պիտի ապրի հայրը» խոսքով և դպրոցի տնօրեն Լուսինա Մարտիրոսյանի կողմից Արենի հորը հանձնեց «Անմահ տղաների ոսկե մատյանի մի ոսկե էջ՝ մի հուշաթերթ 44-օրյա պատերազմի անմահ հերոս Արեն Կարենի Միրզոյանին» հուշաթերթը:

Թե՛ մարտից առաջ Արենը գուցե մի պահ հիշել է սիրելի մայրիկի տաքուկ գրկի, քերթ համբույրի մասին, հիշել է հայրենի տունն ու ընկերներին, բայց նրա մտքում ու աչքերի առաջ հոշոտվող հայրենիքի վտանգված ճակատագիրն էր: Նա անձնուրաց նետվեց մարտի, իր ամենը արյունը խառնեց հայրենի հողին ու ավելի սրբացրեց այն՝ անմահացրեց իր անունը՝ մեր սրտերում դաջելով իր հավերժ ներկան: Նա ներկա է բոլոր դասերին, իր անօրինակ սխրանքով դարձել է օրինակ ընկերների և հետագա սերունդների համար:

Երեկոյին նաև դաարձկերուհին հուշեր ուներ: Արենի ֆիզմաթ դպրոցի դասղեկ Լիանա Սառաջյանը պատմեց. «Արենը մի քիչ ուշ ընդունվեց ֆիզմաթ, մինչ այդ լսել էի, որ դասարան պիտի գա շատ խելացի, անչափ չարածճի երեխա: Ֆիզմաթում այդպես էլ չտեսանք նրա չարածճիությունները: Տեսանք միայն նրա խորաթափանց միտքն ու փայլուն գնահատականները: Իրեն վերապահված իրավունքով Արենը պահանջում է վերականգնել բազմաթիվ հայրենիքը: Արենը ներկա կլինի իր դասընկերների հավաքին, որովհետև առանց նրա ու իր կիթառի հետաքրքիր չի լինի: Ընկերների ականջին նրա կիթառի հնչյունները ու «Մարտիկի երգը» կհնչեն, կտիրի թափածո, կծավալվի կարոտը՝ ափեափ լցնելով բոլորի սրտերը, բայց կիշի մի զգացում, որ կոչվում է հպարտություն: Հպարտ ենք, այո, բայց կորստյան ցավը անդունդներից խորն է, քանզի ժամանակ առ ժամանակ հայոց բոլոր դպրոցներում ավելանում են պատվո վահանակի «բնակիչները»՝ հավերժ ներկաները: Խոնարհվեցե՛ք կյանքից առավել պատիվը գերազանցող Արենի հիշատակի առաջ, փառք ու պատիվ բոլոր հերոսներին ու նրանց մայրերին»:

Երգերն էլ, որ հնչում էին հուշ-երեկոյին Շուշիի հեղինակային երգի համույթի անդամների կատարմամբ նրա ղեկավար Ջուլիետա Առստամյանի գլխավորությամբ, նույնպես հիշողության դրվագներ էին այն երանելի օրերից, երբ Արենը ևս նվագում էր երգում էր հիշյալ համույթում: Անչափ հուզիչ ու բնութագրական էր ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Արախանյանի խոսքը.

Արեգակ, երկինք, անսահմանություն, հեքիաթ, կարոտ երաժշտության նկատմամբ, շտապել մեծանալ, թվեր... Իսկապես, Արենի նման ունենց ուսումնասիրանի, քուլտուրի, բուհերի 100-ից ավել ուսանողներ 33 և Արցախի գիտակրթական հաստատություններում, բայց ես չգիտեմ ինչու՝ առանձնացրել եմ Արենին: Իմ աշխատասենյակի աջ պատը հիմա զարդարում է նրա լուսանկարը, որը դարձել է բոլոր նահատակված ուսանողների հավաքական կերպար: Նա ընտրել էր ֆիզիկան, և շատ քչերը կարող են հասկանալ, թե ինչ է թաքնված դրա տակ: Ու շատ քչերը կհասկանան նաև, թե ավագահատիկների մեջ նա ինչ էր որոնում: Բառեր չկան ասելու ծնողներին՝ Կարենին ու Լիլիթին. ես ընդամենը կարող եմ մի բան ասել՝ մեր և ձեր ընտանիքներին կարող է սփոփանք լինել Քրիստոսի հարությունը»:

...Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի բակում Արեն Միրզոյանի հիշատակին խնամքով է տնկվել: Կարծ էր, այո, Արեն Միրզոյանի կյանքը, սակայն նրա մասին կարելի է անվերջ խոսել: Եվ կխոսեն, անշուշտ, միշտ ցավով, հպարտությամբ ու կարոտով:

ՉՈՒՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

ՈՒԹ ՏԱՐԻ՝ ԴԵՄ ՆԱՏԱԾ, ՏԱՆԿԻՆԳ ՏԱՐԻ՝ ԿՈՂՔԻՍ



Տասնամյակներ առաջ էր: Մտել էի Մարտունու գրախանութ՝ նոր ստացած գրքերը աչքի անցկացնելու: Այո, կար ժամանակ, երբ մարդիկ մտնում էին գրախանութներ գրեթե նույն հաճախականությամբ, ինչ՝ պարենային խանութներ: Մարդիկ գզում էին հոգեկան պարենի քաղց («Կգա ոգու սով...», Ավ. Իսահակյան), և այդ պահանջը լրացնող գրքերն էին:

Մի շատ փոքր գիրք վերցրի, հեղինակը սիրունիկ, հմայիչ աղջիկ էր՝ Լուրսենա Գրիգորյանը: Թերթերով գրքույկը՝ կանգ առա մի ոտանավորի վրա: Այդ ոտանավորից մի տող ոչ միայն չեմ մոռացել, այլև հաճախակի եմ մտաբերում. «Ա՛խ, թե աշխարհում մի հնար լիներ, որ կյանքի ուղին կրկնվեր նորից...»: Դիմա, երբ կյանքս մայրամուտի շողերով է պարուրված, գզում եմ, որ այդ հնարը կա, պարզապես պետք է նստել գրասեղանի առաջ և մեկ-մեկ թերթել, վերհիշել կյանքիդ ամացած օրերը, ապրել մասնկտրված հուշերով, մտովի հանդիպել հասակակիցներիդ, քեզինք մեծերին, որոնցից շատ բան ես սովորել, քեզինք փոքրերին, որոնք ավելի շատ զարմանալու առիթներ են տվել: Եվ կտեսնես, որ առանց մեծ ճիգերի ապրածդ կյանքը՝ ինչպես հիշողության շտեմարան, հառնում է քո դեմ, և դու մեկ անգամ ևս ընթրշխուն ես կյանքիդ երանելի պահերը: Շատ անգամ էլ նկատում ես, որ առանց մեծ ճիգերի ապրածդ այդ նույն կյանքն ինքնին բաժանվում է հատվածների, նրանց կոչես-չկոչես անուններով՝ մանկության, դպրոցական, ուսանողական, աշխատանքային տարիներ, միևնույն է, այդ բաժանումը կա: Սակայն մեզ՝ հայերիս կյանքում (չգիտեմ, կա՞ն մնացած ուրիշ ազգեր) ուրվագծվում է նաև պայքարի, պարզապես ֆիզիկական գոյության համար պայքարի շրջան: Իմ սերնդի մարդկանց կյանքից եթե առանձնացնենք մանկության տասնամյակը, ապա կստացվի, որ մենք մեր կյանքի կեսը ապրել ենք պայքարելով: Բայց արի ու տես, որ այդ պայքարի տասնամյակները (բերած տառապանքներով, անդառնալի կորուստներով հանդերձ) մեզ տրտնջալու առիթ չեն տալիս, դեռ ավելին, փորձում ենք ուրվագծել, դարձնել մեր կյանքի կարևոր, առավել արժանավոր հատված: Դեռ քան այդպես էլ կա, ուրիշ կերպ չի էլ կարող լինել. դա պայքար էր հանուն հայրենիքի, հանուն հարատև և ազատ կյանքի: Երկի թե Աստված մեզ մայրական կաթի հետ հենց ազատ ու խաղաղ ապրելու և մնալ կյանքի համար հավերժ մաքառելու սնունդ էր խառնել, ու մոր ստիմուլներից այդպիսի կաթ ծծելը մեզ համար դարձել էր հաճելի, դարձել էր գորուբուն տվող, գորուբյան աղբյուր էր դա:

Մտովի թերթում եմ կյանքիս օրերը, բայց արի ու տես՝ վերջին 30 տարիները որքան էլ փորձում եմ արագ շրջանցել (մեր գլխին եկած արհավիրքները չմտաբերելու համար), չի ստացվում: Գուցե նրանից է, որ այդ տարիներին ես իմ սաներին վերստին հանդիպեցի արդեն դպրոցից դուրս՝ կյանքի բովում, հայրենիքի համար պայքարի թատերաբեմում:

Մեզ համար ուրվագծվում էր մի նոր դպրոց, որտեղ դասերը և՛ շատ նման են, և՛ շատ տարբեր: Գուցե թե նպատակներն են շատ նման իրար, սակայն նպատակներին հասնելու ճանապարհներն այլ բովանդակություն են ստանում:

Գրասեղանիս առաջ նստած՝ փորձում եմ իմ հիշողության մարմրող ծավերից վեր հանել հուշերի անկրկնելի պատահիկներ Միերի, Արթուրի, Վազգենի ոչ միայն դպրոցական տարիներից, այլև նրանց մանկության, պատանեկության կյանքից ընդհանրապես: Նրանք իմ հայացքի տակ են մեծացել՝ սկսած բողբոջ տարիքից մինչև հասունամյակը: Ավա՛ր, նրանք դարձան մեր հերոսական պատմության փառավոր էջեր գրողներից մեկը, դարձան մշտավառ փարոսներ, որոնք երկնքից պետք է հսկեն և լուսավորեն նոր սերնդի անցնելիք ուղին, դառնան նրանց կյանքի խորհրդամիջը: Շատ է պատահել, որ շրջանավարտներին հորդորել եմ (ելնելով նրանց կարողություններից) ընտրել այս կամ այն մասնագիտությունը՝ հաշվի առնելով նախասիրությունները և, ինչու չէ, նաև դպրոցում տեղացի մասնագետների պակասը (մի մասը ոչ տեղացիներ են):

Միեր ԱՐՅԱՆԸ պատմության ֆակուլտետի ուսանող էր, երբ դպրոցում ընդունվեց աշխատանքի: Ութ տարի դիմաց էր նստած, շուրջ 15 տարի կողքիս՝ աշխատանքային ընկերոջ կարգավիճակով: Ինչպես դպրոցական, այնպես էլ աշխատանքային տարիներին պրպտող էր: Գիտելիքները, մասնագիտական կարողությունները, աշխատասիրությունը, ստեղծագործական ունակությունները գնահատող և առաջ տանող, ապագայի նկատմամբ լավատեսորեն տրամադրված: Դեռևս 2016թ. ապրիլին, երբ թուրք բարբարոսները փորձ արեցին ստուգել մեր ռազմական հզորությունը (Ղարաբաղի հարցը ռազմական ճանապարհով լուծելու գաղափարը ազդեցիկ էր երբեք էլ չեն հանել օրակարգից), Միերն ու Գրիշան առանց վարանելու մատյանը դրեցին դարակը և ներկայացան զինկոմիսարիատ: Այդ հրաշունչ օրերի մասին Գրիշան պատմել էր հետևյալը. «Միերը ոչ միայն իմ աշխատանքային ընկերն էր, այլև մանկության, դպրոցական, չեմ վախենում վարանել սաել՝ նաև մարտական: Գիշտ է, մենք տարբեր ստորաբաժանումներում ենք եղել, բայց հայրենիքի պաշտպանության ուղին ռազմի դաշտում մեկն է՝ անմնացորդ նվիրում, պայքար մինչև մահ՝ գիտակցելով, որ հայրենիքը ոչ մի բանի ստորադասել չի կարելի: 2016-ի ապրիլին էլ մենք նույն օրը մատյանները թողեցինք դարակում և առանց մի կարգիս հրաժեշտ տալու (ժամանակ չկար) ընկերներին, աշակերտներին, գնացինք զինկոմիսարիատ, այնտեղից էլ՝ մարտի դաշտ: Թվում էր, թե համոզված էինք, որ պատերազմը երկար չի ձգի (վստահ էինք մեր և՛ ռազմական հզորության, և՛ ոգու արիության վրա), և շուտ կվերադառ-

նանք: Բարեբախտաբար այդպես էլ եղավ, ճիշտ է, շուրջ երկու ամիս մնացինք դիրքերում, բայց հրանոթները սպասածից շուտ լռեցին:

Ամիսը է մոռանալ 2020թ. սեպտեմբերի 27-ի առավոտը: Ողջ հանրապետությունը (ոչ միայն սահմանները) վեր էր ածվել ռազմի դաշտի: Վտանգի մասշտաբները հաշվի առնելով, նաև ռազմաճակատի ընդհանուր ձգվածությունը (իսկ դա մեր հանրապետության ողջ պետական սահմանն է), զինկոմիսարիատի գործառույթները պահեստազորի մոբիլիզացման ուղղությամբ իրականացվում էին հնուշինական գյուղում: Մինչև որոշակի պարզաբանումներ մտցնելը մեր հետագա անելիքների շուրջ, ժամանակն ինքնին հոսեց: Արդեն կեսգիշեր էր: Միերի հետ նստել էինք մի սեղանի շուրջ. դպրոցական մատարան էր: Մեզ այնքան հարազատ թվաց այդ մատարանը, չնայած ընդամենը մի քանի ժամ է, ինչ բաժանվել էինք նրանից... Գուցե նրանից էր, որ մի քանի օրում առանց բարձրաձայնի հուշում էր, որ կարող է՝ վերջին անգամ ենք նստում այդ նստարանին: Զրուցեցինք երկա՛ր, շատ երկար, դեպքեր հիշեցինք մեր մանկության, դպրոցական, համատեղ աշխատանքային տարիներից: Դա շատ երանելի պահ, անզուգական րոպեներ էին, որ դաջված մնացին իմ հիշողության մեջ:

Մարմինս դողում էր, երբ գզում էի, որ դա մեզինք յուրաքանչյուրի համար կարող է վերջինը լինել: Ավա՛ր, այդպես էլ եղավ:

Ծանր աղջամուղջն իր քերի տակ էր առել շրջապատը, լեռների գագաթները թաղվել էին անթափանց մշուշի մեջ, մթության հետ մի անբացատրելի տազնապ սողոսկել էր հոգիս: Շտապեցի հեռախոսով կապվել եղբայրներիս, ընկերներիս հետ: Միերի հեռախոսը չէր պատասխանում, հոգուս տագնապ ավելի սաստկացավ: Ռազմաճակատի հարավ-արևելյան հատվածում կատաղի մարտեր էին գնում, անօդաչու թռչող սարքերն առանց դադար առնելու մահ ու վախճանություններ էին սփռում ամենուր: Մինչ ես մտորումների մեջ էի, հեռախոսը գնաց: Ինձ թվաց՝ ոչ թե հեռախոսի զանգ է, այլ չարագույժ բոթ ազդարարող սև ազնավի կզինք: Միերի գոհվելու բոթն էր գոհումս հեռախոսը: Մի պահ մոռացա, որ հրանոթի հաշվարկը հրամաններն ստանում էր հրամանատարական կետից: Դրանք էին (հաշվարկի հրամանատարն է) կրակել թշնամու դիրքերի ուղղությամբ: Դրանք փողը կրակ էր ժայթքում. դրանք վրեժի ու ատելության արկեր էին»:

Հողը, որի վրա մենք քայլում ենք, անվանում ենք Զայրենի հող: Զայրենիքը, որտեղ մենք ապրում ենք, անվանում ենք Մայր հայրենիք: Ինչպես Զայրենի հողը, այնպես էլ Մայր հայրենիքը հարատևելու համար շատ հաճախ բոլորիս արյունն են պահանջում: Եվ առանց վայրկյան անգամ հապաղելու տալիս ենք այդ արյունը: Ու դրա մեջ է ամփոփված հայրենասիրության ողջ գաղափարը: Դրանում այդ գաղափարի իրենց կյանքը զոհեցին Միերն ու նրա պես հազարավորները: Իսկ եթե պատահական մի հնարքով կյանքի ուղին կրկնվի նորից, մենք առանց վարանելու կրկին կգնանք ողջակիզման ուղիով:

Լեոն ԱՊԱՔԵԼՅԱՆ
գ. Եմիշնան

Խոսք հիշատակի

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՈՎՍԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ



ԱՅ ԿԳՄՍ նախարարությունը խոր վշտով հայտնում է ֆ.մ.գ. դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ, ԱրՊՀ վաստակաշատ դասախոս Ալեքսանդր Խաչատրյանի մահվան մասին:

Ա. Խաչատրյանը ծնվել է 1949 թվականի հոկտեմբերի 6-ին ԼՂ Ասկերանի շրջանի Խնապատ գյուղում:

1967թ. ավարտել է Խնապատի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժինը: 1972թ. ԵՊՀ-ն ավարտելուց հետո նրան ուղեգրով աշխատանքի են նշանակել Զայկական ԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտում, որտեղ նա իրեն դրսևորել է որպես աշխատասեր, պարտաճանաչ, բարեխիղճ աշխատող: 1973 թվականից մինչև 1975 թվականը սովորել է Զայկական ԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում: Գիտական ղեկավարն էր ԶՊ Ակադեմիկոս Լ.Ա. Աղալովյանը:

1976 թվականից մինչև 2003 թվականը Ա. Խաչատրյանը աշխատել է ԶՀ գիտությունների ազգային ակադեմիայի մեխանիկայի ինստիտուտում՝ նախ որպես կրտսեր, ապա՝ որպես ավագ գիտաշխատող: 1981 թվականին պաշտպանել է թեկնածուական և 2001 թվականին՝ դոկտորական ատենախոսություն և ստացել նախ՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի, այնուհետև՝ դոկտորի գիտական աստիճան:

2018 թվականի սեպտեմբերից Ա. Խաչատրյանը կրկին աշխատում է մեխանիկայի ինստիտուտում՝ որպես առաջատար գիտաշխատող:

2003 թվականի սեպտեմբերից մինչև 2018 թվականը աշխատել է Արցախի պետական համալսարանում: 2003 թվականից մինչև 2008 թվականը եղել է ԱրՊՀ գիտական քարտուղար, իսկ 2010 թվականի մարտից մինչև 2017 թվականի հունվար՝ ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնի վարիչ: Միևնույն ժամանակ դասավանդում էր «Նյութերի դիմադրություն», «Տեսական մեխանիկա», «Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ» դասընթացները և «Դասական օրթոգոնալ բազմանդամներ» հատուկ դասընթացը:

ԱրՊՀ-ում աշխատանքի անցնելու առաջին իսկ օրից նա իր գիտելիքների ու փորձառության շնորհիվ կարողացել է նպաստել մայր բուհի ծաղկմանն ու բարգավաճմանը: 2005 թվականի հունվարին նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում «Մեխանիկա» մասնագիտությամբ: 2003 թվականից մինչև 2017 թվականը բազմիցս ընտրվել է ԱրՊՀ գիտական խորհրդի անդամ, Արցախի գիտական կենտրոնի գիտական խորհրդի անդամ, ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական ֆակուլտետների խորհուրդների անդամ:

2014 թվականին ԼՂՀ Նախագահի հրամանով Ա. Խաչատրյանին շնորհվել է «Լեռնային Ղարաբաղի Զանապետության գիտության վաստակավոր գործիչ» պատվավոր կոչում: Նա կարողանում էր երիտասարդների մեջ ձևավորել գիտությանը զբաղվելու ձգտում: Նրա ղեկավարությամբ ու անմիջական օգնությամբ ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնի երեք երիտասարդ դասախոսներ (Գ. Պետրոսյան, Ն. Սարգսյան, Եվ. Բալասանյան) պաշտպանել են գիտական թեզեր և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Նրա հետազոտությունների արդյունքները հրապարակվել են ավելի քան 50 գիտական հոդվածների տեսքով, որոնք տպագրվել են Զայաստանի Զանապետության և արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում ու միջազգային գիտաժողովների նյութերում: Ա. Խաչատրյանը երեք ուսումնական ձեռնարկների հեղինակ է:

Նա պարբերաբար մասնակցել և հետաքրքիր զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում ինչպես Զայաստանում, այնպես էլ արտերկրում:

Ա. Խաչատրյանը առանձնանում էր քրտնաջան աշխատանքով, վճռակամությամբ, գիտական հետազոտություններին լիակատար նվիրվածությամբ: Օժտված էր մարդկային բարձր հատկանիշներով:

Որտեղ էլ որ աշխատել է, վայելել է գործընկերների սերն ու հարգանքը:

ԱրՊՀ գիտխորհրդի որոշմամբ համալսարանի զարգացման գործում ունեցած ավանդի համար նրան շնորհվել է «Ոսկե մեդալ»:

ԱՅ ԿԳՄՍ նախարարությունը ցավակցում և իր զորակցությունն է հայտնում Ա. Խաչատրյանի հարազատներին ու մտերիմներին ծանր կորստի կապակցությամբ:

Ալեքսանդր Խաչատրյանի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

ԱՅ ԿԳՄՍ նախարարություն

ՆՈՐ ԷՋ

«ԱՆՏՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ ՀԱՅԻՏԱԿԱՆ ԿՐԹԱՎԱՄԱԿԻ»

ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դեռևս երկու տարի առաջ էր խոսվում Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանը իտալական մոդելով, միջազգային չափորոշիչներին համապատասխան մասնագիտական կրթական հաստատություն դարձնելու մասին, և բարեգործական կազմակերպությունների միջոցով որոշակի աշխատանքներ էին տարվում: Մասնավորապես, տարածքում կառուցվել էր կից շինություն կարի արտադրության համար, արտերկրյա բարեգործներից ստացվել էին անհրաժեշտ սարքավորումները, նյութերը, ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից համապատասխան աշխատանքներ էին տարվում հանրակրթական դպրոցներում աշակերտներին ուղղորդելու նպատակով, մասնագիտությունների վերաբերյալ հայտարարություններ էին տրվում, սպասվում էր իտալացի վարպետների ժամանումը: Սակայն սկզբում covid-ը, ապա պատերազմը խափանեցին այս ծրագրի ժամանակին իրագործումը: Այն դաճառեց, սակայն կանգ չառավ: Ընդհակառակը, կյանքի կոչվեց ավելի մեծ պլանով: Եվ այսօր Ստեփանակերտում ունենք իր տեսակով նոր կրթական հաստատություն, որն անվանվում է «Անտոնիա Արսլան հայ-իտալական կրթահամալիր»: Իրավաբանորեն այն Ստեփանակերտում գրանցվել է 2021թ. հունիսի 15-ին: Ունի հինգ համահիմնադիր՝ ԱՀ կառավարություն՝ ի դեմք ԱՀ ԿԳՄՍՍ-ի, «Սի Այ Էն ԷՖ Արցախ» և ԱՄՆ-ում գործող «Քրիստոնյաները՝ կարիքի մեջ» հիմնադրամներ, իտալահայ անվանի գրող, պրոֆեսոր Անտոնիա Արսլան և ԱՄՆ-ում փիլիսոփայության պրոֆեսոր Շվոն Նաշ-Մարշալ: ԱՀ կառավարության որոշմամբ լուծարվել են հ. 4 հիմնական դպրոցը և Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանը, իսկ շենքը՝ առկա հնարավորություններով ու արհեստանոցներով, համդիսացավ այն հիմքը, որից հնարավոր էր սկսել:



Նշված ուսումնական հաստատությունների սովորույթները և ուսուցիչները տեղափոխվել են կրթահամալիր: Հիմնադիրների որոշմամբ կրթահամալիրի գլխավոր տնօրեն է նշանակվել «Սի Այ Էն ԷՖ Արցախ» կազմակերպության ղեկավար, իրավաբան-մանկավարժ Տաթև Զաքարյանը, որը ղեկավարում է նրանում ընդգրկված կրթական երեք օղակները՝ նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական (արհեստագործական): Բայց սա դեռ ամբողջը չէ: Ինչպես մեզ հետ զրույցում հեռանկարների մասին պատմեց գլխավոր տնօրենը, կրթահամալիրի կանոնադրության մեջ ներառել են նրա ընդարձակ մասնագիտությունները՝ միջին մասնագիտական և բարձրագույն կրթության կազմակերպումը, լրացուցիչ կրթական ծրագրերով մասնագետների որակավորումը, որակավորման բարձրացումը, մասնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հայ-իտալական կրթական ծրագրերի համատեղումը, Արցախի աշխատաշուկայի ապահովումը բարձրակարգ մասնագիտական կրթությամբ արհեստագործ վարպետներով և այլ համրօգուտ նախագծեր ու ծրագրեր նախաձեռնելու ու իրականացնելը:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Լ. Ղարաբանյանն այստեղ լինելով՝ իր տպավորություններն արտահայտել է հրապարակավ. «Ստեփանակերտի «Անտոնիա Արսլան հայ-իտալական կրթահամալիր»-ի արհեստագործական հոսքում գործնական պարապմունքները վարում են իտալացի լավագույն մասնագետները: Արհեստավարժ մասնագետների ու նյութատեխնիկական համապատասխան բազայի միջավայրում են ծնվում ուսումնական մոտիվացիան ու էնտուզիազմը: Սա արհեստագործական կրթության նոր ընթացք ու նոր խոսք է՝ ժամանակի պահանջներին հընթաց»:

ՆՈՐ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ՄՈՏՅՈՒՄՆԵՐ

Կրթահամալիրն ունի ավելի քան 550 աշակերտ և ուսանող, 150 ուսուցիչ ու վարչական աշխատող: Տնօրենը երեք ամիս փորձաշրջանի և մեկ տարի ժամկետով պայմանագրեր է կնքել աշխատողների հետ: «Մենք հնարավորություն ենք տվել՝ ով համապատասխանում է իր մասնագիտությանը, մնա և

աշխատի: Յուրաքանչյուրը պետք է մտածի իր մասնագիտության մեջ ավելի հմտանալու, խորանալու և որակը բարձրացնելու մասին»,- ասաց տնօրեն Տ. Զաքարյանը՝ պատասխանելով տարվող կադրային քաղաքականության մասին մեր հարցին: Ինչ վերաբերում է ուսումնական ծրագրերում ու պլաններում կատարված փոփոխություններին, նա ասաց, որ ամեն առարկայի նկատմամբ ցուցաբերվել է բժախնդիր և օպտիմալ մոտեցում: Այսպես, նկարչությունը հանրակրթական դպրոցում դասավանդում է արհեստագործականի փայտագործ վարպետը, որն այդ մասնագիտությունն ունի: Փայտագործները պետք է երկրաչափություն ավելի շատ անցնեն, վարսավիրները, հրուշակագործները, խոհարարները՝ կենսաբանություն, քիմիա: «Քանի որ մենք հիմա մեկ ընդհանուր հաստատություն ենք, փայտագործության վարպետը «Տեխնոլոգիա» առարկայի դասը տղաների հետ անցկացնում է արհեստագործականի արհեստանոցում, աղջիկների խումբն էլ «Կարի արտադրական տեխնոլոգիայի բաժնի» վարպետն է այնտեղ անցկացնում: Այսինքն՝ ամեն ինչ՝ ճիշտ ժամին, ճիշտ տեղում են սովորում: «Ռադիոլեկտրոնային բաժնի տեխնիկական շահագործում» և «Տրանսպորտային միջոցների շահագործում և վերանորոգում» բաժնիներում հիմնականում տղաներ են, որ հետագայում պետք է ծառայեն բանակում, աշխարհագրության ժամերն ենք ավելացրել, աղբեջաններն մտցրել: Մեր ծառայող տղաները 30-50 մետրի վրա են աղբեջանիցներից: Կուզենայինք այն բոլոր կուրսերում անցնել, բայց առայժմ մտցրել ենք՝ որտեղ տղաները շատ են: Թշնամին մեր լեզվին տիրապետելով՝ ավելի շատ վնասներ հասցրեց մեզ: «Պատմություն», «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաները բոլոր մասնագիտություններում թողել ենք. դրանք անկախ արհեստներից, իրենց առավելագույն տեղը պիտի ունենան: Հաջորդ տարվանից իտալերենը դպրոց կմտցնենք: 5-րդ դասարանից սկսած երեխաները կունենան խմբակների հնարավորություն տեղում ապահովված մասնագիտությունների գծով: Օրինակ, «Ռադիոլեկտրոնային սարքավորումների վերանորոգում» և «սպասարկում» բաժնիքը շատ կարևորում են: Մենք դրա խնդիր ունենք: Երեխային շահագրգռում ենք, որ դա շատ կարևոր է իր ապագայի համար»,- շարունակեց թվարկել տնօրենը:

Գաղտնիք չէ, որ արհեստագործական հիմնականում զելիս են ուսման մեջ ավելի թույլ երեխաները: Կոհիմանա՞ն նրանք այստեղի ծանրաբեռնվածությամբ: Տնօրենը հպարտությամբ նշեց, որ այս տարվա առաջին կուրսերում գերակշռում են հարվածային սովորողները: «Չենք սառն, թե 1-2 ամսում շատ փոփոխություններ կունենանք, բայց մեկ տարի հետո կունենանք բավարար, 2-րդ տարում՝ լավ, 3-րդ տարում՝ իդեալական արդյունքներ»,- համոզված է Տ. Զաքարյանը: 700 հոգանոց կոլեկտիվ, երբ պետք է և արտադրական պրոցեսները կառավարել, և կրթական գործընթացը կազմակերպել, իրավաբանություն անել, կադրային քաղաքականություն վարել, մասնագիտություն՝ հիմնադիրների հետ ու այս ամենի հետ մեկտեղ աշակերտի հոգեբանություն մշակել, նրան ոգևորել, որ տվյալ մասնագիտությունը ապագայում նրան շատ անհրաժեշտ է, խոստովանենք, շատ դժվար է: Այս դեպքում աշխատանքային օրվա ավարտը կոնկրետ ժամ չունի: Այն ավարտվում է, երբ օրվա գործերն ավարտվում են: Իսկ դա կարող է ձգվել մինչև երեկոյան ժամը 7-8-ը: Ու եթե ղեկավարը սեփական օրինակով չունի ասելիք, ուրեմն՝ այդ բոլորը խոսքեր են: «Մենք հոգնել ենք թղթի վրա բառերից, հոգնել

վարպետին: Տնօրենն ասաց, որ «Կարի արտադրության տեխնոլոգիա» բաժնում մեկի փոխարեն ստիպված են եղել երկու խումբ բացել, նաև՝ մեծերի համար: Նրանք մայրիկներ են՝ տնտեսագիտություն, իրավագիտություն, ռուսաց լեզու և գրականություն, այլ մասնագիտություններ ավարտած, եկել են սովորելու «Կարի արտադրության տեխնոլոգիա» բաժնում: Ի՞նչն է նրանց բերել այստեղ: Կարճ զրույցից այսպիսի պատասխան ստացանք. պատերազմը ցույց տվեց, որ կյանքում



գոյատևելու համար անպայման պետք է մի արհեստի տիրապետել:

Իտալացի մյուս վարպետն առանձին նստած ասեղով կար էր անում: Կախարանը, որի վրա պատրաստի հագուստներ էին, փայտագործներն են սարքել: Իտալական թանկարժեք կտորներից հագուստները ձեռքի աշխատանք են՝ ձեռքով մեքենայով արված: Որոշ ժամանակ անց ցուցահանդես կունենան, դրանից հետո կընդլայնեն արտադրությունն արդեն վաճառքի համար: Մարդիկ կարող են նաև իրենց համար պատվիրել հագուստներ: Վարպետներից մի քանի թանկ րուպետեր խլեցինք՝ խնդրելով պատասխանել, թե ինչն է նրանց բերել Արցախ, ինչ տպավորություններ ունեն:

Նրանց հետ մեր զրույցն ստացվեց թարգմանչուհի Լարա Բախշյանի օգնությամբ, որը, ինչպես պարզվեց, ինքնուրույն է սովորել իտալերեն:

ԻՏԱԼԱՍԻ ՎՈՐՊԵՏՆԵՐՆ ԱՐՑԱՆՈՒ. ԵՆՊԱՂՈՒՅՑՆԵՐ

Վիստա ԱՄՐՈՒՑԻԱ
- Միլանում աշխատում են բարձր նորաձևության տանը: Այն գտնվում է Վիստեկա փողոցի վրա, որը շատ հայտնի է Իտալիայում: Անտոնիա Արսլանի հետ ընկերացել են Ցեղասպանության հարցերով: Նրա միջոցով ծանոթացել են նաև Շվոն Նաշ-Մարշալի հետ: Անտոնիա Արսլանը և Շվոն Մարշալը ամուսնուտ հրավիրել են Արցախ: 2019թ. նա ընկերոջ հետ այցելել է Արցախ, ու ծնվել է համագործակցելու գաղափարը: Բայց covid-ը հետաձգեց: Շվոնը ինձ վրա է դրել Արցախի երեխաներին սովորեցնելու պատասխանատվությունը: Ես ինձ համար բացահայտեցի, որ հայ ժողովրդի հետ ունեն շատ մեծ ընդհանրություն: Չեք պատմության մեջ դուք շատ եք տառապել, դուք ավելի լավի եք արժանի: Ես տեսնում եմ, որ այստեղ կանայք, աղջիկները շատ մեծ ցանկություն ունեն սովորելու ու շատ հետաքրքրված են: Ժամանակ է պետք, որ նրանք սովորեն, կարևորը ցանկությունն ու ձգտումն են, որ նրանք ունեն:

Ինձ ու Ջիլիոլայի (մյուս դերձակուհին է) համար էլ սա մեծ հնարավորություն է, որ իրար հետ ծանոթանայինք: Մենք Իտալիայի տարբեր քաղաքներից ենք եկել նույն կազմակերպության միջոցով: Ես կյանքում շատ-շատ բաներ են ունեցել, նույն ձևով ուզում եմ ինքս տված լինեմ ձեզ:

ԿՐԻ ԱՐԴԵՍԱՆՈՑՈՒ

Սա և կարի արհեստանոցը: Մի խումբ կանայք, իրար գլխի հավաքված, լսում էին



ԱՐՑԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Իզոտոն ՋԻԼԻՈՒԱ

- Երկու տարի սպասում են, որ գամ այստեղ: 2019թ. իմ գործընկերուհու հետ սկսել են այս նախագիծը: Մենք այս սարքավորումներն ուղարկել էինք սինյոր Արմանդոյի միջոցով: Փայտամշակման նյութերը նա է ձեռք բերել, ես՝ այս կարի մեքենաները, նյութերը, կտորեղենը, ինչ անհրաժեշտ է ատելյեի մեկնարկը տալու համար: Ես ունեի իմ ֆիրման, 40 տարի շարունակ աշխատել են, հիմա թոշակառու են և զբաղվում են գործարարությամբ: Նաև կարում էի հարսի շորեր, որոնց արժեքը շատ բարձր է, հատուկ մարդիկ էին պատվիրում: Անցյալ սեպտեմբերին էի պատրաստվում գալ, բայց այստեղ պատերազմ սկսվեց: Իմ գործընկերոջ, որը նույնպես ուղարկել է այս նյութերը, ինձ հետ պիտի գար, սակայն առողջական խնդիրների պատճառով չկարողացավ: Իսկ ես այսօր այստեղ եմ և շատ երջանիկ եմ դրա համար: Այստեղ գալը ես համարում եմ ինձ համար մեծ նվեր:

Սանդիտո ՋԱՆԱՆՏՈՒՆԻ

- Իտալիայում ես հիմնադրում եմ նման արհեստագործական դպրոց: Մենք տարվա մեջ ունենք վերհիշելու օրեր՝ Հայոց ցեղասպանությունը և հրեաների ցեղասպանությունը: Այդ օրերից մեկին հրավիրել էինք Անտոնիա Արսլանին: Տեսնելով մեր դպրոցը, որը նաև հյուրանոցային համալիր է, ցանկացավ ծանոթանալ ինձ հետ: Նա մեզ և մեր ընկերներից մեկին հրավիրեց Արցախ: 2019թ. ընկերոջս և Անտոնիայի հետ եկել էինք: Եվ այդ ժամանակ արդեն իսկ մտածել էինք օգնել այստեղ մի դպրոց բացել, որը կլինի հայ-իտալական դպրոց: Մեզ հետ Բելունո նահանգից ուրիշ մարդիկ էլ էին եկել այդ ժամանակ,



որոնց մեջ էր սինյոր Արմանդոն, որն ունի փայտամշակման արտադրամաս: Եվ այսպես մեր նպատակները համընկել էին. ես եկել էի խոհարարական, իսկ նա՝ փայտամշակման դպրոցի համար: Արմանդոն քրոջից ժառանգություն էր ստացել 20 հազար եվրո, որին ավելացրել էր իր գումարից 10 հազար եվրո, զննել այս մեքենաները, սարքավորումները և ուղարկել այստեղ: Տավոբ, նա մահացել է: Ես ջահել ժամանակ զբաղվել եմ փայտամշակմամբ, այդ գործում հմտություններ ունեմ: Հիմա ես այստեղ եմ, որ շարունակեմ ընկերոջս գործը: Ուզում եմ 2 ուսանողի և այստեղի խոհարար-վարպետին մի 4 ամսով ինձ հետ տանել Իտալիա, որ մեր ռեստորանային համալիրի դպրոցում փորձուսուցում անցնեն: Մեր դպրոցը շատ տարբերվող է: Ուսանողները դասի ժամանակ պատրաստում են ուտեստներ և իրենք էլ մատուցում ռեստորանում, որից օգտվում են ինչպես սովորողները, այնպես էլ հանրությունը: Այն նաև արվեստի յուրատեսակ ցուցադրավայր է, քանի որ կախում ենք հայտնի նկարներ ու հաճախակի փոխում դրանք: Տաթևի հետ միտք ունենք այստեղ էլ բացել մի փոքր ռեստորան: Փայտագործության մասով Իտալիայում ես աշխատում եմ ամենահայտնի դիզայներների, ճարտարապետների հետ: Նրանց փորձը կբերենք այստեղ, ինչու չէ, այստեղից էլ նախշեր կտանենք: Տարվա մեջ մի քանի անգամ ցուցահանդեսներ կլինեն:

Մեր գրույցի վերջում չէի կարող իտալացի վարպետներին, հատկապես կանանց այս հարցը չտալ՝ իմանալով, որ Արցախը վտանգավոր գոտի է, ի՞նչ զգացումով են եկել:

Վիանարա Ամբրոջիան, ի դեպ, նա Սանդիտո Ջանանտոնի կինն է, պատասխան

նեց. «Եթե կարևոր գործ ես անում, միշտ էլ պետք է ռիսկի դիմես: Միշտ մտածենք, որ բարին ավելին է, քան չարը, ուրեմն հաղթելու է բարին: Միշտ այս հույսը պետք է ունենալ: Շվեդ Նաշ-Մարշալն ասում էր, որ մեր գալը մեծ հույս է արցախցիների համար: Մենք այստեղ ենք՝ այդ հույսն ունենալով»:

ՀԱՅ-ԻՏԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԱՆՆԵՐԻ ԸՆԿՆՆԵՐՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵՎԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ Ե

Արհեստների ու արվեստների երկրից ժամանած երեք վարպետներից բաղկացած



առաջին խումբը, որը մեկ ամիս է, ինչ կար ու ձևի ու փայտամշակման իր փորձն է հաղորդում կրթահամալիրի արցախցի վարպետներին, երկարածալ էլ է այստեղ գտնվելու իր ժամկետը: Նրանց միացել է հինգ անդամով մեր խումբ: Կրթահամալիրի տնօրեն Տաթև Ջաքարյանն ասաց, որ նրանք եկել են Իտալիայի տարբեր վայրերից կրթահամալիրի հիմնադիրներ Անտոնիա Արսլանի և Շվեդ Նաշ-Մարշալի շնորհիվ: Այցը ճանաչողական է, եկել են տեսնելու՝ ինչ խնդիրներ ունի կրթահամալիրը, ինչով կարող են օգնել՝ վերանորոգումից մինչև կրթական ծրագրեր: Նրանք Իտալիայում տարբեր դպրոցների հիմնադիրներ են, կաթոլիկ մշակույթի ներկայացուցիչներ, որոնց ընկերական դաշտը լայն է: Մի շարք խնդիրների հետ միասին կարևոր է նաև կրթահամալիրի միջազգային հավատարմագրումը, որպեսզի Եվրոպայում այն ճանաչվի, և փոխշահավետ համագործակցություն սկսվի, նշեց Տ. Ջաքարյանը: Իսկ թե իտալացի հյուրերից ով ինչպես է պատկերացում Արցախի հետ համագործակցությունը, փորձեցինք իմանալ հենց նրանցից:

Ալեքսանդր ՄԵՆԵՎԱՏԻ

- Խմբի անդամներս կաթոլիկ եկեղեցու հետևորդներ ենք և Իտալիայի հյուսիսից հարավ իրար հետ կապ ունենք, միավորված ենք եղբայրակցությամբ շնորհիվ: Կրթական հաստատությունը, որը ես ղեկավարում եմ, իրականացնում է նաև արտադրական գործառույթ: Այն կրթական-արտադրական կոպերատիվ է, ընդունում է սոցիալ-հոգեբանական դժվարություններ ունեցող երեխաների: Արտադրականը հիմնականում երկու ուղղությամբ է՝ բանջարաբուստանային մշակաբույսերի, խոտաբույսերի վերամշակման ու մետաղամշակման: Ամեն մի գործունեություն, որ իրականացնում ենք մեր դպրոցում, նպատակ ունի երեխաների միջոցով ոչ միայն արտադրանք տալ, այլև սովորեցնել նրանց տեսնել կյանքի գեղեցկությունները, ծաշակ գարգացնել: Գեղեցկությունը լավագույնս դրսևորվում է ընկերական շրջապատում: Անտոնիա Արսլանը և Շվեդ Նաշ-Մարշալը ընկերուհիներ են, նրանք մեզ օրինակ են ծառայում, որպեսզի մենք էլ նույն ձևով, նույն մե-

թողներով աշխատենք իրար հետ: Հենց ընկերական կապերի շնորհիվ եմ ես այստեղ, որովհետև նրանց ընկերներն իմ ընկերներն են և փորձում ենք իրար օգնել, ու դա վարակիչ է:

ՊԵՆԵ ԶՈՐԶՈՒ

- Մենք ձեր կրթահամալիրի նման դպրոց ունենք մեզ մոտ: Ունենք մեծ ցանկություն, որ մեր դպրոցները միմյանց հետ համագործակցեն, մեր երեխաները կապ ունենան միմյանց հետ, ինչպես մեծերն են իրար հետ կապ պահում ու ընկերանան: Մենք մեր երեխաներին սովորեցնում ենք, որ պիտի գան այստեղ, այսօր լինի ուսանողների փոխանակում: Նաև ուզում ենք օգնել այս դպրոցին վերանորոգման աշխատանքներում: Մենք ունենք աշխատանքային խումբ, որին ուղարկելու ենք, որ օգնի այստեղ: Իսկ դրանից ավելի բարձր մեր ընկերությունն է: Ձեր բոլոր օգնողների հետ մենք ուրախ կլինենք ծանոթանալ: Ինչ կարող է օգտակար լինել ձեզ, մեր ընկերության հետևանք պիտի լինի: Ձեր մասին մենք կպատմենք մեր մյուս ընկերներին, և նրանք էլ կգան այստեղ գործ անելու:

Լուկիզ ԼԻՍԵՆ

- Մենք ունենք դպրոց, ուր հաճախում են մինչև 16 տարեկան երեխաներ: Մենք մեր ավարտել մեր դպրոցական շենքի շինարարությունը, խնդրել էինք օգնություն մեր ընկերներից, և նրանք ձեռք են մեկնել: Դա առաջին դեպքը չէ. մենք արդեն ունենք փորձ իրար օգնելու և հենց այդ կապի միջոցով ենք եկել այստեղ նույն փորձը ձեզ տալու: Օգնությունը նաև մեր դասատուների միջոցով կլինի, մախարադրոցական ոլորտում էլ նրանք իրենց փորձը կհաղորդեն: Այն կլինի փոխշահավետ, քանի որ մենք էլ ձեր փորձը կսառնենք Իտալիա:

Միքելանջելո ՌՈՒԲԻՆՈ

- Ես Իտալիայի հարավից եմ: Մեր դպրոցն ունի երկու բաժանմունք: Մեկում հաճախում

են մինչև 11 տարեկաններ: Մյուսը, որտեղ սովորում են 16-ից 30 տարեկաններ, արհեստագործական թեթևումով է, պատրաստում է սպասարկման ոլորտի, մասնավորապես պիցցայի, գրոսաշրջության, նորածնության մասնագետներ: Ես չեմ ճանաչում Անտոնիա Արսլանին, բայց այս խմբի մարդկանց եմ ճանաչում, ու դրա համար ստացվում է, որ ճանաչում եմ Անտոնիա Արսլանին ու նրա միջոցով՝ Արցախի մեր ընկերներին: Նրանք ինձ հրավիրեցին այստեղ և ես շատ ուրախ եմ, որ այստեղ եմ: Ի՞նչ կարող ենք մենք անել. մեր անդամները պատմեցին այդ մասին, մեր նպատակն է ստեղծել համագործակցություն մեր դպրոցների միջև, որպեսզի ընկերներ ձեռք բերենք նաև Հայաստանում: (Արցախ ասելով նրանք Հայաստան են հասկանում-խմբ.):

Անդրիկո Բոն ՊՈՒՑՈՐՈՒՆ

- Մենք այստեղ են հինգ հոգով, բայց եկել ենք մեր բոլոր ընկերների կողմից, որոնք շատ են: Մենք ունենք մի մեծ խումբ Իտալիայում և աշխարհով մեկ: Մենք գնալու ենք հարավից

հյուսիս, ինչքան մեր խմբերում մարդիկ կան, բոլորին կպատմենք, ինչ որ տեսել ենք ու ձեզ օգնել ցանկացողների թիվն ավելի կմեծանա: Մենք հիացած ենք այս այցով: Այստեղ մենք տեսանք ավելին, քան պատկերացում էինք: Այս կրթահամալիրում մենք ծանոթացել ենք ձեր երկրի մի մասնիկի հետ, որը նաև ընտանիք է, մենք այստեղ տեսել ենք ընտանիք: Մեզ այնպես է թվում, որ մենք երկար տարիներ է՝ իրար ճանաչում ենք: Մեր երկրում Անտոնիա Արսլանը հիմնադրել է իտալա-հայկական դպրոց: Ուզում ենք ներդրում անել նաև Իտալիայում Արսլանի դպրոցի մեջ, մենք դրանով նաև Իտալիայի համար ենք ներդրում անում: Այս օրերին մենք հասկացել ենք, որ չորս տեսակի օգնություն կարող ենք ցույց տալ:

ա) արհեստագործական ոլորտում: Մենք ունենք մարդիկ, որոնք արդեն թոշակառուներ են: Նրանք իրենց կյանքում ձեռք բերած փորձը կարող են այստեղ փոխանցել ձեզ: Խոսքը մասնավորաբար փայտամշակման և կար ու ձևի վարպետների մասին է: Մենք արդեն ունենք մի այդպիսի օրինակ. այստեղ տեսանք նրանցից մի քանիսին, նրանց դեմքերի վրա տեսանք, թե ինչքան երջանիկ են, որ իրենց փորձը փոխանցում են:

բ) մենք կարող ենք նաև շինարարության ոլորտում ձեռք հասցնել: Մեր բանվորներին մի որոշ ժամանակով կուղարկենք այստեղ, որպեսզի դպրոցի ներքին հարդարման աշխատանքներն անեն: Արդեն պլանավորել ենք մինչև նոյեմբերի վերջ մի ուրիշ խմբի այց, որը կգա հենց այդ նպատակով, որ 2-3 սեռայակ կարգի բերի:

գ) մի ուրիշ խմբի կուղարկենք լեզու սովորեցնելու նպատակով: Մեր երիտասարդները կգան իտալերեն սովորեցնելու ձեր ուսանողներին: Իտալիայի պետությունը և Եվրամիությունը առաջարկում են, որ մենք իտալերեն սովորեցնենք այլ երկրներում:

դ) մենք ուզում ենք նաև այն, ինչ այստեղ տեսել ենք, մեր կապերի միջոցով հրապարակել Իտալիայի հայտնի թերթերում, ամսագրերում: Կպատմենք Արցախի ու նաև դպրոցի մասին, որպեսզի մեր երկրում ճանաչեն Արցախում ստեղծված՝ Անտոնիա Արսլանի հիմնադրած դպրոցի մասին, որովհետև շատերը չգիտեն: Մենք շատ կարևորում ենք իտալացիներին հայտնի դարձնել այն, որ միայն Իտալիայում չէ, որ կարելի է լավ հաց ուտել, Արցախում ուտելիքն ու խմիչքն ամենալավն են:

Մեր գրույցը ուզում եմ եզրափակել երեք բառով՝ գրացիա, գրացիա, գրացիա:

Կրթահամալիրի տնօրեն Տաթև Ջաքարյանն ասաց, որ իտալացի բարեկամները կազմակերպել են իտալական խոհանոցով



հյուրասիրություն: Իրենց հետ բերել էին իտալական ուտեստներ, իրենք պատրաստել, իրենք էլ մատուցել են: Անշուշտ, կրթահամալիրն էլ կազմակերպել է արցախյան հյուրասիրություն:

Մնում է ասել, որ անձնական կապերը քաղաքականությունից վեր են, բայց ինչու չէ, կարող են նպաստել նաև քաղաքական հարցերի լուծմանը:

ԼՈՒՅՍ ՏՂԱՆԵՐ

ԱԼԵՔՍԸ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ԱԿԱՆԱՆԵՏՈՐԴ ԷՐ



Արցախյան առաջին պատերազմի ժամանակ չորս տարի շարունակ թշնամիներ փորձեց տեղահան անել Շուշիի ժայռի տակ ծվարած Քարին տակ գյուղի հայրությանը...

տնօրեն Արամայիս Գրիգորյանի ղեկավարությամբ ժամկետային զինծառայող, սերժանտ Ալեքսեյ Գրիգորյանը, ինչպես նաև Գերասիմ Գրիգորյանը և Արսեն Ավանեսյանը: Փոխգնդապետ Մխիթար Գրիգորյանը զոհվել է Ջրականում (Ջաբրայիլ), իսկ հետախուզական գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Լեռնիկ Վարդանյանից մինչ օրս ընտանիքը լուր չունի: Գրիգորյանի 30-ին եռաբլուրում Ալեքսեյ Գրիգորյանի շիրիմի մոտ էին հարազատները, բարեկամներ, համագյուղացիներ: Լրացավ անմահ հերոսի նահատակության առաջին տարեկիցը: Զրուցեցի Ալեքսեյի հոր՝ Արամայիսի հետ, որին ճանաչում եմ վաղուց. շատ եմ եղել Քարին տակում, այցելել դպրոց: Զերոսական գյուղի դպրոցի տնօրեն Արցախյան գոյամարտի

վերջին պատերազմների ժամանակ իրենց գերդաստանից 7 հոգի զոհվել են: Երկու հորեղբայրները՝ Ալեքսեյի պապը՝ Այոշա Գրիգորյանը (28.12.1991թ.) և Միքայել Գրիգորյանը (26.01.1992թ.), եղբայրը՝ Գրիգոր Գրիգորյանը (10.04.1994թ. Կարմիրավանի մոտ), հորեղբոր որդին՝ Արմեն Գրիգորյանը (4.05.1992թ.), զոհվել են Արցախյան առաջին գոյամարտում: Իսկ փոխգնդապետ, 2-րդ ՊՇ հրամանատարի ԱՅՏԱ գծով տեղակալ Մխիթար Գրիգորյանը (09.10.2020թ.), Գերասիմ Գրիգորյանը (25.10.2020թ.) և Ալեքսեյ Գրիգորյանը նահատակվել են 2020թ. հոկտեմբեր ամսին: «Առաջին պատերազմում թեկուզ զոհվել են եղբայրս, այլ հարազատներ ու մտերիմներ մեր գյուղից, գյուղը ամբողջովին ավերակ էր թշնամու ռմբակոծություններից հետո, սակայն մենք հպարտ էինք: Զաղթել էինք, ազատագրել էինք Արցախը՝ Շուշիով հանդերձ, այլ տարածքներ, շենագնում էինք մեր երկիրը: Այսօր այլ է՝ կոտորված ենք հոգով, ունեցանք զոհեր ու կորցրինք մեր տունը»,- ասաց Լ. Գրիգորյանը:

տական համալսարանի կիրառական մաթեմատիկայի բաժինը և գորակոչվել Գայոց բանակ: Սկզբնական շրջանում հինգ ամիս, ուսումնական դասընթացներ է անցել Լուսակերտի գործառնական, ստացել ակադեմիկոս-հրետանավորի վկայական ու կրտսեր սերժանտի կոչում: Մրցութների ժամանակ միշտ աչքի է ընկել իր գիտելիքներով, և պատահական չէ, որ արժանացել է «Լավագույն գիմվոր» կրծքանշանի: Ավարտելով ուսում-

ստորաբաժանումներին՝ կատարել առաջադրանքը: Գայոցի տարածքում արդեն որպես հրաձիգ՝ կամավոր առաջնագիծ է մեկնել, նշանակվել մարտական դիրքի ավագ, կռվել թշնամու դեմ մինչև հոկտեմբերի 28-ը՝ հասնելով Մարտունու շրջան: Գրիգորյանի 30-ին Մարտունու շրջանի Քերթ գյուղից պետք է տեղափոխվեին: Զինվորներով լի զինվորական մեքենան ենթարկվել է թշնամու ԱԹՍ-ի ռմբահարմանը, մոտ 20 զինվոր նահա-



նառությունը՝ տեղափոխվել է Արցախի 9-րդ պաշտպանական շրջան և ծառայել Ջրականում՝ որպես ակադեմիկոսային հաշվարկի հրամանատար 2-րդ գումարտակի 1-ին մարտկոցում: Կարգապահ, բանիմաց և բարեխիղճ ծառայության համար Ալեքսեյ ստացել է սերժանտի կոչում և պարգևատրվել «Խիզախ մարտիկ» կրծքանշանով: Գայոց տիրությանը ասաց, որ այդ նշանների, այլ պարգևների մասին հետո է իմացել: 2020թ. սեպտեմբերի 27-ից Ալեքսեյի հրամանատարությանը գործող ակադեմիկոսային հաշվարկը մեծ ծավալի աշխատանքներ է կատարել և ահռելի վնաս հասցրել թշնամուն: Գայոց հպարտությանը է նշում՝ որդու դեկավարած հաշվարկն այդ օրերին ՁՈՒ-ում ծանաչվել է լավագույնը: Մի քանի օր շարունակ մարտնչել են ակադեմիկոսները և չեն նահանջել, մինչև եղել է հրաման՝ տեղափոխվել Գայոց-Ֆիզուլի հատված: Այդ ժամանակ իր հրամանով արձակած յուրաքանչյուր ական հասնում էր ճիշտ նպատակակետին՝ կասեցնելով թշնամու առաջխաղացումը՝ շարքից հանելով տեխնիկական, ռազմավարական նշանակություն ունեցող օբեկտները և օգնում էր հայկական առաջապահ

տակվել է, նաև՝ Ալեքսեյը, որը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» և «Արիության համար» մեդալներով: Եռաբլուրում ամեն անգամ է մարդաշատ, այս օրերին՝ առավել: Գայոցի ավերակներ են նահատակվել մեկ տարի առաջ հոկտեմբեր ամսին, և այժմ նրանց զոհվելու առաջին տարեկիցն է: Ծանրացած հոգով են բուրրը եռաբլուրում, խունկ են ծխում հարազատի շիրիմին, ծաղիկներ խոնարհում: Լույս-տղաների լուսանկարներն են միայն պատասխանում հարազատներին՝ ժպտերես ու տխուր, խոհուն ու պայծառ դեմքեր, տղաներ, որոնք հարստացրել են երկինքը և մեզնից պահանջում են՝ Գայոց տունը կիսատ չթողնել: Խնկաբույրով ու ծաղիկներով է պատված Ալեքսեյի խոհուն դեմքով լուսանկարը, շուրջը հարազատներն են՝ քարացած հոգով տղամարդիկ, արցունքոտ աչքերով կանայք: Որդուն ու հորը, հայրենի գյուղը, տունը կորցրած Արամայիսն ասաց՝ թուրքերը հիմնահատակ քանդել են իր տունը և ծանապարհ բացել նոր թաղամասով, գնալու տեղ չունի, այժմ ապրում է Երևանում՝ բարեկամի տանը:

Ջոհրաբ ԸՈՒՅՏԱՆ

Արցախյան վերջին պատերազմն այլ ընթացք ունեցավ. Շուշիի հետ թշնամուն մնաց նաև հերոսական Քարին տակը: Այս պատերազմում գյուղից զոհվեց 7 հոգի. նրանց շարքում են Վաղարշակ Առուշանյանի Մխիթար որդին՝ Քարին տակի համայնքապետը, ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար, Արցախյան առաջին գոյամարտի ազատամարտիկ, «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշակիր Արթուր Առաքելյանը և որդին՝ Կարեն Առաքելյանը: Արցախի Մարտունու շրջանում մղված մարտերի ժամանակ զոհվել է Քարին տակի դպրոցի



մասնակից է: Երկար տարիներ գյուղի կրթօջախի տնօրենն էր, որտեղ կրթվում, հայեցի ու հայրենասիրական դաստիարակություն էին ստանում գյուղի դպրոցականները: Նույն ոգով է դպրոցն ավարտել նաև Արամայիսի միակ որդին՝ երկու բույրերի կրտսեր եղբայրը՝ Ալեքսեյը: Արցախի Զանգեզուրի մշակույթի և երիտասարդության հարցերի նախկին նախարար, պատմաբան-ազգագրագետ, Արցախյան ազատամարտի մասնակից Լեռնիկ Գրիգորյանը, որը նույնպես ներկա էր հորեղբոր թռան մահվան տարեկիցին, տեղեկացրեց, որ Արցախյան առաջին և

Ռոդուն է ներկայացնում հայրը: Ծնվել է 2001թ. մայիսի 2-ին Շուշիի շրջանի Քարին տակ գյուղում: 2007-2019թթ. սովորել է Քարին տակի Զ. Ղարախանյանի անվան միջնակարգ դպրոցում: Մինչև 9-րդ դասարանը սովորել է գերազանց: Ընդհատաբար որդին ստացել է նաև երաժշտական կրթություն, նվագում էր կլառնետ: Խելացի ու համեստ Ալեքսեյ բոլորի խոսքում գեղեցկադեմ էր, ամաչկոտ ու հետաքրքրասեր: Սակայն դպրոցում միշտ եղել է առաջնորդի դերում և բազում միջոցառումներ կազմակերպել: Սիրով էր մասնակցում դպրոցական առարկայական օլիմպիադաների, սպարտակիադանների: Զաճախել է կարատեի դասընթացներ, մասնակցել մրցումների, պարգևատրվել մի շարք մեդալներով՝ սկսած 3-րդ տեղից մինչև 1-ին, պատվոգրերով ու զովասանագրերով: Նաև ստեղծագործում էր Ալեքսեյ. գրում էր բանաստեղծություններ, երգեր: Բայց առավել շատ սիրում էր դպրոցական բնագիտական առարկաները: Ավարտելով միջնակարգը՝ 2019թ. ընդունվել է Արցախի պե-


ՉՈՒՂԱՐԿՎԱԾ ՆԱՄԱԿ

«Միտելի՛ մայրիկ, այնքա՛ն ուրախ եմ... Ահա գարուն է, ու ես կավարտեմ Սուրբ ու պատվավոր ծառայությունս եվ ես տուն կգամ, կփարվեմ կրծքիդ, Գայրենիքիս մեծ ցավը հոգուս մեջ: Թեկուզ ես քեզ ոչինչ չպատմեմ, Աչքերս խորունկ կասեն ամեն ինչ, Այն, ինչ զգացի, ինչ սովորեցի, Այն, ինչ տվեցի ես հայրենիքին, Գայրենիքն էլ՝ ինձ... Քիչ մնաց, մայրիկ, մի քիչ էլ սպասիր...»: Մրտի թրթիռով տողերը գրեց. Նորից ընթերցեց Ու շատ խնամքով նամակը դրեց Իր ներքնակի տակ, Եվ ընդմիջտ մնաց չուղարկված նամակ: Գիշեր էր, հանգիստ, լուռ ու լռակյաց...

Ու հանկարծ պայթեց երկնակամարը. Նորից պատերազմ՝ արմատում, դաժան, Դժոխքի բերան՝ ազահ ու անհագ, Վա՛յ քեզ, պատերազմ, մեծ մեղք կա վզիդ, Ամենը արյան կանչ կա երկինք հասած, Որ վեր կառնվի մեղավորներից: «Ա՛խ, մայրիկ, եկավ, գարունը եկավ, Օրս լրացավ, որ պիտի տուն գամ, Բայց, մայրիկ, ների՛ր, ես քեզ չեմ խաբել, Ուզեցի տուն գալ... Եվ այնպես ստացվեց՝ համաձայնվեցի Ընդմիջտ ծառայել իմ հայրենիքին: Ների՛ր ինձ, ստիպված տվեցի երդում՝ Երբեք տուն չգալ, Ու գիշեր-ցերեկ իմ հոգին անքուն Կհսկի հայի անդորրը անգին: Ես գիտեմ՝ ընդմիջտ կցավի հոգիդ,

Որ էլ տուն չի գա դավաճան որդիդ, Սակայն թուրք ոսոխը հավետ կիշի, Որ միայն հայ մայրը կորյուն կծնի»:

Ռուզաննա ԽԱԶՏՐՅԱՆ Չլորանի Տիգրան Իզմիրյանի անվան միջև. դպրոցի ուսուցչուհի



ՄՏԱՎԱՐԺԱՆՔ

ԽՆԴԻՐՆԵՐ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ԶԱՓՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Հեղուկների չափման խնդիրները մեծ դերակատարում ունեն սովորողների ուսուցման և զարգացման գործընթացում:



Նման խնդիրներից ամենահայտնի խնդիրը կոչվում է ֆրանսիացի մաթեմատիկոս, ֆիզիկոս Սիմեոն Դենի Պուասոնի խնդիրը: Մի անգամ ծանոթները բերեցին մի քանի խնդիրներ հեղուկների չափման վերաբերյալ: Պուասոնը մի ժամում լուծեց այդ խնդիրները, չնայած նրանցում կային նաև դժվարները: Այս փաստը որոշիչ դեր խաղաց Պուասոնի ապագա մասնագիտության՝ մաթեմատիկոսի ընտրության հարցում:

Առաջարկում ենք լուծել հեղուկների չափման վերաբերյալ մի շարք խնդիրներ, որոնք մատչելի դարձնելու նպատակով գետեղված են նկարների զուգակցությամբ:

1. Ի՞նչպես ծորակից չափել 4 լ ջուր, եթե ունենք 3 լ և 5 լ անոթներ:

2. Ի՞նչպես ծորակից չափել 2 լ ջուր, եթե ունենք 4 լ և 5 լ անոթներ:

3. Զափել 2 լիտր ջուր:

4. Զափել 2 լիտր ջուր:

5. Ջուրը բաժանել 2 հավասար մասի՝ 4 և 4 լիտր:

6. 7 լ ջուրը բաժանել 3 մասի՝ 2 լ, 2 լ և 3 լ:

7. Ունենք 3 լ, 5 լ և 8 լ ծավալով անոթներ, որոնցում կա ջուր, այն գրված է նկարի տակ: Զափեք 1 լ ջուր կատարելով լցնելու 2 գործողություն:

8. Ի՞նչպես չափել 3 լիտր ջուր ծորակից:

9. 10 լ անոթը լցված է ջրով: Ի՞նչպես չափել 5 լ ջուր եթե ունենք 3 լ և 7 լ ծավալով անոթներ:

10. Ի՞նչպես չափել 6 լիտր ջուր:

11. 12 լիտր կաթից չափել 6 լիտր, օգտվելով 5 և 7 լիտր ծավալ ունեցող անոթներից:

12. Ի՞նչպես կաթսայի մեջ լցնենք 5 լիտր ջուր, ունենալով 7 լիտրանոց դույլ և 3 լիտրանոց անոթ:

13. Ի՞նչպես կաթսայի մեջ լցնել 5 լիտր ջուր, եթե ունենք 7 լիտրանոց դույլ և 3 լիտրանոց անոթ:

14. Դույլը լցված է ջրով: Ունենք 5 լ և 3 լ ծավալներ: Ի՞նչպես չափենք 2 լ ջուր:

15. Ունենք 5 լ և 9 լ ծավալով անոթներ: Ի՞նչպես չափենք 6 լ ջուր:

Ռ. ԱՌԱԵՆԻՅԱՆ
ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոն, մ.գ.թ.,
պրոֆեսոր

ՈՂՋ ՄՆԱԼՈՒ ԱՐԿԵՍ

ԱՆՊՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ. ՊԱՐԱՊԵՔ, ԴԱ ԿԱՐՈՂ Է ՓՐԿԵԼ ՁԵՐ ԿՅԱՆԵՐԸ



Սեկ տարի է անցել սարսափելի պատերազմից հետո, սակայն դրա պատճառած ցավը շարունակում է մղկտալ: Անդամալի կորստի վիշտը սփոփանք չունի, ասել է թե՛ ժամանակն է բուժում բոլոր վերքերը: Մինչդեռ հիմնվելով սավաժի վրա ու ջանք չգործադրելով՝ դժվար կլինի ապրել: Հաղթում է նա, ով հաղթահարում է անհաղթահարելի ու շարունակում է ապրել, արարել, նոր մարտահրավերների դիմակայել:

«Լուսարար»-ի հերթական հյուրն իր երիտասարդ տարիքում արդեն երկու պատերազմների թո՛ղի ու բո՛հով անցած, ռազմական գործում բավականին փորձ ունեցող, անկտրում ոգու տեր մարզիկ Անդրանիկ Գրիգորյանն է: Ինչպես վայել է իսկական սպային, Անդրանիկը նախընտրում է պատերազմում կատարած սխրագործությունների մասին չբարձրաձայնել, բայց մարզական էջի համար բացառիկ հարցազրույց, այնուամենայնիվ, մեզ հաջողվեց ստանալ: Միաժամանակ բացահայտվեց իրական հերոսի կերպար՝ անձնվեր, կայուն կշռադատությամբ օժտված, գիտակցված մահվան պատրաստ մարտիկի ու սպորտը սիրող ուժեղ մարզիկի:

Ծնվել է 1996թ. փետրվարի 10-ին Ստեփանակերտում: Սովորել է քաղաքի 2-րդ դպրոցում, հետո տեղափոխվել եւ ավարտել 11-րդ ավագ դպրոցը: Ընդունվել է «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ֆիզկուլտուրայի բաժինը: Սեկ տարի սովորելուց հետո ծառայության է գորակոչվել ԱՀ ՊՔ՝ որպես ժամկետային զինծառայող ու սիրելով հայրենիքին ծառայելը՝ մտադրվել է գործընկերուց հետո էլ զինվորական ծառայությամբ զբաղվել: Ծառայության ընթացքում առաջադեմ էր: Աստիճանաբար առաջ գնալով եւ ընկղմվելով ծառայության մեջ՝ դարձել էր հետախուզական դասակի հրամանատարի պաշտոնակատար: 2016թ. ապրիլյան պատերազմում իր մասնակցությունն է ունեցել որպես զինվոր եւ լավ կատարել իր առջեւ դրված մարտական առաջադրանքները: Ծառայության ընթացքում պարգևատրվել է «Գարեգին Նժդեհ» զեքստեսակյան մեդալով, «Լավագույն դիքթապահ» մեդալով, «Լավագույն զինվոր-մարզիկ» կրծքանշանով: Ձորացրվելուց հետո շարունակել է սովորել նույն համալսարանում, բայց փոխել է մասնագիտությունը եւ ստացել իրավաբանի մասնագիտություն: Տիրապետելով անհրաժեշտ հմտությունների՝ առաջարկ է ստացել եւ ընդունվել ծառայության մտել ԱՀ անվտանգությունն ապահովող կառույցներից մեկում: 2019թ. ԱՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

2020թ. աշնանը վրա հասած արյունարբու պատերազմում Անդրանիկ Գրիգորյանն իր ռազմական գիտելիքներն ու հմտությունները կիրառել է մարտադաշտում, կատարել մարտական առաջադրանքներ՝ քաջ գիտակցելով, որ ամեն վայրկյանը կարող է վերջինը լինել: Հոկտեմբերի 25-ին թշնամու դեմ պայքարելու եւ հայրենիքը պաշտպանելու հերթական առաջադրանքն անձնուրաց կատարելիս սպան հրազենային ծանր վիրավորում է ստանում որովայնի մասում ու հրաշքով դուրս բերվում ռազմադաշտից: Ողջ մնալու եւ առողջությունը վերականգնելու հետագա ծանր շրջանում դիմանալու ու չհանձնվելը մեր գրուցակիցը կապում է մարզված լինելու հետ:

- Անդրանիկ, պատմեք Ձեր մարզումները սկսելու մասին:

- Նախ նշեմ, որ սպորտով պարապելու կարելություն գիտակցումն ինձ մոտ բավականին ուշ է ձեւավորվել: Հնարավոր է դրա պատճառն այն է, որ մեր ընտանիքում մարզվելուն շատ ուշադրություն չէին դարձնում: Ինձ հարազատների մեջ շատ են զինծառայողները, հայրս նույնպես զինվորական ծառայության մեջ էր, իսկ ես կրում եմ Արցախյան առաջին պատերազմում զոհված հորեղբորս անունը: Միզուցե դրա համար մանկությունից սիրել եմ զինվորական համագզեստը, միշտ մտածել, որ հատուկընկալության պետք է դառնա: Սպորտի հանդեպ սերն էլ այդ հիման վրա է առաջացել: Հասկացել եմ, որ տղամարդը պետք է կոփված լինի: Դեռ երեխա ժամանակ հաճախել եմ թաեքվոդոյի, հետո սանդա ուշուի պարապմունքների, բայց հետեւողական չլինելով՝ չեմ շարունակել: Ավելի հատուն տարիքում, երբ արդեն հստակ գիտակցել եմ, որ մարզվելն անհրաժեշտ է առողջ եւ ուժեղ լինելու համար, սկսել եմ ինքնուրույն պարապել սկզբում բակի պտածողների վրա, հետո՝ մարզասրահում: Փնտրում էի զբաղմունք, որն օգտակար կլիներ ինձ համար, գեղեցիկ եւ ամուր կազմվածք կտար, միեւնույն ժամանակ հաճելի կլիներ ինձ համար: Ես մարզվում էի, ու դա սկսել էր ինձ դուր գալ: Բանակում ծառայության ժամանակ նույնպես շարունակել եմ աշխատել ինձ վրա: Գիշտ է, բանակում անելիքները շատ են լինում, բայց փորձում էի ժամանակը ճիշտ օգտագործել եւ մարզվել: Մեր գործնապես հեռու էր տնից: Ծառայել իրենց արձակուրդի ժամանակ շտապում էին զորամասից քիչ հեռու գտնվող ինտերնետ-ակումբ, իսկ ես շտապում էի զորամասի մարզասարքերի մոտ: Բոլորի հետ ընկերական հարաբերությունների մեջ էի: Ինքս խորհուրդ էի տալիս, որ մարզվեմ: Գիտեի, որ պարապելը միշտ մնալու է մեզ հետ: Այդպես կարողացել եմ պահել ֆիզիկական լավ վիճակ:

- Բանակից հետո ծանր աթլետիկայի մարզումներ էիք սկսել սիրողական ոճում, իսկ պրոֆեսիոնալ սպորտ մտնելու ցանկություն կա՞ր:

- Այդ ժամանակ քաշս 63-64 կգ էր: Մարզվում էի առանց մարզական սննդի: Միայն պարապելով եւ հաճախակի սնվելով կարողացել եմ քաշս ավելացնել: Օգտվում էի համացանցից, ինչպես նաեւ խորհուրդ էի հարց-

նում փորձառու մարզիկներից, թե ինչպես ճիշտ պարապել: Ծանր աթլետիկան կայուն մարզածե է, այսինքն՝ պետք է ունենալ հստակ գրաֆիկ. պարապմունք-սնունդ-հանգիստ-քուն: Վնասակար սովորություններ չպետք է լինեն: Սա սովորական սպորտ չէ, այլ մի ողջ գիտություն, որտեղ պետք է իմանալ ոչ միայն մարդու անատոմիա, այլեւ՝ ինչպես ճիշտ սնվել եւ ճիշտ հանգստանալ: Հաճախ շրջանառվում է այն կարծիքը, թե ուժային սպորտում խելք պետք չէ: Բայց հակառակը, ուժային սպորտում եթե խելք չունենար, չես կարող արդյունք ունենալ: Պետք է հասկանալ, թե ինչ է կատարվում օրգանիզմի հետ, եւ ինչ է նրան պետք: Այլապես ոչինչ չի ստացվի, կամ էլ կստացվի, բայց այն չի լինի, ինչ ուզում ես: Պրոֆեսիոնալ սպորտ մտնելու համար մեզ մոտ թերեւս անհրաժեշտ պայմանների բացակայություն կա: Մարզական սնունդը բոլորի համար չէ, որ մասշտի է: Իսկ մարզումների հստակ գրաֆիկ պահելու համար ամեն գործով չես կարող զբաղվել: Ուզում էի ուժային եռամարտում ինձ փորձել: Արդեն աշխատում էի քաշերի հետ եւ շուրջ 130 կգ բարձրացումն էի պառկած հրումով: Հաշվի առնելով, որ պարապում էի ինքնուրույն, առանց համապատասխան մարզական սնունդ ընդունելու, կարծում եմ, դա վատ ցուցանիշ չէր: Դա հենց այն ժամանակահատվածն էր, որ սկսել էի հարաբերական աճել ցուցանիշներում ու հասկանալ, թե ինչպես պետք է ճիշտ աշխատել իմ օրգանիզմի հետ, քանի որ յուրաքանչյուրի մոտ այն յուրահատուկ մոտեցում է պահանջում: Բայց մրցույթների գնալը դեռ շուտ էր, ժամանակ էր պետք:

- Չնայած մրցույթների չեք մասնակցել, բայց ջանք չեք խնայել որպես սիրողական պարասպորտ մարզիկ եւ ջանասիրաբար պարապել եք: Եթե պրոֆեսիոնալ սպորտում արդյունքը գնահատվում է ամենածանր քաշերի հետ աշխատել կարողանալով, ապա սիրողականում ի՞նչ չափորոշիչներ են, եւ ի՞նչն էք համարում Ձեր մարզվելու ամենաբարձր արդյունքը:

- Առաջինը, ինչպես արդեն նշել եմ, տղամարդը պետք է կոփված լինի: Բացի ֆիզիկականից, դա նաեւ հոգեբանորեն է կոփում, դառնում ես ավելի վստահ, կամքի ուժ է ձեւավորվում: Մարզասարքերի եւ երկաթի հետ աշխատելիս սովորում ես դժվարություններ հաղթահարել, դառնում ես դիմացկուն: Կազմվածքդ դառնում է ավելի գեղեցիկ,



ընդգծված առնական գծերով: Սիրողական սպորտը նաեւ առողջ ապրելակերպ է ու հաճելի զբաղմունք: Իսկ ամենաբարձր արդյունքը իմ դեպքում ողջ մնալն է, այն դեպքում, երբ գնահատելով իրավիճակը՝ չպիտի ողջ մնայի...

- Հաշվի առնելով, որ տխուր իրադարձությունները եւ ծանր ապրումները վերհիշելը հեշտ չէ, այնուամենայնիվ, խնդրում ենք պատմել Ձեր վիրավորվելու մասին:

- Հիշում եմ, որ սեպտեմբերի 27-ին պետք է ընկերոջս նշանդեքի գնայինք: Նախօրեին քայլում էինք դեռ խաղաղ Ստեփանակերտով ու հաջորդ օրվա առիթից էինք խոսում: Դեռ չգիտեինք, թե ինչ է մեզ սպասվում: 27-ի առավոտյան դրոշմակա արթնանալով՝ հասկացանք, որ նշանդեքը հետաձգվելու է: Ամենքս մեր պարտականությանն անցանք: Տարբեր տեղեր էինք գնում, թե՛ տեղերում էլ էինք լինում, մարտական տարբեր խնդիրներ կատարում: Պատերազմ էր, գիտակցում էի, որ ամեն ինչ կարող է պատահել եւ հնարավոր է, որ կռվից էլ չվերադառնամ, բայց որ կվիրավորվեմ ու ողջ կմնամ՝ մտքով չէր անցել: Հոկտեմբերի 20-ին՝ մեկ տարի առաջ, եկա Ստեփանակերտ, պետք է տուն մտնեի, հետո գնայի նորից: Մեր շենքի մոտ հասա ու

տեսա մեր բակի պտածողը, որից էլ սկսել եմ իմ մարզումները: Մոտեցա եւ մի անգամ ձգվեցի: Հիշում եմ, որ ընդամենը 25 ձգում կատարեցի՝ մտածելով, որ տեսնես մեկ էլ երբ պարապելու հնարավորություն կլինի:

- Ի՞նչ եղավ հետո:

- Հոկտեմբերի 25-ին Ավետարանոցի մերձակա անտառներում մարտական խնդիր էինք կատարում: Ընդհանուր խմբից երեք սպաներով առանձնացել էինք: Մեզ էին միացել զորահավաքային կազմի ծառայողները եւ տեղանքին ծանոթ ուղեկցորդ գյուղից: Չայներ էինք լսում: Լուռ էինք մնում, չէինք արմկում, պետք է հասկանայինք՝ մեր՞նք են, թե՞ հակառակորդն է, որպեսզի հանկարծ կրակ չբացենք մեր հայրենակիցների վրա: Առաջ էինք գնում: Գնալով պարզվեց, որ թշնամին է: Սկսվեց փոխհրաձգություն: Դիմադրեցինք, դիմադրեցինք, բայց զինամթերքն անվերջ չէր: Մեր սպա ընկերներից մեկը ոտքից վիրավորվեց: Փոխհրաձգության ժամանակ պետք էր մի ծառից մյուսը տեղափոխվել, հանկարծ սուր ցավ զգացի փորիս մասում ու միանգամից ընկա: Գնալիս մասնաժամանակ պետք էր մի ծառից մյուսը տեղափոխվել, հանկարծ սուր ցավ զգացի փորիս մասում ու միանգամից ընկա: Գնալիս մասնաժամանակ պետք էր մի ծառից մյուսը տեղափոխվել, հանկարծ սուր ցավ զգացի փորիս մասում ու միանգամից ընկա: Գնալիս մասնաժամանակ պետք էր մի ծառից մյուսը տեղափոխվել, հանկարծ սուր ցավ զգացի փորիս մասում ու միանգամից ընկա: Գնալիս մասնաժամանակ պետք էր մի ծառից մյուսը տեղափոխվել, հանկարծ սուր ցավ զգացի փորիս մասում ու միանգամից ընկա: Գնալիս մասնաժամանակ պետք էր մի ծառից մյուսը տեղափոխվել, հանկարծ սուր ցավ զգացի փորիս մասում ու միանգամից ընկա: Գնալիս մասնաժամանակ պետք էր մի ծառից մյուսը տեղափոխվել, հանկարծ սուր ցավ զգացի փորիս մասում ու միանգամից ընկա: Գնալիս մասնաժամանակ պետք էր մի ծառից մյուսը տեղափոխվել, հանկարծ սուր ցավ զգացի փորիս մասում ու միանգամից ընկա: Գնալիս մասնաժամանակ պետք էր մի ծառից մյուսը տեղափոխվել, հանկարծ սուր ցավ զգացի փորիս մասում ու միանգամից ընկա:

- Հիշո՞ւմ եք, արդյոք, թե այդ մղձավանջի մեջ ինչ մտքեր ունեիք:

- Խոր սուր ցավ ունեի, արյունը հորդում էր ինձանից, զգում էի, թե ինչպես է կյանքը փորձում դուրս գալ իմ միջից: Առաջին անգամ զգացի, թե ինչ արժեք ունի արյունը: Չգուցե էի, որ ուր որ է՝ կանցատվեմ: Դեռ երբեք իմ կյանքում այդքան քնել չէի ուզել: Հասկանում էի, որ սա ինձ համար վերջն է: Առաջին միտքը, որ գլխովս անցավ, այն էր, թե ինչ վիճակում կլինեմ ծնողներս, որ իմանան այրելու չկամ: Բայց իրավիճակը ծանր էր: Օգնություն կանչել չէր ստացվում: Ձեռքս «Մուխա» տեսակի գեներ կար, մի կերպ շարտեցի մեր երրորդ սպա ընկերոջ՝ Դավիթի մոտ, որն ինձանից 2-3 մետր հեռավորության վրա էր: Դա էլ օգտագործելուց հետո նա սողեցող մոտեցավ ինձ: Փորձեց օգնել ինձ, բայց հասկանալով, որ անհավասար մարտ է գնում եւ մեզանից երկուսն արդեն վիրավոր են, խնդրեցի Դավիթին, որ ինձ թողնեն ու մյուս վիրավոր ընկերոջ հետ ետ գնան: Մտածում էի, որ ինձ հետ այդտեղից դուրս գալն անհնար է, չէի ուզում բեռ լինել նրա համար, չէի ուզում, որ իմ պատճառով կյանքը վտանգվի: Ես չէի կարողանում շարժվել, մի կերպ էի խոսում: Ասացի, որ ավելի հեշտ կլինի մյուս մեր ընկերոջը օգնել, քանի որ նրա վիրավորումը համեմատաբար թեթեւ էր: Բայց նա ասաց, որ ինչքան կարող եմք, կգնանք, կփորձենք, դուրս կգանք: Մտածում էի՝ միայն թե գերի չընկնեմ: Մայմանավորվեցինք, որ եթե հանկարծ չստացվի, գերի չպիտի մնանք. այդ դեպքում նա գիտեր ինչ անել:

- Ինչպե՞ս դուրս եկաք:

- Ձորահավաքային տղաների կազմից էլ օգնեցին: Մի քանի կիլոմետր անտառածածկ տեղանքով պետք է շարժվեինք, մեր փորի վրա սողալով, մեր քարշ տալով կամ շալակելով, միաժամանակ թշնամուն խփելով ու դիմադրելով: Չեմ հիշում ինչքան էինք եկել, երբ արդեն համոզվեցինք, որ թշնամին չի հետապնդում: Արյուն շատ էի կորցրել, թմրել ու կիսաքուն վիճակում էի, բայց գիտակցությունս տեղը էր մնում: Որոշ ժամանակ անց արդեն մեքենայի մեջ էինք, հետո շտապ օգնության մեքենայով տեղափոխեցին հիվանդանոց ու վիրահատեցին: Հրազենի գնդակը

ՄԱՔԱՌՈՒՄ

ՄՊԱՍՈՒՄ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁԻՂ, ՀԵՐՈՆՍ ՄԱՐԶԻԿ



Ինտո նրան տեղափոխել են Գուստան, որտեղ այժմ նա բուժում է ստանում: Դեռևս անկողնային, զրուցել չկարողացող մեր հերոս մարզիկի վիրավորվելու տարեկիցին ընդառաջ անդրադարձանք նրան: Սերգեյի մասին տեղեկություն ստացանք ավագ եղբայր Դարոս Կարապետյանից:

Արցախյան 44-օրյա պատերազմն աղետալի հետևանքներ ունեցավ արցախցիների համար: Արցախյան մարզական աշխարհի փայլուն ներկայացուցիչներից շատերն առանց երկբայելու մղվեցին պատերազմի, երբ հայրենիքն իրենց օգնության կարիքն ուներ: Մարզական եւ մարտական լավ պատրաստություն ունեցող քաջորդիներն իրենց հմտությունները ներդրին վտանգված հայրենիքի պաշտպանությանը՝ պատրաստ իրենց առաքելությունը կատարելու:— նույնիսկ կյանքի գնով: Դաժան պատերազմն իր սեւ կնիքը թողեց մարզաշխարհի վրա՝ պատճառելով անդառնալի կորուստներ, միևնույն ժամանակ շատ մարզիկներից խլելով առողջությունն ու սպասվելիք մարզական փայլուն կարիերան:



2020թ. պատերազմի ծանրագույն օրերին՝ նոյեմբերի 3-4-ը լուր հայտնեցին, որ գլխի բեկորային ծանր վիրավորում է ստացել սամբոյի վառ աստղ Սերգեյ Կարապետյանը: «Լուսարար»-ը պարբերաբար հետևում էր արցախցի չեմպիոնի վիրահատման, հետվիրահատական շրջանի եւ ըստ անհրաժեշտության նրան արտասահման տեղափոխելու ընթացքին: Հայտնում էին, որ կյանքին վտանգ չի սպառնում: Ուժեղ մարզիկը դիմադրում է եւ պայքարում կյանքի համար՝ ենթարկվելով բարդ վիրահատությունների: Սակայն Սերգեյն առողջության համար պայքարելու դեռ երկար ճանապարհ ունի անցնելու: Երեւանում վիրահատվելուց

ամիս անց սկսվեց Ապրիլյան քառօրյա պատերազմը: Սերգեյը 2016-ի պատերազմին կամավոր մասնակցեց Թալիշի պաշտպանությանը: Հետո ծառայության էր մտել ԱՀ անվտանգության ապահովման կառույցներից մեկում: Մարզումները համատեղում էր ծառայության հետ: 2020թ. վրա հասած սարսափելի պատերազմում Սերգեյն իր մարտական խնդիրներն էր կատարում: Եղբայրը պատմում է, որ պատերազմի սկզբից նրանք միասին էին նախ՝ Հաղուրթի շրջանի Դիզափայտ լեռան ուղղությամբ, ապա՝ Շուշիի պաշտպանության ժամանակ: Հարուրը շտապ օգնության մեքենայի վարորդ էր այդ ժամանակ: Պատմում է, որ նոյեմբերի 3-ին Սղնախ գյուղի մերձակայքում Շուշիի պաշտպանության համար մարտեր էին մղվում: Վիրավորներ տեղափոխելուց հետո կրկին ռազմադաշտ վերադառնալու ճանապարհին զինվորական մեքենա նկատեց, որը սովորաբար վարում էր Սերգեյը: Շտապեց զանգել նրան, բայց պատասխան չկար: Հետո իմացավ, որ թշնամու գեղի բեկոր է ընկել խրամատի մեջ, որտեղ Սերգեյն ու մարտական ընկերներն էին: Բեկորի մի կտոր խրվել էր Սերգեյի գլուխը: Խրամատում գտնվող զինվորներից բոլորը վիրավորվել էին, կար մեկ զոհ: Անգիտակից ու անշարժ Սերգեյին ծայրահեղ ծանր վիճակում մյուս վիրավորների հետ տեղափոխեցին հիվանդանոց:



Կերպվեց Սերգեյի բուժումը Գուստանում: Հայրը եւ մայրը գտնվում են նրա կողքին: Հայրը՝ Արսեն Կարապետյանը, շնորհակալություն է հայտնում ԱՀ առողջապահության նախարարությանը եւ Նախագահ Արայիկ Հարությունյանին՝ անմիջական

միջ իրականացվեց դրամահավաք: Հայրը երախտագիտությամբ է մշում նաեւ Սերգեյի ընկերների, մարզչի անունները, շնորհակալություն հայտնում ողջ հայությանը՝ որդու եւ իրենց ընտանիքի համար ծանրագույն իրավիճակում բարոյական եւ նյութական աջակցություն ցուցաբերելու համար: Լավագույն բժիշկների միջնորդությամբ ու սրտացավ մարդկանց ջանքերով արվում է ամեն ինչ՝ Սերգեյին վերականգնելու համար:

Արցախյան 44-օրյա պատերազմն աղետալի հետևանքներ ունեցավ արցախցիների համար: Արցախյան մարզական աշխարհի փայլուն ներկայացուցիչներից շատերն առանց երկբայելու մղվեցին պատերազմի, երբ հայրենիքն իրենց օգնության կարիքն ուներ: Մարզական եւ մարտական լավ պատրաստություն ունեցող քաջորդիներն իրենց հմտությունները ներդրին վտանգված հայրենիքի պաշտպանությանը՝ պատրաստ իրենց առաքելությունը կատարելու:— նույնիսկ կյանքի գնով: Դաժան պատերազմն իր սեւ կնիքը թողեց մարզաշխարհի վրա՝ պատճառելով անդառնալի կորուստներ, միևնույն ժամանակ շատ մարզիկներից խլելով առողջությունն ու սպասվելիք մարզական փայլուն կարիերան:

2020թ. պատերազմի ծանրագույն օրերին՝ նոյեմբերի 3-4-ը լուր հայտնեցին, որ գլխի բեկորային ծանր վիրավորում է ստացել սամբոյի վառ աստղ Սերգեյ Կարապետյանը: «Լուսարար»-ը պարբերաբար հետևում էր արցախցի չեմպիոնի վիրահատման, հետվիրահատական շրջանի եւ ըստ անհրաժեշտության նրան արտասահման տեղափոխելու ընթացքին: Հայտնում էին, որ կյանքին վտանգ չի սպառնում: Ուժեղ մարզիկը դիմադրում է եւ պայքարում կյանքի համար՝ ենթարկվելով բարդ վիրահատությունների: Սակայն Սերգեյն առողջության համար պայքարելու դեռ երկար ճանապարհ ունի անցնելու: Երեւանում վիրահատվելուց

Հարուրը պատմում է, որ սկանապայթյունային բեկորային զանգուղեղային վնասվածքով, գլխուղեղի ծանր աստիճանի սալաջրոգով, դեմքի մասերում օտար մետաղական մարմիններով Սերգեյին հասցրին Երեւանի «Նաիրի» հիվանդանոց, որտեղ վիրահատվելուց հետո սկսել էր վերականգնվել: Բայց որոշ ժամանակ հետո դրական դիմամիկա էլ չկար: Անհրաժեշտ էր վիրահատվեր ու հետագա բուժումն ստանար արտասահմանում: Տեղափոխման հետ կապված եւ Գուստանում բուժումը կազմակերպելու համար Կարապետյանների ընտանիքն



Մարզիչ Էռնեստ Միրզոյանի հետ

աջակցություն ցուցաբերելու համար: Սերգեյի բուժումը պատշաճ կազմակերպելու հարցում իրենց ներդրումն ունեն նաեւ ՌԴ եւ Ամերիկայի հայ մարզիկները, որոնց կող-

որդու եւ իրենց ընտանիքի համար ծանրագույն իրավիճակում բարոյական եւ նյութական աջակցություն ցուցաբերելու համար: Լավագույն բժիշկների միջնորդությամբ ու սրտացավ մարդկանց ջանքերով արվում է ամեն ինչ՝ Սերգեյին վերականգնելու համար: Սերգեյը դանդաղ, բայց դեպի լավն է գնում: Հասկանում է ամեն ինչ, դեմքի միմիկայով հույզեր է արտահայտում, ժպտում է, երբ կողքին որեւէ պատմություն են պատմում, սակայն խոսել դեռ չի կարողանում: Բժիշկների խոսքով հնարավոր է Սերգեյի առողջական վիճակն ավելի բարելավվի, պարզապես՝ դանդաղ: Երկար ժամանակ է պահանջվում ապաքինվելու համար: Կար ժամանակ, որ չեմպիոնի մասնակցած առաջնություններին էինք հետևում ու հաղթանակի լուրն ավետում, իսկ հիմա պայքար է գնում նրա առողջական վիճակի բարեկարգման համար: Սերգեյի տեսակը համընկող չէ, այլ՝ պայքարող: Ուստի հույսով սպասում ենք, որ ոչ հեռու ապագայում կուրախանանք եւ կուրախացնենք մեր հայրենակցի՝ պատերազմում ստացած ծանր վնասվածքի հաղթահարման ու լրիվ ապաքինման լուրով: Առողջություն քեզ, մեր հերոս մարզիկ, սպասում ենք վերադարձիդ:

մտել էր ներս, վնասել ներքին օրգաններ: Անզգայացումից ուշքի եկա Երեւանի հիվանդանոց գնալու ճանապարհին: **-Հետագա բուժման, կրկնակի վիրահատման ու վերականգնման ծանր փուլերում էլ հավանաբար մտորումներ ունեիք: Ստածե՞լ եք, թե ինչը Ձեզ ողջ պահեց:** - Իմ ողջ մնալու համար առաջին հերթին երախտագիտական եւ իմ ծառայակից ընկերոջը՝ Դավիթին: Եթե նա կողքիս չլիներ, համոզված եմ, որ այսօր այստեղ չէի լինի ու Ձեզ հետ չէի գրուցի: Վերլուծելով կատարվածը՝ համոզվել եմ, որ մեզ փրկել է մեր ֆիզիկական վիճակը, պարապած լինելը: Փաստերը համադրելով՝ գիտակցում եմ, որ ողջ մնալու շանսեր չկային: Մարզված լինելու շնորհիվ է, որ կարողացա դիմանալ ուժեղ ցավին, եւ այդ վիճակում այդքան քայլել: Ասում են, թե վիրավոր ժամանակ մարդն ավելի է ծանրա-

նում: Ես հասկանում էի, թե Դավիթի համար որքան ծանր է ինձ տանելը, այն էլ էքստրեմալ պայմաններում՝ հանդերձանքով ու գեներով: Բայց նա դիմացավ, կարողացավ օգնել մեզ: Դավիթը պրոֆեսիոնալ մարզիկ է: Չգիտեմ, թե ինչ կլինեք, եթե նա կողքիս չլիներ: Չեմ կարող նրա մասին շատ պատմել, չնայած շատ եմ ուզում: Մարզվելը մեծ նշանակություն ունի կյանքի համար: Հիմա եմ հասկանում, որ եթե իմ կյանքում մի ճիշտ բան եմ արել, դա սպորտով զբաղվելն է: Պարապեք, դա կարող է փրկել ձեր եւ ձեր ընկերոջ կյանքը: **- Անդրանիկ, ուղիղ մեկ տարի է անցել չարաբաստիկ օրվանից, ինչպե՞ս եք Ձեզ զգում հիմա, ինչո՞վ եք զբաղվում, ի՞նչ ծրագրեր ունեք:** - Հիմա դեռ ապաքինվում եմ, շատ փոփոխություններ կան, ինքնազգացողությունս

նորմալ է: Արտաքինից չի երեւում, որ վիրավորվել եմ: Միայն նրանք, ովքեր ինձ գիտեին մինչեւ պատերազմը, տեսնելով՝ կարող են ասել, որ շատ միհարել եմ եւ հարցնեն, թե արդյո՞ք չեմ պարապում: Հարազատներիցս միայն մայրս է ինձ տեսել ծանր վիճակում, մյուսները տեսել են այն ժամանակ, երբ քիչ թե շատ նորմալ էի, կարողանում էի կանգնել: Ամեն անգամ այս դեպքը հիշելիս ինքս զարմանում եմ, թե ոնց եմ ողջ մնացել: Եթե ինչ-որ մեկը այս պատմությունը ինձ պատմեր, երեւի չէի հավատա: Մարդ, որը մի կերպ փրկվել է եւ մարդ, որն ուղղակի սպարում է, տարբեր ծեւով են զգում ու գնահատում կյանքը: Հիմա ինչ խնդիր էլ որ լինում է, հիշելով այս ամենը, հասկանում եմ, որ դրանք մանրուքներ են: Կյանքը շարունակվում է, եւ այն հիանալի է ամեն դեպքում:

ժառայությունից դուրս եմ եկել: Այժմ գլխավոր խնդիրս այն է, որ կարողանամ պարապել: Դեռ չեմ կարողանում մարզվել, բժիշկներն էլ խորհուրդ են տալիս դեռ սպասել, բայց այսպես չի մնա: Վաղ թե ուշ կվերադառնամ սպորտին: Չէի պատկերացնում, որ կարող է զալ ժամանակ, երբ չկարողանամ իմ սիրած զբաղմունքով զբաղվել: Ձինվորի համար կարելու է մարզվելը: Յուրաքանչյուր տղա բնատուր մարտիկ է: Եհիտ է, ամորոշության մեջ ենք, մարդիկ չգիտեն, թե ինչին հավատան, ինչին՝ ոչ: Բայց մենք պետք է ուժեղանանք, կոփվենք, մարզվենք, մեր գիտակցությունը հասցնենք հաղթելու համար անհրաժեշտ մակարդակի:

ԱՆՑՅԱԼԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ

ՐԱՖՅՈՒ ՆՈԹԵՐԸ ԸՅՈՒՄԻԱՄՅԻՆ ԱՐՑԱՄԻ ՄԱՍԻՆ

Մաս 1



Գանձակի ամրոցը

1881 թվականի հուլիս-օգոստոսին Րաֆֆին Թիֆլիսից ուղևորվել է դեպի Արցախ աշխարհ: Այստեղ կրճատումներով կենդակալացնենք (բլուզեր Արթուր Ղազարյանի էջից) Հայաստանի ամենագեղատեսիլ վայրերից մեկի՝ Յուսիսային Արցախի վերաբերող նրա գրառումները ըստ բնակավայրերի:

Սկսելով Ղազախից՝ նա ճանապարհորդել է դեպի Շամքոր, հետո Գանձակ հայկական քաղաքը, այնտեղից անցել Արցախ աշխարհի Ելենենդորֆ, Ազատ, Հաջիջեն, Գետաշեն, Մարտունաշեն (Կարաբուլաղ), Էրքեջ, Կարաչինար, Խարխափուտ, Գյուլիստան, Թալիշ և այլ վայրերով:

ԳԱՆՁԱԿ

Ի՞նչ տպավորություն կգործե մի պարսիկ իր քոչերով, երկար արխալուղով, շալե գոտիով, որ գլխին դրած ունի եվրոպական շլապա և մերկ պարանոցի վրա կապել է մետաքսյա սև փողպատ. նույն տպավորությունը գործեց ինձ վրա կիսապարսկական Գանձակը: Նեղ, ծուռունուռ փողոցներից և ոչ մեկը քարած չէր: Թանձր փողոցներ, աղբը, ամեն տեսակ ապակամուրջներ ծածկել էր հատակը: Տներից մեկը, քարից կամ աղյուսից շինած, դուրս էր նայում դեպի փողոցը բացված լուսամուտներով, իսկ նրա կշտին մի այլ տուն պատերով, ցածրիկ, որ դեպի փողոցը լուսամուտներ չուներ: Բարձր, հոյակապ տան մոտ, անդադար հանդիպում են կամ մի խրճիթ, կամ քանդված ավերակներ: Մեկը փողոցի լարից դուրս է ընկած, մյուսը ներս է գնացած: Ինչ որ գեղեցիկ է, դրանք են դարևոր, հսկա չինարիները, որ իրանց զով հովանու տակ պատապարտում են շինվածքները, և թույլ չեն տալիս նրանց բոլորովին շնչասպառ լինել փողոցի և տոբից: Չինարիները, որոնցից շատերը մեկ ու կես սաժեն տրամագիծ ունին, Գանձակի զարդն են. նրանք մնացել են պարսից տիրապետության ժամանակներից, և մի բարի բախտով ոչնչացրած չեն եղել: Այդ չինարիները պահպանում են Գանձակի առողջությունը, որ շատ նախանձելի վիճակի մեջ չէ: Առհասարակ շատ փոքր թվով կարելի է տեսնել տներ, որ պարտեզներ չունենային: Գեղեցիկ նունենիները, թզենիները և վարսավոր միմոզաները իրանց մետաքսյա ծաղիկներով դուրս են նայում բակերի ցածրիկ պատերի հետևից:

Այդ ջուրը, որից խմում է Գանձակի մեծ մասը, քարեզի ջուր է, որ հեռու տեղից բերվելով, գետնի տակով անցնում է թուրքերի թաղից, և տեղ-տեղ բացվում է թուրքերի տներին մեջ: Թուրքերը այդ ջրի հետ ինչ օյին ասես խաղում են, ամեն անմաքրություն նրա մեջ լվանում են, նրանով նստած են անում, հավատացած լինելով, որ ջուրը չի պղծվի: Այդ հերիք չէ, նա բավական երկար տարածության վրա անցնում է թուրքերի գերեզմանատան տակով և բերում է իր հետ փտությունների լուծված մասերը: Խմելու միջոցին մարդ զգում է մի տեսակ թանձրություն, և մի տեսակ մածոցիկ տպավորություն է գործում բերանի մեջ, կարծես մածուն լինի: Այստեղից հասկանալի են այն հիվանդությունները, որոնց անընդհատ ենթարկվում են զանձակեցիք, մանավանդ ամառվա ժամանակ: Այդ քաղաքում փոքրիշատե տանելի է գետի ջուրը, բայց ամառը գետը բոլորովին ցամաքած է լի-

նում, և գտնված ջուրն էլ վերևից գանազան անվակներով վեր են առնում ցանքերը կամ այգիները ջրելու համար:

Գետի ջրին գալով, ես չեմ կարող մի քանի խոսք չասել այդ մասին: Գանձակում երեք օր մնալով, ես անդադար լսում էի գանազաններ, կռիվներ, դժգոհություններ ջրի պակասության մասին: Գանձակը շինված է նույն անունով գետի վրա, որ քաղաքը երկու մասն է բաժանում. մի մասում բնակվում են հայերը, մյուսում՝ թուրքերը: Գարնան սկզբում գետը սաստիկ հորդանում է և ծածկում է իր եզերքը, իսկ ամառը այնտեղ մի կաթիլ ջուր չէ կարելի տեսնել, գետը ցամաքում է: Եղած ջուրը, ինչպես վերևում ասացի, գանազան անվակներով վեր են առնում այգիները և ցանքերը ջրելու համար: Այդ ջուրը այնքան անբավական է, որ համարյա ամեն օր կռիվեր են լինում նրա բաշխման համար: Գանձակեցիք հավատացնում էին, որ ջուրը առաջ խիստ շատ էր լինում. իսկ այժմ «մարդկանց մեղքի համար» սակավացել է: Գանձակի գետի ջրի սակավանալը ուրիշ պատճառի չէ կարելի վերաբերել, բացի նրանից, որ անտառները սաստիկ անխնա կերպով ոչնչանում են: Այն լեռները, որոնց մեջ գտնվում են գետի աղբյուրները, առաջ պատած են եղել խիստ անտառներով, իսկ այժմ կամ բոլորովին մերկացել են, կամ մեծ ծառերի փոխարեն բլիթեր են տեսնվում:

Ջրի հարցը Գանձակի կյանքի հարցն է. եթե այդ մասին պետք եղած հոգածություններ չկատարվեն (որոնց մեջ գլխավոր տեղը պետք է բռնե անտառների պահպանությունը), այդ քաղաքը մի ժամանակ սովանաի կլինի:

Գանձակի գլխավոր արդյունաբերությունն է խաղողը և գինին, որ մեծ քանակությամբ արդյունահանվում է, տարվելով գլխավորապես Թիֆլիս: Շատ փոքր է այն գանձակեցիների թիվը, որ մի, երկու կամ երեք այգի չունենար: Տերերից ամեն մեկը յուրաքանչյուր տարի մի քանի հազար ռուբլու գինի է վաճառում: Ի՞նչ կլինի ժողովրդի վիճակը, եթե արդյունքների այդ աղբյուրը ցամաքի: Գինի պատրաստում են հայերը միայն, մահմեդականներին, որովհետև կրոնքով մեղք է համարվում աստուծո պարգևած բարիքներից մեկը՝ խաղողը, պղծել և նրանից գինի պատրաստել, այդ սնահավատությունից դրդված, իրանք գինի չեն պատրաստում և իրանց խաղողը վաճառում են հայերին, կամ իրանց այգիները նրանց վարձով են տալիս:

Գանձակի մյուս արդյունահանությունն է ալյուրը: Այդ արդյունահանությանը շատ նպաստում է պ. Հախվերդյանի շոգեշարժ աղորիքը: Պարոնի մարդիկը գնում են մեծ քանակությամբ ցորյան, և աղալով ուղարկում են Թիֆլիս կամ ուրիշ տեղեր: Այդ, իհարկե, շատ օգնում է շրջակա գյուղացիներին, որոնց ձեռքումն է ցորյանի արդյունաբերությունը: Եթե այդ աղորիքը չլիներ, գյուղացին ստիպված էր ինքն հասարակ ջրաղացի մեջ աղալ տալ ցորյանը և ալյուրը ուրիշ տեղ տանել: Բայց պ. Հախվերդյանի աղորիքը հեշտացնում է գյուղացու գործը, որովհետև նրան միջոց է տալիս իր բերքը իր տան մեջ վաճառելու, առանց օտար երկիր տանելու:

Առավոտյան մի քանի այցելուներից ազատվելով, շտապեցի դուրս գալ հյուրանոցի խեղդված սենյակից, բազարը տեսնելու համար: Այստեղ իմ ուշադրությունը գրավեց մեյդանը (հրապարակը): Դա մնացել է պարսից տիրապետության ժամանակներից, մի քառակուսի, փոքր-ինչ երկայնաձև ահագին հրապարակ է, շրջապատած դարևոր չինարի ծառերով: Այդ ծառերը իրանց ընդարձակ ստվերի տակ հովանավորում են խանութները, որ գտնվում են հրապարակի շուրջը: Երևում է, ծառերի վերաբերությամբ պարսիկները թե լավ ճաշակ և թե խնամք են ունեցել:

Այդ հրապարակի մոտն է քաղաքի նշանավոր մեջխոը:

Նրա գլխավոր դռան աջ և ձախ կողմերում



Գանձակ գետի վրա պարսկական կամրջի ավերակները

բարձրանում են երկու բարձր մինարեթներ: Բացի դրանցից, դռան երկու կողմում կան երկու սաքուններ, որոնց վրա նստած են մուլլաները: Այդ տեսնելով, ես իսկույն հիշեցի Պարսկաստանը: Այդ մուլլաները գանազան գործեր են կատարում. նրանք աղոթքի թղթեր են վաճառում, տպված երկար, ժապավենաձև թղթի վրա, նրանք կնիքներ են վարում, նրանք անգրագետ մարդկանց համար նամակներ են գրում իրանց բարեկամներին ուղարկելու համար. նրանք միևնույն ժամանակ նոտարիուսներ են, գրում են գանազան տեսակ դաշնագրեր, պարտամուրհակներ և այլն, չնայելով, որ քաղաքում պաշտոնական նոտարիուս կա: Նրանց մոտ վաճառվում են «տեղ ողորմյա»-ներ, վաճառվում են Քարբալայի սուրբ հողից շինված փոքրիկ մոհրներ, որոնց վրա մահմեդականները նամազ անելու ժամանակ խոնարհվում են, համբուրում են, երևակայելով, թե Քարբալայի սուրբ երկիրն են համբուրում, որտեղ թափվել է իրանց իմամների արյունը: Միևնույն մուլլաները վաճառում են գանազան տեսակ գրքեր, կախարհություններ են անում և իրանց հաճախորդների համար գանազան թիլիսմանական թղթեր են գրում: Դրանց կշտին մի քանի երեխաներ, գետնի մեջ փորած փոսիկների մեջ ածուխ էին ածել, մի կարողոնի կտորով հովիարում էին և թարմ սիմինդր էին խորովում վաճառելու համար: Սկսած արդ, ինչ որ տեսա, հիշեցրին ինձ Պարսկաստանը... Ես դիմեցի դռան մուլլաներից մեկին, խնդրելով՝ կարելի՞ է արդյոք մեջխոը տեսնել: Նա զարմացած աչքերով չափեց ինձ ոտքից ցուլիս, նայեց գլխարկիս, նայեց կապույտ ակնոցներիս, և ապա բավական դժգոհությամբ պատասխանեց՝ կարելի է:

Ես մտածեցի գրավաճառ, կախարհ, նոտարիուս, կնիքներ փորող մուլլայի բերանին փոքր-ինչ յուղ քսել, նրան մի քանի արասի շահ տալ և հարցրի՝ արդյոք ունի՞ այս և այն գրքերը: Իմ պահանջածը Ղարաբաղի խաների պատմությունն էր, մեկը հեղինակություն Միրզա Ջամալի, մյուսը հեղինակություն Միրզա Աղիօյրալի: Այդ աշխատություններից և ոչ մեկը չգտնվեցավ մուլլայի մոտ, նրա խոսքերից երևաց, որ այդ պատմությունները դեռ տպված չեն, այլ ձեռագիրները գտնվում են հեղինակների ժառանգների մոտ:

Դռնից ներս մտանք մեջխոի բակը, որ քա-

ռակուսի ձև ուներ: Չորս կողմում պարսկական ճաշակով շինված էին փոքրիկ և մեծ խուցեր, որոնց մեջ մուլլաները նստած, բարձր ձայնով դորան էին կարդում: Խուցերից մի քանիսը հատկացրած էին երեխայոց դպրոցի (մադրասե) իսկ մի քանիսը չափահասների ուսման համար (թաքիա): Ես հետաքրքրվեցա տեսնել երեխաների դպրոցը: Թեև հուլիս ամիսն էր, տոբը խեղդում էր, բայց նրանց չէին արձակել: Մի սենյակում լցված էին 40- 50-ի չափ ամեն հասակի երեխաներ, 5 տարեկանից մինչև 20 տարեկան: Նրանք խառնափնթոր կերպով ծալապատիկ նստել էին միմյանց մոտ, ամեն միըն իր տնից բերած օթոցի վրա: Նայելով ծնողների կարողությանը, այդ օթոցները ունեին իրանց լավ բայ մասնաշաղկապները: Այնտեղ կարելի էր տեսնել մի քրքրված փսիաթ կտորից սկսյալ մինչև թանկագին խալիչա: Բոլոր աշակերտները, գրքերը իրանց առջև հատակի վրա դրած, անդադար օրորվելով, բարձր ձայնով կարդում էին: Երևակայեցեք, թե ինչ աղմուկ և բաբելոն կլինի, երբ 40-50 աշակերտ միանգամից ձայն է բարձրացնում: Շատերը կարդում էին, շատերը ոչինչ չէին կարդում, միայն աղաղակում էին, ոմանք ձայն էին հանում, միայն բերանները բաց էին անում և շրունքները շարժում էին: Այդ ընդհանուր աղմուկի մեջ դժվար էր որոշել, թե ո՞րն էր կարդացողը և ո՞րը չկարդացողը:

Վարժապետ-մուլլան նստած էր մի անկյունում և գիրք էր կարդում: Նա գբաղված էր իր գործով: Աշակերտները դրանից օգուտ քաղելով երբեմն միմյանց բոթում էին, հրմշտում էին, կամ միմյանց մագերից քաշում էին: Բողոքներ էին բարձրանում: Մուլլան կանչում էր իր մոտ անհանգստին, իր կշտին դրած ճիպոտը վեր է առնում, մի քանի զարկ տալիս էր նրա ափերի մեջ, սկանջներից քաշում էր, հետո թող էր տալիս, որ գնա իր տեղը նստի: Չետոնա կրկին սկսում էր իր կազմարարությունը: Այդ բոլորը կատարվում էր մեր աչքի առջև: Որովհետև սենյակի փեմջարեները բացվում էին դեպի բակը, մենք դրսից նայում էինք:

Պարսկական մանկավարժության եղանակները ինձ վաղուց արդեն ծանոթ լինելով, ես չուզեցի երկար նայել այդ տանջանքի և բթամտության հիմնարկության վրա, միայն զարմանում էի, որ մոտ մի ամբողջ դար ռուսաց տիրապետությունը ոչինչ չէր փոխել դրանց վաղեմի քաղաքակրթությունից: Դարձյալ մնացել էին նույն հետադեմ, խավար թուրքերը, ինչ որ էին Ջավադ խանի ժամանակ:

Ես խնդրեցի մուլլային, որ ցույց տա մեջխոը... հարցնելով, թե ո՞ր թվականից է շինված: Նա ինձ ոչինչ ասել չկարողացավ, միայն հայտնեց, որ Շահ-Աբասի մեծի շինածն է: Որովհետև այս կողմերում ամեն մի հոյակապ շինված ընծայում են Շահ-Աբասին, թեև նրանից դարերով առաջ շինված լինելը, այդ պատճառով մուլլայի ասածը շատ հավանական չէր կարելի համարել:

Մեջխոը տեսնելուց հետո, ես կամենում էի տեսնել Ջավադ-խանի պալատը, որ վերջինն էր Գանձակի տիրապետող խաներից: Որովհետև քաղաքի դրսումն էր գտնվում, հարկավոր էր կառքով գնալ: Քառորդ ժամվա մեջ ես հասա այնտեղ, Պալատի դուռը և դռան կողմի մի քանի շինվածքների ավերակներն էին մնացել միայն: Կառքով ներս մտանք: Երևում էր, որ այստեղ գտնվում էր խանի ամառային ամարաթը: Որովհետև այստեղ մի ընդարձակ այգի է եղել, շրջապատի պարիսպների մոտ շարքով տնկած ահագին չինարիները դեռ մնում էին: Մեջտեղում կար մի քառակուսի լճակ, նորա շուրջը զարդարող մարմարյա քարերը բոլորը քանդել և տարել էին, ջուրը դեռ մնում էր և անշարժությունից կանաչել, պատած էր մամուռով: Այդ գեղեցիկ լճակը, որի հստակության մեջ ամառային տոթի ժա-

ԽՈՍՔ ՇԻՇԱՍԱԿԻ

ՆԱԻՐՈՒՅԻ ԻՍԱԿՅԱԿԻ ԱՆՎԵՐԳՅԱՆ

մանակ լեղանուն էին, զովանուն էին հարեմները, այժմ մի հոտած ճահճի էր նմանում: Լճակի երկու կողմում երևում էին երկու բարձր քոչքերի ավերակներ. քարերը, աղյուսները տարել էին, մնացել էին երկու հողակույտ միայն: Այդ քոչքերից հարեմները նայում էին լճակի հայելու մեջ: Դռան հանդեպ, այգու մյուս ճակատում երևում էին հարեմխանայի ավերակները: Այնտեղ, ուր պահվում էին երկրի կնիկներից ամենագեղեցիկները, այժմ մողեսներ, օձեր ու չղջիկներ էին բնակվում: Հին փառքից, հին վայելչությունից ոչինչ չէր մնացել: Ամեն ինչ տրորվել է, ոչնչացել էր հավիտենական անեծքի և դատապարտության տակ: Որքա՞ն հայ աղջիկներ զոհել էին այստեղ իրանց ողջախոհությունը, որքա՞ն հայ կնիկներ վատնել էին այստեղ իրանց պատիվը:

Պատմում են, որ Ջավադ-խանին հայտնեցին մի գեղեցիկ աղջկա մասին, որ նոր էին պսակում և հարսանիքի համոզեցը դեռ չէր վերջացել: Նա ուղարկում է իր նոցարներին աղջկա ծնողների մոտ. պահանջում է, որ նորապսակ աղջիկը իր փեսայի առագաստը մտնելուց առաջ ուղարկեն իր մոտ: Ծնողները երկյուղից կատարում են բռնավորի կամքը. նորապսակին տանում են խանի ամարաքը: Խանը տեսնելով գեղեցիկուհուն, կամենում է նրա հետ փոքր-ինչ սիրախոսություններ անել: Բայց նորահարսը, գլուխը դեպի ցած խոնարհած, մնում է լուռ կանգնած նրա առջև, և բերանը չէ բաց անում. «Դեպի վեր նայիր, ասում է խանը, տես ո՞վ է քեզ մոտ կանգնած»: Նորահարսը զգացմունքով պատասխանում է. «Դու էլ դեպի վեր նայիր, տես ո՞վ է այնտեղ կանգնած»... Նա ցույց է տալիս բռնակալին արդարադատ երկինքը և նրա աչքերը լցվում են արտասուքով:

Ասում են, որ այդ բողոքը այն աստիճան ազդում է խանի սրտին, որ առանց նրան դիպչելու, հետ է ուղարկում ծնողների տունը և այն օրից երդվում է հայ կնիկներ չբռնաբարել: Առհասարակ Ջավադ-խանը բավական սեր է ունեցել դեպի հայերը, նա հաճախում էր հայոց եկեղեցին և ծննդյան տունին փող էր ընծայում, որ խաչը իր անունով քրից հանեն: Մինչև այսօր Քանձակի սուրբ Գրգորիանի եկեղեցու այուններից մեկի վրա դեռ մնում է հին արձանագրությունը՝ «խանի այուն»: Այդ այունի մոտ սովորաբար կանգնում էր խանը, երբ հայոց եկեղեցի էր գալիս: Նրա դեպի հայերը ունեցած համակրության գլխավոր պատճառն այն էր, որ հայերից միշտ հավատարմություն էր տեսել, և հայոց մեկիքները միշտ օգնում էին նրան վտանգի ժամանակ:

Մյուս օրվա առավոտը ես կամեցա տեսնել Քանձակի հին բերդը: Այդ բերդը, որ ինձ ամիս պահեց իր ամուր պարիսպների տակ ռուսաց զորքերին, այժմ բոլորովին ավերակ է: Նա բաժանված է մի քանի մասների: Մի մասնում, զանազան բաժինների մեջ, շինված էր խանի ամարաքը, կանանցը, դիվանատունը, բաղանիքները և կեցության այլ հարմարությունները: Մի մասնում շինված էին բազմաթիվ կացարաններ, որոնց մեջ լցվում էր քաղաքի կամ շրջակա գյուղերի ժողովուրդը պաշարման ժամանակ: Ցույց էին տալիս այն մասը, որ հայերին էր հատկացրած, և այն մասը ուր թուրքերն էին բնակվում: Բերդի շրջապարսպի մի քանի մասները և ամուր աշտարակներից մի քանիսը դեռ ողջ են: Երկաթե ահազին դռները ես տեսա թավալված հողակույտերի մեջ: Պատմում էին, որ այդ բերդը մի քանի տարի առաջ բոլորովին քայքայված չէր: Բայց այն օրից, երբ տեղային կառավարությունը սկսեց աճուրդով մաս-մաս վաճառել շինվածքների նյութը, քարաքայքի գնելով, սկսեցին քանդել քարերն ու աղյուսները, տարան իրանց համար նոր բնակություններ կառուցանելու: Այդ բերդը ծառայում էր որպես պատասպարան թե պարսից խանների, և թե Քանձակի մեկիքների համար (Քանձակի գավառում Ջավադ խանի ժամանակ եղել են չորս մեկիքներ: 1. Խաչակապ գյուղի մեկիք Մովսեսը, որը խանի համար զենքեր էր պատրաստել տալիս: (Խաչակապ գյուղի հայերը մինչև այսօր հայտնի են որպես լավ զինագործներ, երկաթը նրանք ստանում են Բանանց գյուղից): 2. Ոսկանապատ գյուղի մեկիք Յուսուբը, որը մեկիք Շահնազարի որդին էր: 3. Բարսում գյուղի Ռուսամը, որը տիրում էր ամբողջ Շամքորի վրա և խանի ամենագորավոր դաշնակիցներից մեկն էր: 4. Գետաշեն գյուղի մեկիք Մնացականն էր, Մ. Եղգարի որդին): Երբ 1790 թվին (?) Շուշվա Իբրահիմ խանը, վրաց Գիորգի իշխանը, միացած լեզգիների հետ (??) պաշարեցին այդ բերդը, նրա աշտարակներից չորսը հանձնված էր շատ հայ մեկիքների պահպանությանը: Դրանցից մեկն էր մեկիք Մեջլումը, մի քաջ, խորամանկ, միևնույն ժամանակ անբարիշտ մարդ: Մեկիք Մեջլումը պաշարման ժամանակ նույնիսկ բերդում գնդակ ստացավ մի գաղտնի չարագործից և վիրավոր տարվեցավ իր վրանը, Ջավադ խանը մի ամբողջ շաբաթ նրա սպանված մարմինը պահեց, թե ճաշին և թե ընթրիքին նրա մոտ կերակուրներ էր ուղարկում իր խոհանոցից՝ ցույց տալու համար, թե մեկիք Մեջլումը դեռ մեռած չէ, որպեսզի գորքը այդ քաջի մահը լսելով չփիտալի: Երբ պաշարումը վերջացավ, թշնամուն հեռացրին, Ջավադ-խանը նրա մարմինը թաղել տվեց Քանձակի Ս. Գրգորիանե մայր եկեղեցու աջակողմյան խորանում, Աղվանից Ներսես կաթողիկոսի (?) գերեզմանի մոտ, թեև դա հակառակ էր հայ ժողովրդի կամքին:

Բերդի ավերակները տեսնելուց հետո ես մտա հասարակաց այգին, որ շատ հեռու չէ այնտեղից: Բոլոր գավառական քաղաքներում, որքան պատահել է ինձ տեսնել հասարակաց այգիներ, Քանձակինը կարելի է ամենագեղեցիկը համարել: Այդ այգին տնկված է վարանցովի փոխարքայության ժամանակներից և խիստ խնամքով պահպանված է: Այնտեղ կարելի է տեսնել, սկսյալ հնդկական մագնոլիայից մինչև տեղական ամենաընտիր տունկերը: Միակ գեղեցիկ բանը, որ գրավեց Քանձակում իմ ուշադրությունը, այդ այգին էր: Պետք է ասած, որ գանձակեցիք առհասարակ այգեգործության մեջ շատ առաջ են գնացել: Նրանց խաղողը իր ընտիր հատկություններով ծանոթ է և թիֆլիսեցիներին:

...Քանձակ քաղաքի տեղը ավերակ է այժմ, տների փլատակները դեռ երևում են: Այստեղ կա մահճակալների մի ուխտատեղի, որ կոչվում է Գոգ-Իմամ: Դա առաջ պատկանելիս է եղել հայերին, և այնտեղ է խոսրով նահատակի գերեզմանը:



Կյանքի 80-րդ տարում կյանքից հեռացել է ԼՂԴԺ ժողովրդական և ԳՀ վաստակավոր արտիստ Նաիրուհի Ալավերդյանը: ԱՅ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը ցավակցական ուղերձ է հղել երգչուհու մահվան կապակցությամբ, իր վշտակցությամբ ու գորակցությունը հայտնել ընտանիքի անդամներին, արվեստասեր հանրությանը:

«Անհուն թախիծ և անասելի ցավ ենք ապրում. այլևս մեզ հետ չէ ԼՂԴԺ ժողովրդական և ԳՀ վաստակավոր արտիստ, «Հայաստանի պետական ֆիլհարմոնիա»-ի Արցախի մասնաճյուղի մանկապատանեկան խմբի տնօրեն և գեղարվեստական ղեկավար Նաիրուհի Իսահակի Ալավերդյանը: Երկրային 80 տարիները մեկ ակնթարթում միաձուլվեցին երկնային ուրտուների անասհմանությանը:

Ծնվել-մեծացել է ազնվական ընտանիքում: Մշակութային հոգեկերտվածքը ժառանգել է մտավորական ծնողներից: Բանասիրական կրթությամբ երիտասարդ մասնագետը, հավատարիմ մնալով վաղ պատանեկան շրջանի նախասիրություններին և օժտվածությանը, իր գործունեությունն է ծավալել երաժշտության բնագավառում. «Ղարաբաղ» երգի-պարի պետական անսամբլի մենեջրգչուհի-պարուհի, ապա և «Ղարաբաղ» էստրադային անսամբլի մե-

նեջրգչուհի: Նրա տարերքը հայկական ժողովրդական, գուսանական երգերն էին, որոնք կատարում էր զուլալ ձայնով: Երգացանկի մաս կազմող արտասահմանյան երգերը նույնպես համ ու հոտ էին ստանում նրա կատարումներից: Իր արվեստով 1970-80-ական թվականներին ազգերի բարեկամությունը քարոզող երգչուհին 1980-ականների վերջերից երգում էր ազգային-ազատագրական երգեր: Արցախյան շարժման նրա մեկնությունն ու պայքարը հայ երգն էր, որը շուտով տեղափոխեց նկուղներ, այնուհետև զորամասեր: Ժողովրդական երգչուհին հյուրախաղերով հաճախ էր շրջագայում հայաստան երկրներ՝ Ֆրանսիա, Յուգոսլավիա, Բուլղարիա, Պարսկաստան, Գերմանիա և այլուր:

Ոչ միշտ ճաշակելով կյանքի քաղցրահամը՝ երգչուհին կամքի բացառիկ ուժով հաղթահարել է փոքր ու մեծ դժվարությունները, հոգևոր ու ֆիզիկական կորուստները: Տարանուն փորձությունները դիմակայելու նրա օրինակը կենսասիրության ազդակ էր, մինչև վերջ պայքարելու լիցքատու հնար: Դժբախտ պատահարից Գերմանիայում երկարատև բուժումներից և վերականգնումից հետո տունդարձի ճանապարհին, երբ Շուշվի բարձունքից երևացել է Ստեփանակերտը, նա, չկարողանալով տիրապետել իր հորդ հուզումները, ասել է, որ միայն «Ստեփանակերտ» երգը երգելու համար արժեք լինել երգչուհի և հայ:

«Գեղազետ-մանկավարժը կայացած կարող է համարվել, երբ իրեն գերազանցող սերունդ դաստիարակի». երբեմն սիրում էր կրկնել երգչուհին: Դեկավարելով «Հայաստանի պետական ֆիլհարմոնիա»-ի Արցախի մասնաճյուղը՝ Նաիրուհի Ալավերդյանը, իր հավատամքը, կրթել և դաստիարակել է իրեն գերազանցող սերունդ:

Երգչուհին երկա՛ր-երկար ապրելու է իր երգերով ու իր երգերը հավերժությանը փոխանցող սերունդներով:

ՀՈՒՆ-ԵՐԵԿՈ՝ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ՀԻՇԱՍԱԿԻՆ



Արդեն մեկ տարի է, ինչ կյանքից հեռացել է Արցախում օտար լեզվի ճանաչված մասնագետ, ԱՅ վաստակավոր մանկավարժ, դոցենտ, գիտության վաստակավոր գործիչ Էլեոնորա Արմենակի Հայրապետյանը: Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ նա էլ շատերի պես ժամանակավորապես ապաստանել էր Երևանում, սակայն ճակատագիրն այն փորձություն էր նախատեսել: Նա վարակվեց չարաղետ covid-ով, որից փրկվել չհաջողվեց: Այդ սարսափելի օրերին հարազատները, ընկերները չկարողացան վերջին հրաժեշտը տալ նրան:

Մեկ տարի անց՝ հոկտեմբերի 15-ին, նրա մահվան տարելիցին, Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանը (ՄՄՀ), ի դեմս օտար լեզուների ամբիոնի, կազմակերպեց հուշ-երեկո սիրված ու հարգված գործընկերոջ հիշատակին: Հրավիրվել էին մարդիկ, որոնք Էլեոնորա Հայրապետյանի հետ ճանապարհ են անցել, որն իրենց կյանքում մեծ դեր է ունեցել մասնագիտական կայացման ու զարգացման ճանապարհին:

Է. Հայրապետյանն աշխատել է Արցախի պետական,

ապա «Մեսրոպ Մաշտոց» համալսարաններում, զուգահեռ՝ թարգմանիչ ԱԳՆ-ում: Բոլոր ելույթ ունեցողները՝ ՄՄՀ ռեկտոր Դոնարա Գաբրիելյանը, ԱրՊՀ նախկին ռեկտոր Մանուշ Մինասյանը, տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ռուզաննա Մանգասարյանը, այդ բուհերի օտար լեզուների ամբիոնների ճանաչված մասնագետները, նախկին ուսանողները ներկայացրին, թե է. Հայրապետյանը ինչպես է կարճ ժամանակամիջոցում բարձրացրել այդ ամբիոնների մակարդակը՝ ղեկավարելով դրանք, որոնք հարյուրավոր բարձրակարգ մասնագետներ են թողարկել մեր հանրապետության համար: Գործընկերները բնութագրեցին նրան որպես պայծառ ու լուսավոր մարդու, հայրենասեր արցախուհու, պահանջկոտ, միջակությունը չհանդուրժող ամբիոնի ղեկավարի, բարձր պրոֆեսիոնալիզմով մասնագետի:

Է. Հայրապետյանը արժանացել է բազմաթիվ պարգևների՝ «Երախտագիտություն» և ԱրՊՀ ոսկե մեդալների ու շնորհակալագրերի: Նա բարեգործական ծրագրեր էր իրականացնում եկեղեցիներում, երեխաների խնամքի ու պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությունում, տուն-ինտերնատում:

Ներկաների համար դժվար էր պատկերացնել, որ այլևս իրենց հետ չէ սիրելի Էլեոնորա Արմենակյանն, սակայն երեկոյին չէր գերիշխում թախծոտ տրամադրությունը: 21° որ է. Հայրապետյանը հունորի զգացումով, կենսասեր ու լուսավոր անձնավորություն էր:

ՆՆՁԻՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՐ




Ցավալի լուրը արագորեն տարածվեց. 57 տարեկան հասակում կորոնավիրուսային հիվանդությունից մահացել է Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 միջնակարգ/հոսքային դպրոցի հայոց մասնաճյուղի ուսուցչուհի Արմինե Յուրիի Մովսիսյանը: Եվ անմիջապես էլ համացանցում տարածվեց աշակերտների, ուսուցիչների, նրան ճանաչող-չճանաչողների ցավակցական խոսքը: Անցած ամսին «Լուսարար»-ը գետեղել էր նրա ելույթը Ուսուցչի օրվա կապակցությամբ ԱՅ ԿԳՄՍ-ում տեղի ունեցած միջոցառումից, որտեղ նա հրավիրվել էր պարզապարզ համար: Ինչքա՞ն ուրախ էր, որ մեծար-

վում է ուսուցիչը, գնահատվում՝ նրա աշխատանքը: 33 տարի անընդմեջ աշխատել է նույն դպրոցում՝ սկսելով ջոկատավարից և հասնելով երկու տարակարգ ունեցող ուսուցչի մակարդակի: Շարունակում էր հաղթահարել մասնագիտական բարձունքները, նպատակ ուներ անցնել ուսուցչի տարակարգի բոլոր չորս փուլերը: Աշխատում էր իր վրա, մեծ տեղ էր տալիս ինքնակրթությանը և նույնն էլ պահանջում աշակերտներից: Հետազոտող ուսուցիչ էր: Մասնակցում էր Ստեփանակերտում տեղի ունեցող բոլոր գիտաժողովներին, ելույթներ ունենում: Այդ գիտաժողովների ժողովածուներում տեղ էին գտնում նրա հողավածները, իսկ վերջերս առանձին գրքով լույս է տեսել նրա հողավածների գիրքը: Սիրում էր կյանքը, ծաղիկներ, ժպիտը միշտ դեմքին էր: Սակայն կյանքը հիմա արագ է փոխվում, և նրա անակնկալներն անկանխատեսելի են...

Մեր խորին ցավակցությունն ենք հայտնում հանգուցյալի ընտանիքին, մերձավորներին, գործընկերներին:

ՎԵՐՋԻՆ ԷՋ

ՀԱՎՈՐ ԿԱՐԱՊԵՆՅԻ «ԱՂԱՄԻ ԳԻՐՔԸ»
ՀՐԱՏԱՐԱՎԿԵԼ Է ԱՆՂԵՐԵՆՈՎ



Վեպի անգլերեն հրատարակությունը նվիրված է հանգուցյալ գյուտարար, արդյունաբերող, գործարար, մարդասեր, բարերար Կարապենցի մի քանի ստեղծագործությունների հովանավոր և մեկենաս, վաղեմի բարեկամ Սարգիս Հակոբյանին: Վեպը թարգմանել է Արլինգթոնի Հայ մշակութային հիմնարկության վարիչ-խնամակալ Արա Ղազարյանը: Գիրքը ներառում է ներածություն: Տասնութ զուլխներից բաղկացած վեպին հաջորդում են ծանոթագրություններ և հեղինակի գլխավոր ստեղծագործությունների հակիրճ մատենագիտությունը: «Աղամի գիրքը» Կարապենցի երկրորդ վեպն է: Նա գրել է այն իր առաջին «Կարթագենի դուստրը» վեպից (1972) մեկ տասնամյակ անց: Հեղինակը սկսել է գրել այն 1980 թվականի կեսերին և ավարտել ինն ամսում: Վեպը հրատարակվել է 1983-ին, Նյու Յորքի «Ոսկետառ» հրատարակչատան կողմից: Այն արժանացել է մի քանի սփյուռքային գրողների և գրաքննադատների բարձր գնահատանքին, միաժամանակ արժանացել Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Ալեք Մանուկյան և Ֆրանսահայ գրողների միության էլիզ Գավուբժյան-Ալվազյան գրական մրցանակներին: Վեպի երկրորդ հրատարակությունը Հայաստանում լույս է տեսել 2012 թվականին: «Աղամի գիրքը» նաև երկու անգամ բեմականացվել է առաջին անգամ՝ Թեհրանում (2005թ.)՝ Կարապենցի ծննդյան 80-ամյակի պատվին, Սեթ Գոջամանյանի բեմադրությամբ՝ «Ուր պիտի թաղվենք» վերնագրով, ապա՝ Լոս Անջելեսում (2017թ.): Արմեն Սարգսյանի բեմադրությամբ «Այո, Աղամ Նուրյան» վերնագրով:

«Աղամի գիրքը» կառուցված է երեք մակարդակի վրա. Ամերիկայի հասարակական կարգի վիճակը քսաներորդ դարի վերջին տասնամյակներում (1980-ականներ), սփյուռքահայության ճգնաժամն այդ ժամանակահատվածում և ներկա դարի ծայրին գտնվող մարդու տագնապը, որոնք ծառայում են որպես— որոշակի ճշմարտության հասնելու միջոց: «Բացի յետահայեցողությունից», ինչպես նշում է հանգուցյալ խմբագիր, գրող և թարգմանիչ Արիս Սևակը, «Գիրքը գրուած է կեանքը վերադարձի ճանապարհով հասկանալու և յառաջիկայ ճանքանքը ապրելու համար, մետաֆիզիկականը իրականի հետ, երբեմն հեռուելով ոչ-ի վրա: - Գոյութիւն ունեցող իրողութիւններ, որոնք ավելի հզոր են, քան իրականը. հետևաբար, կապից-կապ, օղակից-օղակ ի յայտ է գալիս չոր լրագրողական ոճ՝ շոշափելի և ոչ միթական իրականությունների միջև բախտն առաջացնելու համար: Այս տեսանկյունից «Աղամի Գիրքը» մուտք է գործում ժամանակակից ամերիկեան գրականության մեջ, որը տխուր և աննկարագրելի այց է միայնակ մարդկանց և միայնակ համայնքների»:

Պրոֆ. Լոս Անջելեսում (2017թ.): Արմեն Սարգսյանի բեմադրությամբ «Այո, Աղամ Նուրյան» վերնագրով: «Աղամի գիրքը» կառուցված է երեք մակարդակի վրա. Ամերիկայի հասարակական կարգի վիճակը քսաներորդ դարի վերջին տասնամյակներում (1980-ականներ), սփյուռքահայության ճգնաժամն այդ ժամանակահատվածում և ներկա դարի ծայրին գտնվող մարդու տագնապը, որոնք ծառայում են որպես— որոշակի ճշմարտության հասնելու միջոց: «Բացի յետահայեցողությունից», ինչպես նշում է հանգուցյալ խմբագիր, գրող և թարգմանիչ Արիս Սևակը, «Գիրքը գրուած է կեանքը վերադարձի ճանապարհով հասկանալու և յառաջիկայ ճանքանքը ապրելու համար, մետաֆիզիկականը իրականի հետ, երբեմն հեռուելով ոչ-ի վրա: - Գոյութիւն ունեցող իրողութիւններ, որոնք ավելի հզոր են, քան իրականը. հետևաբար, կապից-կապ, օղակից-օղակ ի յայտ է գալիս չոր լրագրողական ոճ՝ շոշափելի և ոչ միթական իրականությունների միջև բախտն առաջացնելու համար: Այս տեսանկյունից «Աղամի Գիրքը» մուտք է գործում ժամանակակից ամերիկեան գրականության մեջ, որը տխուր և աննկարագրելի այց է միայնակ մարդկանց և միայնակ համայնքների»:

Խոսք հիշատակի
ԼՅՎԱՏ ԷՐ ՀՈՒՅՍ ՈՒ ՀԱՎԱՏՈՎ



Արցախի վաստակաշատ ուսուցչուհի Սուսաննա Ենգիբարյանը հրաժեշտ տվեց երկրային կյանքին...
Սուսաննա Ենգիբարյանը 25 տարուց ավել աշխատում էր Ստեփանակերտի հ. 10 միջնակարգ դպրոցում՝ որպես Հայոց պատմության ուսուցչուհի: Պատերազմի օրերին նկուղում նա բոլորին հույս և հավատ էր ներշնչում՝ ասելով, որ ամեն ինչ լավ է լինելու...
Ուժ և տոկոսություն մեր շատ սիրելի Ենգիբարյան Սուսաննայի հարազատներին ու մտերիմներին: Վստահ ենք, որ նրա հիշատակը վառ կմնա հարազատների, գործընկերների և սիրելի աշակերտների սրտերում ու հուշերում՝ որպես տաղանդավոր և անչափ աշխատասեր ու հայրենասեր մարդու, որն իր կյանքն անմնացորդ նվիրեց մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը:

Ստեփանակերտի Ալ. Իսահակյանի անվան հ. 10 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԸՆԹԵՐՆԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Զարգացնում է մտածողությունը: Գրքեր կարդալու կարևոր առավելությունն է՝ դրական ազդեցությունը մեր մտածողության վրա: Կարդալիս մենք ավելի շատ ենք մտածում, որպեսզի հասկանանք ստեղծագործության գաղափարը:
2. Նվազեցնում է սթրեսը: Ժամանակակից աշխարհում ազատվել սթրեսից՝ շատ մարդկանց հիմնական մտահոգությունն է: Հատկապես օգնում է կարդալ ինչ-որ գեղարվեստական ստեղծագործություն քննելուց առաջ:
3. Հարստացնում է բառապաշարը: Երբ դուք կարդում եք տարբեր ժանրերի գրքեր, հանդիպում եք բառերի, որոնք սովորաբար չեն օգտագործում առօրյա խոսքում: Եթե ինչ-որ բառ ձեզ անծանոթ է, բոլորովին էլ պարտադիր չէ փնտրել բառարանում, այն հասկանալի է դառնում մախադասության մեջ պարփակված իմաստից: Կարդալն օգնում է նաև գրագիտության մակարդակի բարձրացմանը:
4. Պաշտպանում է հիվանդություններից (Ալցզեյմերի հիվանդություն): Վերջին հետազոտությունների տվյալներով ապացուցվել է, որ ընթերցանությունը իսկապես պաշտպանում է ուղեղը հիվանդություններից: Երբ դուք կարդում եք, ուղեղի ակտիվությունը բարձրանում է, ինչը դրական է անդրադառնում նրա վրա:
5. Վստահություն է ներշնչում: Ընթերցանությունը ստիպում է մեզ ավելի վստահ լինել, քանի որ գիտելիքը ուժ է: Ընթերցանությունը մարդիկ կարող են միանգամից մի քանի գերազանց գաղափարներ կյանքի կոչել՝ ոգեշնչվելով գրքերից:
6. Մեզ դարձնում է ավելի ստեղծագործ: Ստեղծագործ մարդիկ կարող են միանգամից մի քանի գերազանց գաղափարներ կյանքի կոչել՝ ոգեշնչվելով գրքերից:
7. Բարելավում է թունը: Եթե դուք քննելուց առաջ պարբերաբար ընթերցեք, ապա շուտով մարմինը կսովորի դրան, եւ ընթերցանությունը կդառնա յուրատեսակ ազդանշան քննելու համար:
8. Բարելավում է ուղեղի ակտիվությունը: Երբ կարդում եք, մենք սովորաբար պատկերացնում ենք շատ մանրամասներ՝ կերպարներ, նրանց հագուստը, շրջապատող առարկաները: Նաև անհրաժեշտ է հիշել շատ բաներ, որոնք պետք են ստեղծագործությունը հասկանալու համար: Հենց այդ պատճառով էլ կարդալը մարդուն է հիշողությունը եւ տրամաբանությունը:
9. Բարելավում է կենտրոնացումը: Երբ կարդում եք, անհրաժեշտ է կենտրոնանալ ստեղծագործության բովանդակության վրա: Այս հմտությունը շատ օգտակար է ցանկացած այլ գործունեության համար: Ընթերցանությունը նաև զարգացնում է օբյեկտիվությունը և հնարավորություն է ընձեռում կայացնել հավասարակշռված որոշումներ:

**Սկսված է «ԼՈՒՍԱՐԱՐ»-ի
2022 թվականի բաժանորդագրությունը**

Պատերազմը ցավ ու վիշտ բերելուց զատ՝ նաև փոխել է մեր կյանքի բնականունը ռիթմը: Անցյալն ու ներկան հիմա մեզ նույն դեմքով են ներկայանում, իսկ ապագան մշուշոտ է: Ո՛ւր է տանում ծանփան, որ ուրիշներն են, ցավոք, բացել մեզ համար: Հիմա հարցերն ավելի շատ են, քան պատասխանները, որոնք ոչ թե պիտի ուրիշից ստանանք, այլ հենց ինքնենք զտենք: Գտնենք ու քննարկենք, վերլուծենք ու համարենք, բանավիճենք ու կիսվենք...

«ԼՈՒՍԱՐԱՐ»-ը եղել և մնում է հանրապետության բոլոր մանկավարժների վստահելի գրուցակիցը: Համախմբվե՛ք կրկին մեր սիրելի թերթի շուրջ:

Տարեկան բաժանորդագինը դարձյալ նույնն է՝ 3000 դրամ:
Սպասում ենք բոլորիդ նորանոր հանդիպումների հույսով:

ԴԱՐԻ ՄՏԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍ ԿԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարը մարդու կյանք մտավ բազմաթիվ փոփոխություններով ու նորություններով, որոնք ունեցան ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Ժամանակակից մարդու կյանքում հայտնվեցին մի շարք առարկաներ, որոնք որոշակիորեն թեթևացրին առօրյա հոգսը, բայց միևնույն ժամանակ մտահոգությունների տեղիք տվեցին: Հատկապես անմախքաբար էր հեռահաղորդակցության տեխնիկայի զարգացման առաջընթացը՝ հեռախոս, համակարգիչ, պլանշետ և այլն:

Այն ամենը, ինչ նախկինում անհասանելի էր բանական մարդուն, ընդամենը կոճակի մի սեղ-մունով հասանելի դարձավ, ինչն էլ գրավեց մարդու բանականությունը, և նա սկսեց կատարելագործել իր իսկ ձեռքով ստեղծածը:

Այսօր արդեն անհնար է պատկերացնել ժամանակակից մարդու կյանքն առանց հեռախոսի, համակարգչի, ինչը մտահոգիչ է: Անշուշտ առարկաները փոխարինելու են գալիս կենդանի հարաբերություններին՝ թթափելով մարդկային զգայարանները:

Այս առումով մտահոգությունների մասշտաբն ավելի է մեծանում հատկապես դեռահասության տարիքում գտնվող երեխաներ ունեցող ծնողների շրջանում:

Երեխայի՝ դեռ նոր ձևավորվող հոգեբանություն մուտք է գործում մի երևույթ, որն ամբողջովին իրեն է ենթարկում նրա մտածական ողջ համակարգը, կառավարում գործողությունները: Իր համար հետաքրքիր թվացող այդ գույնը աշխարհն աստիճանաբար դժգույն է դարձնում շրջակա միջավայրը, երեխային այլևս չեն հետաքրքրում կենդանի շփումները, և նա իր առօրյան պատկերացում է միայն վիրտուալ իրականության մեջ: Աստիճանաբար փոխվում են նրա բնավորությունը,

վարքի դրսևորումները, երեխան ավելի շատ ժամանակ է անցկացնում առանձնացած, նրա համար ծանծաղի են դառնում խաղն ու դասապատրաստումը:

Այո, տեղին է ծնողների մտահոգությունը, բայց նմանօրինակ իրավիճակի առաջին մեղավորը հենց ծնողն է: Մենք՝ ծնողներս, հաճախ այնքան ենք տարվում կենցաղային գործերով, որ մեզ համար ուղղակի «փրկություն» է, երբ երեխան լուռ ու առանց խանգարելու իր հեռախոսով է զբաղված. մենք հասցնում ենք մեր առօրյա հոգսերը թեթևացնել, բայց շատ հաճախ չենք գիտակցում, որ մեր այս քայլով երեխային տանում ենք դեպի կախվածության անդունդ: Մենք ինքնուրույն ենք այս իրավիճակի հիմնաքարը դնողները, բայց, ցավոք, նույն հեշտությամբ չենք կարողանում երեխային հետ վարժեցնել դարի մտահոգությունից:

Յուրաքանչյուր ծնող պետք է զգուշավոր լինի, որպեսզի երեխայի մոտ հեռախոսից, համակարգչից օգտվելը չհասնի կախվածության աստիճանի: Իսկ դրա համար անհրաժեշտ է շատ ժամանակ անցկացնել նրա հետ, զբաղեցնել տարբեր զարգացող և հետաքրքրաշարժ խաղերով, դպրոցահասակ երեխաների դեպքում նաև ընթերցանության հանդեպ սեր առաջացնելով և, իհարկե, տարբեր էլեկտրոնային սարքավորումներից ու համացանցից ճիշտ օգտվել սովորեցնելով: Այս և այլ մեթոդների կիրառմամբ վերոնշյալ երևույթը կդառնա ոչ թե մտահոգություն, այլ երեխայի առողջ զարգացմանը նպաստող կարևորագույն գործոն:

Երջանիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Առաջաձորի Ա. Պողոսյանի անվան միջն. դպրոցի ՄՎԱԳՏՏ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Գիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության 11.11.2021թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: